

Հորիզոն

2011 | ԴԵՍՏԵՄԲԵՐ | DECEMBER | DÉCEMBRE

horizon





Lara's Catering Հայկական հաստատութիւն, ուր կը գտնուի հայկական եւ միջին արեւելեան զանազան համեղ ճաշեր եւ մատչելի գիներ:

Նշանտուցներու, հարսանիքներու, մկրտութիւններու եւ տարեդարձներու համար որակաւոր ճաշեր, մատչելի գիներ եւ լաւագոյն սպասարկութիւն:

Catering for all your culinary needs... For all your special occasions!

Dikran Tourosian
(416) 846-7207

dikran_tourosian@hotmail.com
www.larascatering.com



Բացում նոր ճաշարանի - 2012 ձմեռուայ վերջաւորութեան



Lara's Catering



NOUVELLE ADRESSE
9280 L'ACADIE, MONTRÉAL, QC. H4N 3C5



Barry Kazandjian

Agent immobilier affilié



Karen Kazandjian

Agent immobilier agréé



Garo Kazandjian

Agent immobilier affilié

(514) 333-3000



RE/MAX 3000

MILLE MAISONS. UN CHEZ-SOI.

Courtier immobilier agréé



www.remax3000.com

ՄԵՐ ԽՕՍՔԸ

«Հորիզոն» ի բացառիկ յաեւուածի 10-ամեակն է այս տարի: Բացառիկի 10-րդ թիւը յախուռն է նիւթերու այլազանութեամբ: Հայերէն հատուածին մէջ, հայ ազգագրագէտի հետ կայացած հարցազրոյցը լոյս կը սփռէ հայութեան հեթանոսական եւ քրիստոնէական հաւատներու բնօրրան՝ Տերսիմ աշխարհին ու պատմութեան մասին:

Խորհային վերլուծողական յօդուածով կը ներկայացուի վերանկայացած Հայաստանի Հանրապետութեան 20-ամեայ նանապարհը, հայրենի պետութեան արձանագրած ձեռքբերումներն ու կորսնցուցած պատմական առիթները:

Արցախի առօրեայ հոգերուն կ'անդրադառնան ազատագրուած տարածքներու վերաբնակեցման մասին յօդուածն ու Արցախի երիտասարդութեան գործազրկութեան մասին անդրադարձը:

Հայ ռազմական մասնագէտին հետ կայացած հարցազրոյցով, յաւելեալ մանրամասնութիւններ կը

փոխանցուին ընթերցողին հայկական ռազմութի, ինչպէս նաեւ տարածաշրջանային ռազմական նոր գարգացումներուն մասին:

Հայրենիքի նոր սերունդի հաւատքը խաթարող կրօնական աղանդաւորական շարժումներու մասին յօդուածով կը բացատրուի այդ խմբաւորումներու բացասական ներկայութիւնը մեր ազգային կեանքին մէջ:

Անգլերէն հատուածով յատուկ յօդուածով կը ներկայացուի «Ձէյթուն» ի Աւետարանի ողիսականը: Յատուկ գրախօսականով կը ներկայացուի Արցախեան գոյամարտի ընթացքին իսլամական ծայրայեղական զինեալ խմբաւորումներու գործունէութեան մասին անդրադարձող գիրքը:

Այլ յօդուածներ կ'անդրադառնան հայրենի արուեստի բնագաւառի մասին:

«ՀՈՐԻԶՈՆ»

ԲԱՑԱՌԻԿԻ ԱՅՍ ԹԻՒՈՎ

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՔՍԱՆԱՄԵԱԿԸ ԵՒ ԱՆԿԷ ԵՏՔ, էջ 4
Խ. ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Տերսիմը՝ ազգագրագէտ Հրանոյշ Խառատեանի հայեացքով, էջ 14
Նայիրի Մկրտիչեան-Տաղեան

Արցախի վերաբնակեցումը մեր բոլորի սրբազան առաքելութիւնն է, էջ 28
ԲԵԼԼԱ ԼԱԼԱՅԵԱՆ

Գործազրկութիւնը խոչընդոտ արցախցի երիտասարդութեան բարեկեցութեան համար, էջ 39
ԼՈՒՍԻՆԷ ՄՈՒՍԱՅԷԼԵԱՆ

Անկախութեան հետ Հայաստան ներխուժած վտանգներէն՝ աղանդաւորականութիւնը, էջ 42
Նայիրի Մկրտիչեան-Տաղեան

Հարցազրոյց ռազմական մասնագէտ Արծրուն Յովհաննիսեանի հետ, էջ 47
ՎԱՀԱԳՆ ԳԱՐԱԳՎԱՇԵԱՆ

Քսան տարի անց... Տաս տարի ետք..., էջ 51
Նայիրի Մկրտիչեան-Տաղեան

Հարցազրոյց ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Րաֆֆի Տօնապետեանի հետ, էջ 54

Հայեցի դաստիարակութիւնը՝ հիմք ազգային ռազմավարութեան, էջ 58
ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

Հայաստան՝ արքայական խաղի գերտէրութիւն, էջ 62
Նայիրի Մկրտիչեան-Տաղեան

Դրամատուներու դրամաբաշխ սարքի (ATM) գիւտարարը՝ Լուսեր ձորն Սիմեոնն է, էջ 66
Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՔԱՇԻԿԱՅ ՀԱՐԻՍԱՅ, էջ 78
ՍՈՆԻԱ ԹԱՇՃԵԱՆ

Armenia's Very First Case of Cultural Patrimony: The Fate of the Zeyt'un Gospel in the case against the J. Paul Getty, page 84
Vana Nazarian

The Boundaries of True independence, page 98
Tatul Sonentz-Papazian

Book Review: Mercenaries, Extremists, and Islamist Fighters in Karabagh War, page 100
Hovhannes Nikoghosyan

A Day Filled with... MORE!!!, page 104
Tamar Kabassakalian-Gosdanian

Canadian Armenian Jazz Musician Continues to Hit the Right Notes, page 108
Tina Soulahian

Pourquoi l'Arménie?, page 112
Tamar Kabassakalian-Gosdanian

Gomk, page 117
Tamar Sarkissian

ԿՈՂՔԻ ԼՈՒՍՆԿԱՐԸ՝ ԷԴԳԱՐ ՄԱՐՈՒՔԵԱՆԻ

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՔՍԱՆԱՄԵԱԿԸ ԵՒ ԱՆԿԷ ԵՏՔ

Ազգային հասարական ասպագայի քաղաքական ու տնտեսական պայմանաւորումները

Քսանամեայ ամբողջ սերունդ մը կայ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ, սերունդ՝ որուն համար անկախութիւնը իրողութիւն է: Ոչ թէ գաղափարախօսութիւն, յուզումներու տեղի տուող իտէպ կամ քմծիծաղ առաջացնող ցնորք, ինչպէս զայն ընկալեց ու ապրեցաւ քսաներորդ դարու հայութիւնը իր տարբեր հատուածներով: Անկախութիւնը իր առօրեան է, որ կրնայ նկարագրել շատ բնականօրէն առանց «նենթ»ը վէպի հեղինակին հզօր երեւակայութեան ու վիպասանի շնորհքին անհրաժեշտութիւնը զգալու: Եւ որպէս իրողութիւն, ոչ թէ լինելութիւն, անկախութեան սերունդը կրնայ անոր էութեան մասին ամէն իմաստասիրական հարցադրումները, որոնք անցնող սերունդներուն համար երբեմն մինչեւ իսկ ըլլալու կամ չըլլալու կրքոտ խնդիր կ'առաջացնէին, մոռացութեան տալ: Այնպէս ինչպէս, Հայտեկերի հետեւումով, կեանքի ընթացքին էութեան հարցը մոռացութեան կը տրուի առանց մասնաւորաբար մտահոգելու մարդոց:

Անկախութեան իրողութեան գիտակցութիւնը, անշուշտ, անպայմանօրէն անոր իրագործման արժէքային գիտակցութիւնը չ'ենթադրեր: Թէ որքանո՞վ արցախեան հերոսամարտը, հայրենի հայութեան զրկանքներն ու զոհաբերումը, անկախութեան գործընթացի կերտիչներուն խիզախութիւնը եւ, տակաւին, սփիւռքեան ամբողջ հատուածներու տասնամեակներու սպասումը անկախութեան սերունդի ինքնագիտակցութեան մաս կը կազմեն, որքանո՞վ այդ սերունդը սեւակեան «Դուք ձեզ ճանաչէ՞ք»ին նոր իմաստ տուած է՝ քննարկման առանձին նիւթ է:

Բայց անկախութիւնը որպէս արժէք այսօր հարցականի տակ չի դրուիր եւ չկայ ազգային հաւաքական գոյութեան այլընտրանք, այնպէս ինչպէս, գոնէ հայութեան մէկ հատուածին համար, 1920-ական թուականներու սկզբնաւորութեան եւ անոր յաջորդող եօթնամասուն տարիներուն, խորհրդային վարչակարգը որպէս վերապրումի եւ խաղաղ զարգացման պայմանաւորում ընդունուեցաւ: Եթէ 1991-1994 պատերազմի ամենամուժ տարիներուն հայրենի հասարակութեան մէջ տակաւին կային անոնք, որոնք երբեմն, եւ հասկնալիօրէն, խորհրդային վարչակարգի վերջին երկու տասնամեակը կարօտով կը յիշէին, այսօր նոյնիսկ ամենահամոզուած համայնավարները հազիւ թէ այդ պատմական փորձառութեան ճախողութեան փաստը անտեսեն ու անոր վերադարձին վրայ գրաւ դնեն: Թէ նոր սերունդը շատ բնականօրէն կը հասկնայ, որ անկախութիւնը ազգերու բնական իրաւունքն է եւ այն ուղին, որ իւրաքանչիւր ազգային հաւաքականութեան դէպի զարգացում կը տանի, այս արդէն անկախութեան մեծագոյն ձեռքբերումն է: Անկախութեան կորուստով գերիշխանութիւն զիջելի ի խնդիր համամարդկային ինչ որ ծրագրի, որ իբրեւ թէ, կրնայ լաւագոյնս երաշխաւորել հայութեան ասպնոցութիւնն ու բարգաւաճումը, ո՛չ իրապաշտ է, ո՛չ ալ

թէկուզ թաքուն բաղձանք, որովհետեւ նման հեռանկար չկայ միջազգային քաղաքականութեան ոլորտին մէջ:

Անկախութիւնը որպէս իրագործում արդէն կայացած գիտակցութիւնն էր, որ արտացոլաց Սեպտեմբեր 19-21, 2011-ին, Երեւանի մէջ շքեղօրէն կազմակերպուած քսանամեակի հանդիսութիւններուն ընդմէջէն: «Հոգեկանութեան» եւ «ոգեղէնականութեան» քիչ մը շատ կարեւորութիւն տուող մեր ազգային մտածողութեան համար այս հարցադրման դրական պատասխանը կասկածի տակ չ'առնուիր: Բայց որքան ալ անկեղծօրէն հոգեպարար ըլլայ այն յուզումը ամէն հայրերի, որ մասնակից կամ ակնատես եղաւ քսանամեակի հանդիսութեան, հազիւ թէ լուրջ բանաձեւումներ թելադրէ անկախութեան իրագործման եւ, մանաւանդ, հայութեան հաւաքական ասպագայի առնչութեամբ անոր հեռանկարներուն մասին: Երբ անկախութիւնը լինելութիւն էր տակաւին, հայութեան հաւաքական ասպագայի հասկացողութիւն մը քաղաքականօրէն շատ ալ իմաստ չունէր. կարելի չէր հաշտեցնել անոնց որոնք ազգային ճակատագիրը կը կապէին խորհրդային իրականութեան հետ համահունչ համարող գաղափարական կեցուածքը, կամ այդ «իմաստութիւն»ը պաշտպանողները եւ անոնք, որոնք չէին կրնար ընդունիլ խորհրդային վարչակարգի իրողութեան յաւերժացման գաղափարը: Պաղ պատերազմի երկբեւեռային տրամաբանութիւնը իր կարգին խոր ու ողբերգական անդրադարձ ունեցաւ ներհայկական իրականութեան վրայ, ի մասնաւորի Սփիւռքի մէջ, ինչ որ չափով աղաւաղելով սկզբունքային կերպով հիմնականօրէն ներազգային այս տարակարծութիւնը՝ այն օրին տիրապետող «Ազատ Աշխարհ»ի թէ «Ռէյալ Սոցիալիզմ»ի մեծապետական գաղափարախօսութիւններու հետեւումով մեկնաբանելով: Նոյնիսկ Մեծ Եղեռնի յիսունամեակին յաջորդած միասնականութիւնն ու Խորհրդային Հայաստանի ու Սփիւռքի ընդհանրապէս Հ. Յ. Դաշնակցութեան յարող հայութեան հատուածի միջեւ ձեւաւորուած յաջորդ երկու տասնամեակներուն ազգային ճակատագրի շուրջ այս տարրական տարակարծութիւնը չվերացուց, չէր կրնար վերացնել:

Թէ որքանո՞վ միջազգային քաղաքական գործընթացն է պատասխանատուն Հայաստանի անկախացման ու որքանո՞վ հայութիւնը, ի մասնաւորի հայրենի ժողովուրդը, ինքնախանձախնդիր եղաւ իր ճակատագրի կերտման մէջ, այսօր անիմաստ բանավէճ մըն է գուտ հասարակագիտական հետաքրքրութիւններու շրջանակէն դուրս: Անկախութիւնը այսօր հաւաքական ճակատագիր մը օրակարգի հարց դարձուցած է: Թէ ինչպէ՞ս կը կերտուի այդ մէկը օրը օրին ու միջին թէ հեռակայ ծրագրումներով, հայութեան ինչ տոկոսի մասնակցութեամբ, ո՞ր մեքանիզմներով, հատուածական շահերու ինչ բնոյթի բախումներով՝ ահաւաստիկ ասոնք են այսօրուայ հրատապ հարցերը հրապարակային բանավէճի դնելու համար:

Սիւս Էջը կը հովանաւորեն Ս. Եւ Ս. Սիրո Եւ Մանթո Գալասախախախա



ANI BAKERY LTD

ԱՆԻ ՓՌԱՊԱՆ

Middle Eastern Pizza Lahmajoun

Սեփականատեր՝ Արսեն Տապապաղեան

Ուր կը գտնէք հայկական եւ արաբական լահմաճունի տեսակներ՝ փոքր եւ բնական չափերով: Լահմաճունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն՝, միսը իրենցմէ կամ մեզմէ: Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց: Միշտ պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տխուր առիթներով

**Փորձեցէք եւ
գոհ պիտի մնաք**



Հասցե՝ 112 Crockford blv. unit 2 Scarborough, Ontario M1R 3C3
հեռաձայն՝ 416-285-7164 հեռապատճեն՝ 416-756-3802

Բաց ենք շաբաթը վեց օր, Կիրակի մինչեւ կեսօրէ ետք՝ ժամը 2:00
(Երկուշաբթի փակ)

Այս իսկ պատճառով, անկեղծ յուզումի ալիքէն յետոյ, երբ, շատ արագընթաց, հայրենի քաղաքական, տնտեսական ու ընկերային առօրեան վերադարձաւ իր բնական հունին անմիջապէս որ Սփիւռքի պատուիրակներն ու հիւրերը մեկնեցան դէպի իրենց համայնքները, անկախութեան քսանամեակը հարկ է մտածել քաղաքական իրականութեան ներկայ ոլորտին մէջ եւ անկէ մեկնած պատրաստուիլ ազգի հաւաքական ապագայի հեռանկարներու մարտահրաւէրին:

Այսպէս, քսանամեակի նշումի շքեղութիւնը բնականաբար ունէր նախ եւ առաջ իր քաղաքական դրդապատճառները եւ արտաքին, եւ ներազգային իմաստով: Այս առաջին կէտն է որ անհրաժեշտ է հասկնալ՝ քսանամեակը իր բանականութեան մէջ տեղադրելու համար: Ապա կայ երկրի տնտեսական իրականութիւնը, որ իր կարգին անհրաժեշտ է դիտել համաշխարհային շարունակուող ճգնաժամի տեսանկիւնէն անդրադառնալու համար անոր ծանրակշռութեան ու միջին հասոցութեան հետեւանքներուն: Այս երկու ոլորտներն են որ յաջորդ քանի մը տարիներուն պիտի պայմանաւորեն ազգի հաւաքական ապագայի հեռանկարը:

Առանց այս բոլորին մասին փաստացի տուեալներու մէջընթացումով ամբողջական վերլուծումի հաւանութիւնը ունենալու, ներկայ գրութիւնը լուսարձակի տակ պիտի առնէ այս երեք հարթութիւններու վրայ քսանամեայ ազատ ու անկախ Հայաստանի որոշ երեւոյթներ եւ անոնց հիման վրայ ներկայացնէ խորհրդածութիւններ՝ հասարակական բանավէճի կարգով:

Քսանամեակի հանդիսութեանց ամենատպաւորիչ երեւոյթներէն մէկը անկասկած Զինուած ուժերու զօրահանդէսն էր: Տպաւորիչ, բայց մանաւանդ կարեւոր իր պատգամին համար: Յունիս 26-ին Ատրպէյճան արդէն ցուցադրած էր իր ռազմական հզօրութիւնն ու ռազմատենչութիւնը: Այդ օր, երկրի տիրոջ՝ նախագահ Ալիեւի ընդառաջ տողանցած էին 6000 բանակայիններ, 400 զինուորական մեքենաներ, 22 ռազմական օդանաւեր, շատ աւելի մեծ թիւով ուղղաթիւներ, ցուցադրուած էին երկրին մէջ արտադրուող 60 զինատեսակներ: Ի տես այս բոլորին, Ալիեւ իր խօսքին մէջ յայտարարած էր թէ ատրպէյճանական բանակը այսօր պատրաստ է զինուորական որեւէ գործողութեան ընդհուպ մինչեւ «երկրի տարածքային ամբողջականութիւնը վերականգնելու» եւ որպէս փաստ բաղդատած երկրի պաշտպանութեան պիւտճէն՝ 3,2 միլիար, որ կրկնապատիկն է Հայաստանի պետական ամբողջ պիւտճէին: Սեպտեմբեր 21-ին, Հայաստանի մէջ զինուորական տողանցքը հինգերորդն էր անկախութենէն ի վեր: Բաղդատած Ատրպէյճանի զինուորական ցուցադրութեան, Հայաստանի ռազմուժը քանակական իմաստով նուազ էր: Նշենք, օրինակի համար, Հանրապետութեան հրապարակին վրայ տողանցեցին չորս հազար բանակայիններ ի դէմս Ատրպէյճանի վեց հազարին: Սակայն առաջին անգամ ըլլալով Հայաստան ցուցադրեց նաեւ իր յարձակողական զէնքերն ու անոնց որակը, ի մասնաւորի միջին հասոցութեան հրթիռները: Պատգամը յստակ է. դէմ յանդիման Ատրպէյճանի սպառնալիքներուն, Հայաստան կարող է որեւէ լուրջ յառաջխաղացքի համար շատ սուղ գին վճարել տալ եւ Ատրպէյճանին, եւ անոր քսակը լեցնողներուն, որոնք գինովցած կասպեան նաւթով՝ կ'անտեսեն Պաքուի կողմէ միջազգային ամէն պայմանագրի խախտումները: Խորքին մէջ, Հայաստանի Զինուած ուժերու յարձակողական կարողականութիւնը պատերազմի զսպիչ ամենէն կարեւոր ազդակն է: Առանց անոր



պաշտպանական ռազմավարութիւնը շատ ալ նշանակուածիւն չունի դէմ յանդիման Ատրպէյճանի զինուժի քանակական եւ թերեւս նաեւ որակական առաւելութեան: Քսանամեակի տողանցքը, հետեւաբար, պատասխան-պատգամ մըն էր ուղղուած թշնամիին եւ համայն աշխարհին՝ ցոյց տալու համար, որ Հայաստան ոչ միայն տեղի չի տար Ատրպէյճանի սպառնալիքներուն, այլ նաեւ պատրաստ է պատերազմի պարագային տարածաշրջանային անկայունութիւնը անկանխատեսելի մակարդակի հասցնելու իր ունեցած ռազմական միջոցներով:

Նկատի ունենալով ուժերու այս սուր անհաւասարակշռութիւնը, շատ հաւանական է, որ պատերազմական լայնածաւալ գործողութիւններու վերակսման հետեւանքով ստեղծուելիք տարածաշրջանային անանխատեսելի հետեւանքներով յղի քառսը ըլլայ հիմնական պատճառը, որ եւ հակադիր երկու կողմերը, եւ համաշխարհային դերակատարները մղէ բուլտին համար ծանրակշիռ այդ հեռանկարի իրականացման առաջը առնելու քայլերուն: Բայց դիւանագիտական գործընթացները որքան ալ որ բանական ըլլան, միշտ չէ որ պատերազմներուն առաջը կրնան առնել: Աւելի'ն, եթէ քսաներորդ դարը Առաջին Աշխարհամարտէն մինչեւ 1962-ին Քուպայի մէջ խորհրդային կորիզային հրթիռներու զետեղման փորձը դաս մը ունի տալիք՝ այն ալ մարդկային բանականութեան հարիւր տոկոսով չվստահելու թելադրանքն է: Հետեւաբար, Հարաւային Կովկասի մէջ այս լարուածութիւնը պիտի շարունակուի մինչեւ հոն, ուր կարելի է առայժմ կանխատեսութիւններ ընել քանի մը վտանգաւոր թուականներու հաշուարկումով:

Անոնցմէ ամենէն կարեւորը Ատրպէյճանի նաւթի արտադրութեան ճգնաժամ եկամուտներու նուազումն է ի հետեւանք պաշարներու պակասեցման, հաւանաբար երկու տարի ետք: Ինչ որ կը նշանակէ, որ յաջորդ երկու-երեք տարիները, եւ ո՞վ կրնայ անտեսել, որ Յեղասպանութեան հարիւրամեակի խորհրդանշական սեմին են անոնք, Հայաստան-Ատրպէյճան լարուածութիւնը պիտի աւելնայ եւ ոչ թէ պակսի: Եթէ նաւթի եկամուտները պատճառ են, որ առայժմ Պաքու լայն յարձակողականի չանցնի, անոնց նուազումը կրնայ առաջնորդել այդ քայլին: Պատահական չէ, որ դէմ յանդիման Հայաստանի արտաքին քաղաքականութեան փրոթոքոլային լճացման Ատրպէյճան կարողացաւ ոչ միայն ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին մէջ յաջորդ երկու տարուան համար իր անդամակցութիւնը ապահովել, այլ՝ անցնող տարուան ընթացքին

Սիւսի Էօր կը հովանաւորէ Melbourne-ի «Գոյամարտ»ի Չայնը



Մարտ 1, 2008


հետեւողական ու բարձր մասնագիտական ճիգերով յաջողեցաւ արդէն ամուր հիմերու վրայ դնել Հարաւային Ամերիկայի տարածաշրջանին մէջ համագործակցութեան ծրագիրներու, քաղաքական դաշնակիցներու, գիտաշխատողներու, բարեկամական ընկերակցութիւններու ամբողջ ցանց մը, որուն բացայայտ նպատակն է արցախեան հարցի մէջ ցարդ չէզոքութիւն պահած եւ ընդհանրապէս հայանպաստ դիրք ունեցող Արժանթինի, Պրագիի, Չիլիի, Ուրուկուէյի, Վենեզուելայի, Գոլոմպիայի, Մեքսիքոյի եւ այլոց դիրքերը ՄԱԿ-ի ոլորտին մէջ փոխելու ի նպաստ Ատրպէյճանի: Հայաստան որ ե՛լ հայ համայնքներու ներկայութեան, ե՛լ դեռեւս անկախութեան յայտարարութեան առաջին տարիէն բացարձակ առաւելութիւն ունէր Ատրպէյճանի վրայ, փաստօրէն այսօր արդէն դիւանագիտականօրէն առնուազն նուազ նպաստաւոր դիրքերու վրայ է, եւ եթէ քսանամեայ անցեալ ունեցող այս լծացման առաջը չառնուի, ապագայ պատմաբանին պիտի մնայ բացատրել, թէ ինչպէ՛ս Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը կրնար այնքան անհեռատես ու անփոյթ ըլլալ, որ բացարձակ առաւելութեան դիրքէն ամբողջ քսանամեակի մը ընթացքին չյաջողէր արժեւորել միջազգային բեմին վրայ քսանմէկերորդ դարուն իրենք իրենց հաստատող այս երկիրներուն ռազմավարական կարեւորութիւնը եւ անոնց հետ ամրագրել քաղաքական դաշինքներ...

Հարաւային Ամերիկայի մէջ հայկական դիւանագիտութեան տեղատուութիւնը օրինակի կարգով ամենէն ցայտուն երեւոյթն է վերջին տարուան ընթացքին: Անոր մասին յատուկ անդրադառնալու դրդապատճառներէն հիմնականը արդէն ծանօթ է, սակայն երբեք Երեւանի կողմէ լրջօրէն նկատի չէ առնուած: Այն տարիներուն, երբ Երեւանի արտաքին քաղաքականութեան հիմնական, եթէ ոչ միակ, առանցքը կը կազմէր Թուրքիոյ հետ յարաբերութիւններու բնականոնացումը, որով եւ նախագահ Սարգսեան գրաւը կը դնէր ոչ միայն Թուրքիոյ հետ սահմանի վերաբացումին այլ շատ հաւանաբար կը յուսար նաեւ Անգարա-Պաքո դաշինքը առնուազն թուլացնել, Կիւլ-էրտողան-Տաւութօղլու երբեակը Հայաստանի հետ սկսած փրոթոքոյներու գործընթացին բոլորովին այլ ուղղութիւն տուին: Դեռեւս յայտնի չէ, թէ Հայաստան ի՛նչ շահեցաւ այդ գործընթացէն, բայց մինչ հայաշխարհը կը դիմագրաւէր ներքին խռովայոյզ հանգրուան մը

փրոթոքոյներու թեր եւ դէմ բանավէճի հրահրումով, թուրք-ազերիական դիւանագիտութիւնը ռազմավարական նոր յառաջընթաց մը կը ծրագրէր ու կ'իրականացնէր աշխարհի այն տարածաշրջանը, ուր մինչ այդ Երեւան բացարձակ առաւելութիւն ունէր: Սակայն ի տարբերութիւն հայկական դիւանագիտութեան, որու օրակարգին վրայ կարծես հիմնական մէկ օրակարգ կար՝ ապահովել տարածաշրջանի հայ համայնքներու դրամագլուխի ներդրումը Հայաստանի տնտեսութեան մէջ, թուրք-ազերիական դիւանագիտական արշաւը շատ աւելի հեռանկարային իղձերով կը յատկանշուէր ի սկզբանէ: Սխալ պէտք չէ հասկնալ. արհամարհելի ոչինչ կայ տարածաշրջանէն դրամագլուխ ներդրումներուն ձգտելու, ի մասնաւորի երբ այնքան ակնբախ է, օրինակի համար, էտուարտօ Էօրնէքեանի նման գործատէրերու ներդրումը Հայաստանի տնտեսութեան արդիականացման համար, կամ այն աշխատանքը, որ առաջ կը տանի Հայաստան Համահայկական Հիմնադրամը Հարաւային Ամերիկայի հայկական գաղութներուն մօտ: Հասկնալի է նաեւ Ատրպէյճանի հիմնական առաւելութիւնը, որ նաւթի եկամուտն է, Կասպեան նաւթատուարները, որոնցմով կը ձգտի դուրս բանալ: Բայց «փող ունին» բացատրութիւնը չի կրնար արդարացում ըլլալ, երբ Հայաստանի դիւանագիտութիւնը ունի կառուցային թերութիւն մը, որ յստակօրէն նախագահ Սարգսեանի կառավարութեան օրով չէ որ յանկարծ յայտնուեցաւ: Այդ կառուցային թերութիւնը երեւան կ'ելլէ երբ անդրադառնանք, որ անցնող քսանամեակին Ատրպէյճան լաւապէս հասկցաւ դիւանագէտներ պատրաստելու անհրաժեշտութիւնը եւ աշխատանք տարաւ այդ ուղղութեամբ անհրաժեշտ ներդրումը կատարեց անկախութեան սերունդի նոր դիւանագէտներու պատրաստութեան համար, մինչ նման ճիգ, նման մտահոգութիւն նկատելի չէ Հայաստանի պարագային, առնուազն երբ կը բարդատենք երկու երկիրներու քաղաքականութիւնը Հարաւային Ամերիկայի ուղղութեամբ:

Թերեւս ճիշդ չէ Հայաստանի արտաքին քաղաքականութեան համապարփակ գնահատանք տալ այսքան կեղրոնանալով օրակարգի մէկ կէտի վրայ, սակայն քսանամեակի առիթով այս խորհրդածութիւնները Հայաստանի արտաքին քաղաքականութեան մասին չեն միայն, այլ՝ այդ քաղաքականութեան թերիններու անդրադարձին հայութեան ապագայի հեռանկարին վրայ: Այս իմաստով, անցնող տարուան ընթացքին մասնաւորաբար Հարաւային Ամերիկայի ուղղութեամբ արձանագրուած բացթողումներու բացայայտումն ու անոնց հետեւանքներու զգուշացման հրաւերը կ'արդարանայ հետեւեալ պատճառով. ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին մէջ յաջող երկու տարիներուն ձայն ունեցող Ատրպէյճանը, պարզ է, ամէն ճիգ ի գործ պիտի դնէ արցախեան հիմնախնդիրն ու անկէ բխած տարբեր թղթածրարներ, որ պատրաստած է անցնող տարիներուն - անոնց կարգին Խոջալուն որպէս «ցեղասպանութիւն» ներկայացնելու համաշխարհային արշաւը- դուրս բերելու Միների խմբակի ոլորտէն եւ արծարծելու ՄԱԿ-ի շրջանակներուն մէջ, եւ, հետեւաբար, արդէն գործի անցած է անհրաժեշտ քուէներու ապահովման ուղղութեամբ: Նման բացայայտ կացութեան դէմ յանդիման պարզապէս մտահոգիչ է Հայաստանի Արտաքին գործոց նախարարութեան այն յայտարարութիւնը, որ պարզապէս կը նսեմացնէ ատրպէյճանական դիւանագիտութեան համաշխարհային հասողութիւնը, փոխանակ անցնող երեք տարիներու իր ընթացքը ինքնաքննադատական քննարկումի ենթարկելու եւ

Այս էջը կը հովանաւորէ Կոմիտասի Կայ կերտումի Մարտիկներու միութիւնը



KOHAR

All Time Armenian Favorites

CHAYASA AD11-18B

ԳՈՀԱՐ-ի հանդիսատեսը կը ծածանէ Կիլիկիոյ Թագաւորութեան դրօշները

The audience of KOHAR waving the flags of the Kingdom of Cilicia



Մարտ 1, 2008

անհրաժեշտ փոփոխությունները կատարելու, խիստ մտահոգիչ է: Առանց Հայաստանի արտաքին քաղաքականությունն ուղղափարական ուղղումով վերատեսուցման՝ արցախեան ազատամարտի ձեռքբերումները քաղաքական կայացումը ոչ միայն պիտի չիրականանայ, այլ եկող երկու տարիներուն, քսանամեակ մը առաջ արձանագրուած յաղթանակները կրնան դիւանագիտական թակարդներու մէջ իյնալ եւ ձեռքէ երթալ:

Անկախութեան քսանամեակը իր կարեւորությունը ունէր նաեւ ներազգային քաղաքականութեան իմաստով: 2012-ին Ազգային ժողովի ընտրություններն են եւ սխալ չէ մտածել որ անոնց արդիւնքը թելադրելի շատ բան պիտի ունենայ Հայաստանի մէջ քաղաքական ուժերու դասաւորման իմաստով: Ազգային ժողովի ընտրություններու արդիւնքը, առաւել, կրնայ պայմանաւորել յաջորդ տարուան նախագահական ընտրությունները, այն իմաստով, որ եթէ իշխող Հայաստանի Հանրապետական կուսակցությունը չյաջողի պահել խորհրդարանական իր բացարձակ մեծամասնությունը, ոչ միայն դժուար պիտի ըլլայ շարունակել կողմնակից ճամբով երկրի կառավարման բնորոշը, որ կը կիրարկուի 2003-էն ի վեր, այլ իր թեկնածուին՝ նախագահ Սերժ Սարգսեանի վերընտրությունը կասկածի տակ կրնայ դրուիլ: Ծիշդ է, որ այն ինչ այսօր կողմնակից կը կոչուի, արդէն կորսնցուցած է ազգային միասնականություն կառավարութեան այն իմաստը, որ նախագահ Քոչարեան ուզած էր տալ անոր, երբ այդ նախաձեռնությունը դիմած էր 2003-ին: Կողմնակից կառավարումը, դասական հասկացողութեամբ, ազգային համաձայնական կառավարություն չեղաւ: Իրարու մօտ չեկան իշխանությունն ու ընդդիմությունը դէմ յանդիման կառավարություն կազմելու անհնարին կացութեան մը, կամ ազգային ճգնաժամի մը դիմադրաման, ինչպէս ազգային համաձայնություն կառավարություններու պարագան է ընդհանրապէս: Աւելի՛ն, կողմնակից կառավարումը կարծես Հայաստանեան յատուկ փորձառություն մը եղաւ, որ վերջին հաշուով, ժխտական անդրադարձ ունեցաւ ժողովրդավարութեան որակին վրայ, թոյլ չտալով խորհրդարանական առողջ ընդդիմություն մը ձեւաւորումը: Տակաւի՛ն, այդ փորձառութեան յարաբերաբար ամենադրական ժամանակաշրջանը կարծես եղան առաջին չորս տարիները, երբ իրականացան սահմանադրական որոշ բարեփոխումներ:

Բայց կարծես Հայաստանի նախագահական քաղաքական համակարգին համար կողմնակից կառավարումը պայմանաւորուած էր Ռոպերթ Քոչարեանի նման անկուսակցական պետական մարդու մը ղեկավարումով, որ կարելի դարձնէ միեւնոյն կառավարութեան մէջ մէկտեղուած գաղափարախօսականօրէն իրարու հետ մրցակից քաղաքական ուժերու եւ կուսակցություններու միջեւ հաւասարակշռութեան խաղը: Այդ հաւասարակշռութեան խաղն է, որ, ի դէպ, թոյլ տուաւ վերոնշեալ սահմանադրական բարեկարգումները որոնք հիմնականին մէջ կը ձգտէին օրէնսդիր իշխանութեան դերի յաւելման եւ գործադիր իշխանութեան, նախագահի՛ն աւելի ճիշդ, ունեցած սահմանադրական իրաւասութիւններու նուազեցման: Առանց անտեսելու նաեւ Քաղաքացիութեան օրէնքի փոփոխութեան իրողությունը, հակառակ բոլոր այն դժուարություններուն, որ Հ. Յ. Դաշնակցությունն առաջադրած այդ նախաձեռնությունը դիմադրաւեց՝ բախելով յատկապէս խորհրդարանական մեծամասնությունն ունեցող Հանրապետականներու դժկամութեան:

Մարտ 1, 2008-ի դէպքերէն ետք, ընտրեալ նախագահ Սերժ Սարգսեանի նախաձեռնութեամբ կողմնակից կառավարման ոճին շարունակականությունը կը բացատրուի միայն յաջորդ քանի մը ամիսներուն ե՛ւ ներազգային, ե՛ւ միջազգային ոլորտներու մէջ իր տկար դերքի կացութեան փոփոխությունն նախանձախնդրութեամբ: Մէկ տարի առաջ խորհրդարանական ընտրություններուն Ազգային ժողովին մէջ բացարձակ մեծամասնություն ապահոված Հայաստանի Հանրապետական կուսակցությունը կրնար առանձին կառավարություն կազմել: Ընտրեալ նախագահին համար ռիսքը, սակայն, փողոցին մէջ արդէն ինքզինք կազմաւորող ծայրայեղական ընդդիմություն կողքին նաեւ խորհրդարանական ընդդիմություն մը ունենալն էր, ինչ որ աւելի պիտի դժուարացնէր կառավարումը:

Թէ՛ միւս կուսակցությունները ինչո՛ւ ընդունեցին կողմնակիցին մահաձեռք կեանքը արհեստական միջոցներով երկարաձգել՝ առանձին հարց է: Կը մնայ, որ Ազգային ժողովէն ներս բացարձակ մեծամասնություն ունեցող նախագահի մը համար կողմնակիցներն են սահմանաւորութիւն պահելու նախանձախնդրությունը երկրորդական էր: Աւելի՛ն, «Ֆութպոլային դիւանագիտութեան» նախաձեռնությունը, որ կ'ենթադրէր կողմնակիցին առնուազն մէկ անդամի հետ ստորագրուած համաձայնութեան խախտումը, կը մեկնաբանուի նաեւ, եթէ ոչ մասնաւորաբար, նախագահին կողմէ արտաքին ճակատէն եկած ճնշումներու թեթեւացումը նպատակադրող քայլ, որ կրնար տալ միայն եթէ ունենար այն վստահությունը, որ ներքաղաքական իմաստով անոր առաջացնելիք նախատեսելի ընդդիմությունը կառավարման անկայունութեան տեղի պիտի չտար: Պարզ է, որ փրոթոքոյներուն բարձրացուցած ներազգային ընդդիմությունը սահմանադրական կարգերէն անդին կ'երթար, որովհետեւ ինքիւր ինքնին չէր կրնար սահմանափակուիլ սահմանադրական կարգերու իրաւասութեան ոլորտին մէջ: Այս մասին պատմությունը արդէն անհրաժեշտ վկայութիւնը տուաւ 2008-2010 խռովայոյց տարիներու իրադարձություններուն ընդմէջէն: Հիմնականը հոս ընդդիմութիւն է որ կողմնակից կառավարման փորձառությունը արդէն անանկացած է եւ երեւան հանած իր այլեւ շատոնց բովանդակազուրկ ըլլալը:

Այս կը նշանակէ որ գալ տարուան խորհրդարանական ընտրություններէն եւ անոնցմէ յետոյ նախագահական ընտ-

Սիսուէ կը հոսմանաւորեն Վարանք եւ Վանք Միւսիքեան



Արտագաղթ...

րուծվածներէն յետոյ Հայաստանի մէջ կառավարման ոճի նոր հանգրուան մը պիտի սկսի: Առայժմ այդ հանգրուանը կարելի է որակել որպէս յետ-կոալիցիոն հանգրուան սպասելով անոր իրողական ձեւաւորման: Ընտրութիւնները թոյլ պիտի տա՞ն խորհրդարանական ազդեցիկ ընդդիմութեան մը առաջացման, ահա ա՛յս է հիմնական խնդիրը:

Ամէն պարագայի, 2012-ի խորհրդարանական ընտրութիւնները կարեւոր են նաեւ որպէս ցուցանիչ քաղաքացիական գորաշարժին առողջութեան, որովհետեւ խորքին մէջ Հայաստանեան իրականութիւնը այսօր հրամայական կը դարձնէ իշխանութիւն-ընդդիմութիւն ժողովրդավարական տինամիքէն անդին անցնող՝ համակարգային փոփոխութիւններու անհրաժեշտութիւնը:

Անկախութեան քսանամեակի հանդիսութեանց շքեղութիւնը եւ ստեղծած յուզումը, սակայն, չեն կրնար թաքցնել ազգային ապագայի հեռանկարը մթազնոյղ ամենամեծ սպառնալիքը՝ երկրի դատարկումը որպէս հետեւանք հարստութեան կեդրոնացման առաջացուցած ընկերային բեւեռացման: Յատկանշական է որ այս մասին յստակ ու բարձր միայն երկու ձայն բարձրացաւ Հայաստան-Սփիւռք համաժողովին. անոնցմէ մէկն էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս

Արամ Ա., իսկ միւսը՝ Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան: Եղան, անշուշտ, ակնարկներ երկրի տնտեսական ու քաղաքական համակարգի փտածութեան մասին, անոր վերացման անհրաժեշտութեան մասին խօսուեցաւ, բայց գիտենք, որ ազատ-չուկայական համակարգին մէջ երբ անհրաժեշտ է բացատրել, թէ ինչ՞նչ անհատական նախաձեռնութեան ստեղծած հարստութիւնը զարգացման չ'առաջնորդէր, փտածութիւնն է որ մատնացոյց կ'ըլլայ: Հայաստանի մէջ մանաւանդ, ազատ-չուկայական համակարգի հաստատման ու ամրադրման առաջին պահէն իսկ անոր տեսաբաններն ու կուտակուած դրամազուլտի յաւելեալ կուտակման ջատագով օրգանական մտաւորականները միայն այս յանկերգը գիտեն: Թէ անկեղծ են իրենց համոզումներուն մէջ՝ թերեւս կասկածի տակ պէտք չէ առնել: Հասկնալի է մինչեւ իսկ, որ իրենց մասնագիտական շահերէն կրնայ մեկնիլ իրենց յամառ պնդումը, որ Հայաստանի տնտեսական համակարգի կառուցային խնդիրներու պատճառը փտածութիւնն է, երբ այս վերջինը պարզապէս հետեւանք է իշխանութեան ու հարստութեան կեդրոնացման:

Թէ Հայաստանի մէջ, ինչպէս խորհրդային բոլոր նախկին հանրապետութիւններու, պետական ծրագրումի տնտեսական համակարգի ազատականացումը առաջնորդեց դրամազուլտի կուտակման այնպիսի կեդրոնացման, որ առաջացուց գրեթէ նէօ-աւատապետութիւն մը, ուր ե՛ւ ժողովրդավարութիւնը դատապարտուած է ձեւական մնալու, ե՛ւ ազատ ձեռնարկութեան գովաբանութիւնը դատարկ ճառ է, այս մասին կասկած չկայ: Բայց սխալ է հետեւցնել, որ ազատ-չուկայական իտէյալ համակարգ մը կրնայ գոյութիւն ունենալ: 2008-ին առաջացած համաշխարհային տնտեսական շարունակուող ճգնաժամը եկաւ փաստելու, որ նոյնիսկ ամենազարգացած տարածաշրջաններուն մէջ ազատ-չուկայական տեսութիւններու գործադրման թէկուզ եւ անբաղձալի, բայց այնուամենայնիւ կանխատեսելի հետեւանքներն են ե՛ւ փտածութիւնը, ե՛ւ ժողովրդավարութեան բովանդակաթափութիւնը: Այո, Ուոլ Սթրիթի վաշխառուներէն Մատոֆֆը ի վերջոյ ազատագրկուեցաւ, բայց քանի այլ մատոֆֆներ տակաւին կը շարունակեն գրաւը դնել իրենց միլիոններուն, եթէ ոչ միլիառներուն գնելիք քաղաքական անձնաւորութիւններու վրայ, եւ արդե՞օք ամբողջ կեանք մը գեխութեան մէջ վայելած Մատոֆֆներու թէ Մուպարաքներու ազատագրկումը ինքնին լուծո՞ւմ մըն է այն համատարած անգործութեան, աղքատութեան խորացման, ապագայի կորուստին... Տակաւին, ժողովրդավարութեան ամենապայծառ տարբերակները յաջողութեամբ փորձարկած Եւրոմիութիւնը այսօր դէմ յանդիման ազատ-չուկայականութեան պատճառած ճգնաժամին, նոյն այդ ժողովրդավարութեան վտանգաւոր աղաւաղման դիմաց կը գտնուի, երբ միլիոնաւոր քաղաքացիներու ճակատագիրը կ'որոշուի Կեդրոնական դրամատուներու թեքնոքրաթիւներու եւ քանի մը քաղաքական անձնաւորութիւններու կողմէ:

Եզրակացութիւնը պարզ է: Հայաստանի մէջ թէ այլուր, անցնող քսանամեակին ամրադրուած ազատ-չուկայական համակարգը դրամազուլտի կուտակման ամենանախնական գործընթացի քաղաքակիրթ յորջորջումն է միայն: Ինչպէս այլուր, նաեւ Հայաստանի մէջ, այդ կուտակումը առաջացուցած է ընկերային սուր բեւեռացում, որուն աքցանին մէջ բռնուած քաղաքացիներուն համար միայն երկու ելք կայ՝

Սիսու էջը կը հոգսմաստորեն Ս. և Ս. Արսլան և Ներսիս Սիսուսեան



AUTOMOBILES INTER-LUX INC.

**SERVICE DE RÉPARATION
SPÉCIALITÉ MERCEDES-BENZ
VENTE DE VÉHICULES SÉLECTIFS**

**OUVERTURE DE NOTRE DEUXIÈME SUCCURSALE
AU CŒUR DE LAVAL – PRINTEMPS 2012**



4219, BOUL. LÉVESQUE OUEST, LAVAL (QUÉBEC) H7W 2P9

www.interlux.ca



բողոքի ձայն բարձրացնել կամ պարզապէս լաւագոյն հորիզոններ փնտռել: 2011-ը յատկանշուեցաւ համաշխարհային տարողութեամբ բողոքի լայնածաւալ զօրաշարժերով արաբական երկիրներէն մինչեւ Եւրոպա ու Միացեալ Նահանգներ. յառաջիկայ տարիները յղի են նոյնատիպ իրադարձութիւններով, եթէ իշխող դասակարգերու մօտ հարստացման ազահոլութեան ախորժակը չզսպուի: Հայաստանի մէջ, եւ հաւանաբար այլ երկիրներու, ճգնաժամէն դուրս գալու ուղին արտագաղթն է: Նախ որովհետեւ դիւրին լուծում է, միջոցները կան ի դէմս Մեծ Եղբայր Ռուսիոյ, որ հայ ժողովուրդին այնքա՛ն կը սիրէ որ մեծ սիրով կը հիւրընկալէ իր երկրի խորերը ուր կայ աշխատանք, ապահովութիւն, հանգիստ կեանք, եւ փոխարէն տիրութիւն կ'ընէ իր դրամագլուխի ներդրումով իրեն պատկանող Հայաստանի բնական հարստութիւններուն եւ, ինչու չէ, օր մը նաեւ առանց հայու մնացած երկրի մը հողային տարածութիւններուն... Բայց արտագաղթը նաեւ ցուցանիչ է հասարակութեան խոր անվստահութեան երկրի քաղաքական ուժերուն, որոնք կամ իշխող դասակարգի բարօրութեան շարունակման երաշխաւորի դերի մէջ են կամ ալ առնուազն մինչեւ օրս չեն յաջողած դրամագլուխի վերածել հասարակութեան մէջ առկայ խոր դժգոհութիւնը, չեն կրցած բողոքը հունաւորել դէպի կացութեան արմատական փոփոխութիւն որու հետեւանքով կենսամակարդակի բարելաւման, սոցիալական առաջընթացի յոյս կը ստեղծուի, աշխատանքի արժանապատուութիւնը կ'ապահովուի, կրթութեան, առողջապահութեան ու սոցիալական անվտանգութեան երաշխիքներ կը ստեղծուին: Բողոքի միակ փորձառութիւնը Հայաստանի մէջ «գունաւոր յեղափոխութեան» Տէր Պետրոսեանի գունաթափ նախաձեռնութիւնն էր, հետամուտ միայն իշխանափոխութեան, որպէսզի իր օրօք ստեղծուած սոցիալապէս անարդար համակարգի շարունակումէն օգտուին շատ աւելի իրեն հետեւորդ հատուածը եւ ոչ թէ այժմ իշխանութեան վրայ գտնուողները: Գաղափարախօսական վիճը շատ մեծ է թու-

նուզի, Եգիպտոսի, Յունաստանի, Անգլիոյ, Սպանիոյ թէ Միացեալ Նահանգներու մէջ բողոքի ելած միլիոնաւորներու զօրաշարժին եւ «գունաւոր յեղափոխութիւններու» զանազան տարբերակներու ջատագովներուն միջեւ:

Հակառակ իր դիմագրաւած բոլոր դժուարութիւններուն, ներքին թէ արտաքին մարտահրաւէրներուն, նախագահ Սարգսեանի կառավարութիւնը յատկանշուեցաւ շատ ակնբախ շարունակականութեամբ: Ո՛չ արտաքին քաղաքականութեան, ո՛չ ալ ներքին քաղաքականութեան մէջ ընթացքի փոփոխութիւն եղաւ կամ դերակատարներ փոխուեցան: Ոմանց համար քաղաքական այս շարունակականութիւնը ճգնաժամային պայմաններու մէջ կրնայ նոյնիսկ իմաստութիւն կամ ղեկավարի ձեռնհասութիւն նկատուիլ: Մետալին միւս երեսը սակայն ցոյց կու տայ սոցիալական անարդարութեան առաջնորդող քաղաքատնտեսական համակարգը ամէն գնով պահպանելու յանձնառութիւն, այնքան որ նուազագոյն աշխատավարձի դոյզն յաւելման առաջարկին նման փոքր փոփոխութեան առաջարկն իսկ կը բախի տիրապետող դասակարգերու իշխանութեան պահպանման ու յաւերժացման վերահսկող քաղաքական ուժերու կտրուկ մերժումին:

Նման քարացած համակարգեր, ուր ժողովրդավարութիւնը միայն ձեւական է, կը յանգին ընկերային պոռթկումներու: Թէ որքանով այդ պոռթկումները կ'առաջնորդեն համակարգային փոփոխութիւններու, կը տանին քառասային իրավիճակներու, թէ կը խեղդուին բռնաճնշումային միջոցառումներով՝ առանձին հարց է, կախում ունի այն պայմաններէն, որոնց մէջ ընկերային պոռթկումը տեղի կ'ունենայ: Հայաստանի իրականութեան համար մէկ բան յստակ է. դէմ յանդիման արտաքին սպառնալիքին ներազգային գործընթացին քառասային իրավիճակի հասցնող ամէն հանգուցալուծում մեծ ռիսք է, կարելի չէ անոր հետեւանքներու հաշուարկումը անտեսել: Արտաքին սպառնալիքը, սակայն, չի կրնար զսպաշապիկ ըլլալ համակարգային փոփոխութեան հրամայականին, որովհետեւ ինքզինք պահպանող եւ վերարտադրող այս համակարգին ծնունդ տուած սոցիալական անարդարութեան հետեւանքները երկրի ներքին խոցելիութիւնը կ'աւելցնեն, ինչ որ իր կարգին արտաքին սպառնալիքը կարողականորէն աւելի ճնշիչ կը դարձնէ: Համակարգային փոփոխութիւնը չի հասկցուիր անշուշտ ոչ տնտեսութեան պետականացման անիմաստ քայլով, ոչ ալ կ'անտեսէ Հայաստանի համար մեծ դրամագլուխի ռազմավարական նշանակութիւնը: Կը հասկցուի պարզապէս տնտեսական քաղաքականութեան ճշման ժամանակ սոցիալական արդարութիւնը իր կոնկրետ բաղկացուցիչներով որպէս առաջնորդող սկզբունք ունեցող համակարգի կերտումով՝ ժողովրդային լայն մասնակցութեամբ, քուէի վերարժեւորումով, ձայն տալու քաղաքացիական իրաւունքի ուժականութեան վերաորակաւորումով:

Անկախութեան քսանամեակէն ետք, Հայաստանի մէջ համակարգային արմատական բարեփոխումը ազգի հաւաքական ապագայի համար ամենաառաջնային խնդիրն է եկող երկու տարիներուն:

Խ. ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Այս էջը կը հովանաւորեն Միգֆն, Ասրիս եւ Ռաֆֆի Քօւլէյեան

BMO  **Bank of Montreal**



At Your Door Step



Osana Mksey-Artinian AMP
Mobile Mortgage Specialist

**For All Your Mortgage Needs
Best Competitive Rates
Up to 500 Air Miles**

**416.315.7310
416.490.0607**

(Available 24 hours a day, 7 days a week)

**Serving
The Armenian Community
for 15 Years**

«Այս տարածքը հայերու ձեռքէն խլողը մե՛նք չենք...»

Տերսիմը՝ ազգագրագէտ Հրանոյշ Խառատեանի հայեացքով

Ծ.Խ.- Տերսիմի մասին յանախ անդրադարձած ենք «Հորիզոն»-ի էջերով: Մինչեւ 20-րդ դարու սկիզբ, Տերսիմի բնակչութեան զգալի մասը հայ էր: Տերսիմի մէջ նախքան բրֆացումը, հայկական եղած են նաեւ տեղա-նունները:

Թրքական յաջորդական կառավարութիւններու օրով, քանդուած եւ գետնին հաւասարեցուած են Տերսիմի հայկական բոլոր եկեղեցիները:

Պատմութեան ընթացքին, Տերսիմի շատ մը գիւղերու մէջ, հայ եւ քիզիլպաշ բնակչութիւնները համերաշխութեամբ կ'ապրէին, մինչեւ իսկ քիզիլպաշ երեխաներ հայկական վարժարան կը յաճախէին եւ հայերէն կը սորվէին: Հայերը լեռնային տերսիմցիներու փրկանքը (կնքահայր) էին: Օտար պատմաբաններ կը հաստատեն, որ 17-րդ դարէն սկսեալ, Պինկէօլի, Սերաստիոյ, Երզնկայի եւ Խարբերդի շրջաններուն մէջ ապրող հայեր, չդիմա-նալով Օսմանեան թուրքերու ճնշումներուն, կը հաստատուէին Տերսիմ եւ կրօնափոխ դառնալով կ'ընդունէին պաշտօնները (իսլամական շիա յարանուանութեան մէկ ճիւղը):

Ցեղասպանութեան տարիներուն, տերսիմցիները ապաստան տուած են աւելի քան 40 հազար հայերու: Ցեղասպանութեան հանգրուանին, Տերսիմ ապաստանած շատ մը հայեր պաշտօն դարձած են՝ իւրացնելով տերսիմ-ցիներու ապրելակերպը:

1938-ին, թրքական ճնշումներուն դէմ ծառայած Տերսիմի ցեղախումբերը՝ Սէյիտ Ռիզայի գլխաւորութեամբ: Ըստ տերսիմցի արդի ժամանակներու մտաւորականներու, 1938-ի ցեղափոխութեան տերսիմցիներու կողմէն գեղմ վերցուցած են դաւանափոխ դարձած հազարաւոր հայեր, իսկ ապաստանութեան տխուր վախճանին յաջորդող քննարկական բանակի ջարդերուն՝ տերսիմցիներու կողմէն սպանուած եւ ջարդուած են նաեւ հայեր:

Այսօր, եւրոպացի կարգ մը պատմաբաններու կողմէ ընդունուած է այն տեսութիւնը, որ 1937-38 քննարկ-ական ուժերու կողմէ ջարդուած են 70 հազար տերսիմցիներ եւ հայեր:

Մինչեւ 1915-ի Ցեղասպանութիւնը Տերսիմի տարածքին գործած են 45 հայկական եկեղեցիներ եւ 5 վան-քեր: Անցնող երկու տարիներուն շատ մը տերսիմցիներ սկսան վերադառնալ իրենց հայկական արմատնե-րուն: Այսօր Տերսիմի մէջ կը գործէ նաեւ Տերսիմցի հայերու հայրենակցական միութիւնը:

Երեւոյթներ կան, որոնք կը յուսադրեն՝ յայտնելով, որ դեռ ամէն ինչ կորսուած չէ, դեռ կան այս կամ այն յարկին տակ համախմբուած նուիրեալ հայեր, որոնք կը մտածեն հայ ինքնութեան պահպանման, մոռացութեան մատնուած տար-րերը վեր հանելու եւ էական այլ խնդիրներու մասին: Այդ-պիսին է «Երկիր» միութիւնը, որուն ծրագրերը ուղղուած են վերականգնուած կամ գոյութիւն ունեցող բնակավայրերու բնակիչներու ընկերա-տնտեսական եւ ընկերա-մշակութային խնդիրներու լուծման, ինչպէս նաեւ Արցախեան պատերազմի ընթացքին հայաթափուած եւ դեռ ամայի բնակավայրերու ամբողջական վերականգնման: Միութեան յատուկ ուշադ-րութեան կեդրոնին են նաեւ սահմանային շրջաններու բնակչութեան ընկերա-տնտեսական խնդիրները:

«Երկիր»-ը իր գործունէութեան ընթացքին կ'իրակա-նացնէ նաեւ «Վան» նախագիծը, որուն հիմնական նպա-տակն է նպաստել Հայաստանի Հանրապետութեան սահման-ներէն դուրս՝ Հայկական բարձրաւանդակի եւ Սեւծովեան

աւազանի տարածքին ապրող ծագումով հայ բնակչութեան բնիկ ինքնութեան պահպանման, նոյն տարածքի էթնիկ խումբերու եւ Հայաստանի բնակչութեան միջեւ միջմշակու-թային կապերու հաստատման ու զարգացման, ինչպէս նաեւ աւանդական երաժշտութեան եւ ոչ նիւթական մշակութային ժառանգութեան այլ ճիւղերու ուսումնասիրութեան եւ անոր մէջ առկայ հայկական շերտի վերհանման:

«Վան» ծրագրի իրականացման ծիրէն ներս ձեւաւոր-ուած էր գիտահետազոտական արշաւախումբ մը, որ 2011-ի Յուլիս 18-էն մինչեւ Օգոստոս 4 այցելած եւ ուսումնասի-րութիւններ կատարած է Համշէնի, Տերսիմի, ինչպէս նաեւ Արեւմտեան Հայաստանի կարգ մը այլ բնակավայրերու մէջ:

Արշաւախումբի կազմին մէջ ընդգրկուած էր առանձին հետազոտական խումբ մը, որուն մաս կը կազմէին ազգագ-րագէտ Հրանոյշ Խառատեանն ու արեւելագէտ Անոյշ Յով-հաննիսեանը, որոնք հետազոտութիւններ կատարած են յատ-կապէս Տերսիմի (Տերսիմը մաս կը կազմէր հայոց պատմական

Այս էջը կը հովանաւորեն Ս. եւ Ս. Լեւոն եւ Միք Կապետեան

Մոփքին, կը գտնուի Վանայ լիճէն հիւսիս արեւմուտք, հիւսիսէն՝ Երզնկա, հարաւէն՝ Խարբերդ, արեւելքէն՝ Պինկէօլ-Մուշ եւ արեւմուտքէն՝ Սեբաստիա) մէջ՝ հաւաքելով ազգագրական բնոյթի հարուստ նիւթեր:

Տերսիմի (քեմալական իշխանութեան օրերուն պաշտօնապէս անուանուած է Թունչէլի, սակայն տեղացիները կը շարունակեն զայն անուանել Տերսիմ) հետազօտական արշաւի մասին զրուցեցինք ազգագրագէտ Հրանոյշ Խառատեանի հետ:

Հարց- Ինչպէ՞ս եղաւ Ձեր համագործակցութիւնը «Երկիր» միութեան հետ:

Պատասխան- Ես շատ վաղուց ուզում էի Տերսիմ գնալ ուսումնասիրելու: Պատահաբար «Երկիր» միութեան աշխատողներից մէկը ինձ պատմեց «Վան» ծրագրի եւ Մնձուրի փառատօնի իրենց մասնակցութեան մասին եւ ես ուղղակի գնացի եւ ասեացի՝ ի՞նչ կը լինի, եթէ դուք այդ ծրագրում ներառէք նաեւ երկու հետազօտողներ: Համաձայնուցին՝ պայմանով, որ մենք մեր նիւթերը տրամադրենք նաեւ իրենց արխիւներին, իսկ ես միայն ուրախ եմ դրա համար, որովհետեւ նիւթերը որքան շատ տեղերում լինեն, այնքան ուրիշ հետազօտողների համար մատչելի կը լինեն:

Հ- Ձեր այս հետազօտութեամբ կարելոր նիւթեր հաւաքեցի՞ք:

Պ- Այո, շատ կարելոր էր մեր հաւաքած նիւթերը ունենալը: Հալաճեանի գիրքը՝ «Տերսիմի Ազգագրութիւնը», որտեղ շատ հարուստ տեղեկութիւններ կային եւ զգալիսս եւ քուրմանճիախօս, տուեալ դէպքում սիւննի մահմետական քրտերի եւ ալեւի զգալիսս հատուածի մասին եւ բնականաբար, նախ եւ առաջ գրեթէ հարիւր տարի է անցել: Ճիշդ է, Հալաճեանը երեսունական թուականներին է շարագրել այս նիւթերը, բայց դրանք իր ու այն մարդկանց յիշողութիւններն




Հրանոյշ Խառատեան

էին, ովքեր մինչեւ 1914 թիւ այնտեղ են եղել: Ինքը՝ Հալաճեանը, տերսիմցի էր եւ Հալաճորի Սուրբ Կարապետում ուսուցիչ: Նա շրջագայել է այնտեղ, գրառումներ է արել, բայց այդ բոլոր գրառումները յետագայ քսան տարիներին է շարագրել: Փաստօրէն Տերսիմի մասին յետ ցեղասպանական շրջանի զարգացումների վերաբերեալ որեւէ արժանահաւատ ականատեսի եւ հետազօտողի նկատառումներ, նիւթեր, դիտարկումներ, վերլուծութիւններ չունէինք, իսկ Տերսիմը բացառիկ մի տարածք էր: Նախապէս էլ գիտէինք, որ բացառիկ է, որովհետեւ Տերսիմը իր աշխարհագրական դիրքով եւ նախկին կիսանկախ վիճակով զգալիօրէն տարբերում է Թուրքիայի այլ եւ Արեւմտեան Հայաստանի տարածքներից. այստեղ



1938-ի Տերսիմի ընթացիկ ընթացքի տարածաշրջանի աշխարհագրական քարտէսը

Այս էջը կը հովանաւորեն Ս. Եւ. Մ. Լեւոն Եւ Երոյր Միւսիան



Տերսիմի Հարսիկ գիտի բնակիչ Ալին, այժմիսացած հայ է

նոյնիսկ ցեղասպանութեան մասին տեղեկութիւնները մեզ միշտ չէ որ հասու են եղել: Գիտէինք նաեւ, որ այլ տարածքներից առանձին փախստական փրկուած հայեր՝ որոշ պաշտպանութիւն են գտել Տերսիմում: Սրանք տարբեր տեղերում, տարբեր հատուածներով արուած տեղեկութիւններ էին, բայց որեւէ համահաւաք չկար: Ես միշտ մտահոգ եմ, որ Թուրքիա հետազօտութիւն անելը միշտ չէ, որ հնարաւոր է լինելու եւ կարծում եմ, որ ներկայիս քաղաքական զարգացումներն էլ տանում են նրան, որ յառաջիկայում Թուրքիան իր հարեւանների հետ ունենայ աւելի բարդ, գուցէ նոյնիսկ ռազմական խնդիրներ. այն ժամանակ շատ աւելի դժուար կը լինի հետազօտութիւն կատարելը: Այս բոլորը միասին եկան գումարուելու եւ հնարաւորութիւնը օգտագործելու՝ գոնէ մի հետազօտութիւն անել: Մենք «Երկիր» միութեան խնդրեցինք փորձել իրենց հետ ճամբորդութիւնը, ստեղծել այդ առիթը: Մարդիկ սիրով համաձայնուեցին ու ստեղծեցին պէտք եղած հնարաւորութիւնները:

- Հ- Եւ «Վան» խումբի հետ ուղղուեցաք Տերսիմ:
- Պ- Մենք «Վան» խումբի հետ գնացինք մինչեւ Համաշէն, իրենք մնացին, ես եւ Անոյ Յովհաննիսեանը «Երկիր» միութեան մի ուրիշ ներկայացուցչի հետ՝ երեք հոգով շարունակեցինք ճանապարհը Թուրքիայի ներսում: Գնացինք էրզ-

րում, Խարբերդ, այնտեղից Տերսիմ (Թուրքիա) եւ երկու շաբաթ աշխատեցինք այդ տարածքում:
Ունենք առաջնային տպաւորութիւններ. եզրակացութիւններ անելու համար դեռ վաղ է, նիւթերը դեռ լաւ վերլուծուած չեն, այնպէս որ եզրակացութիւն բառը վերապահումով կ'օգտագործեմ: Եղանք 19 բնակավայրերում: Շատ խտացուած աշխատանք ենք տարել: Տեղացիները մեզ շատ սիրով օգնեցին, ուղեկցողներ ունէինք, մեզ օգնեց նաեւ Թուրքիոյ մեր գործընկեր «Անատոլու Կուլտուր» (Anadolu Kultur) կազմակերպութիւնը:

Հ- Կը պատմէ՞ք, թէ ինչ կազմակերպութիւն է «Անատոլու Կուլտուր»:

Պ- «Անատոլու Կուլտուր» կազմակերպութեան հետ մենք վաղուց ենք համագործակցում: Ես նոյնիսկ իրենց հետ համատեղ գիրք եմ հրատարակել՝ կոչւում է «Խօսելով միմեանց հետ», որ անգլերէն, թրքերէն եւ հայերէն լեզուներով է գրուած: Գրքի մի մասը գրել է Թուրք հեղինակ Լէյլա Նէյզի, միւս մասը ես եմ գրել: Մեր նպատակն էր փորձել հասկանալ, թէ նախկինում Արեւմտեան Հայաստանում ապրած եւ ցեղասպանութիւնից յետոյ տարբեր ձեւերով (գաղթ, փախուստ...) փրկուած ու Հայաստանում հաստատուած ներկայիս սերունդը ի՞նչ յիշողութիւններ ունի նախնիների թրքական անցեալի մասին: Նոյն նպատակը կար թրքական կողմում՝ հասկանալ այսօրուայ Թուրք հասարակութեան տարբեր շերտերը, ի՞նչ պատկերացում ունեն Հայաստանի եւ հայերի մասին եւ փորձել հասկանալ այդ յիշողութիւնները՝ որեւէ հնարաւորութիւն տալի՞ս են արդեօք, որ այս երկու ժողովուրդների միջեւ խօսակցութիւն ընթանայ, երբեւէ ինչ որ չափով հաշտ ապրելու համար... Կարող եմ վստահ սասել, որ մենք մեր հետազօտութիւնում՝ իմ կարծիքով, եղել ենք անկողմնակալ:

Վերջին երեք չորս տարիներին «Անատոլու Կուլտուր» կազմակերպութիւնը կարծէք թէ զգալի չափով հայ-թրքական ծրագրերի է ուղադրութիւն դարձնում: Ենթադրում եմ, որ սա մասամբ թրքական քաղաքականութեան է:

Առ այժմ կարող եմ ասել, որ «Անատոլու Կուլտուրը» մի կազմակերպութիւն է, որի հետ հաճոյքով կարելի է համագործակցել եւ այդ կազմակերպութիւնը չի փորձում թելադրող դիրք գրաւել, փորձում է արդիւնաւէտ լուծումներ գտնել, գուցէ երկու կողմերի մօտեցումները որոշ շրջանակի մէջ տեղաւորելու համար:

Տերսիմի հետազօտութիւնների հարցում այս կազմակերպութեան մասնակցութիւնը մեր ծրագրին շատ զգալի էր. նրանք մեզ զգալի ալեւի մի ընտանիքի բնակարան գտան, տանտէրերը ապրում էին Սթամպուլում եւ Տերսիմի իրենց բնակարանը սիրով եւ անհատոյց տրամադրեցին մեզ՝ մեր հետազօտութիւնը կատարելու համար: Նրանք մեզ տուեցին նաեւ մարդոց հասցէներ եւ անուններ, ովքեր դէմ չէին լինի օգնել մեզ: Սա էր նրանց օգնութիւնը, որ համարում եմ մեծ օգնութիւն:

Հ- Տերսիմցիներու հետ ձեր շփումը ինչպէ՞ս ընթացաւ:

Պ- Տերսիմը փոքր տարածք ունի եւ ցանկացած օտար մարդ հետաքրքրութիւն է յառաջացնում, հայ մարդը առաւել եւս, որովհետեւ կարելի է ասել, որ այսօրուան Տերսիմի բնակչութեան (այժմ կը կազմէ 90 հազար) գոնէ կէսը, ոչ վաղ

Այս էջը կը հովանաւորեն Ամուէլ Թափն, Դէորգ եւ Պուրբն Քօստան

JIMMY THE GREEK

A taste
of the
old world
restaurants



Մեդիականատեր՝ Չարեհ Շահինեան

FAIRVIEW MALL

1800 Sheppard Ave. East
Toronto ON M2J 5A8

(416) 498-8475

CHICKEN SOUVLAKI

With Pita & Salad
We Always Use Fresh,
High Quality Ingredients.



CHICKEN SOUVLAKI

Fresh, Healthy & Delicious!



CHICKEN GREEK

Always Fresh White Chicken
Never Frozen!



GYROS PITA & SALAD

Our Delicious
Whole Wheat Pita
Bread Has 4 Grams of Fibre!



SPINACH CHEESE PIE

Handmade Phyllo Dough



GREEK SALAD

Our Kalamata Olives
Are Plump,
Juicy & Full Of Flavour



ROAST CHICKEN DINNER

Our Spice Mix Has
No MSG- Zero Trans Fat



GYROS DINNER

Delicately Seasoned
Beef & Lamb



BAKLAVA

Satisfy Your Sweet Tooth



▲ GREECE IS A TASTE AWAY

© Jimmy The Greek Group Inc. 2014. All Rights Reserved.



www.jimmythegreekgroup.ca

անցեալին ալեւիացած հայեր են:

Այդ մարդկանց կողքին ի բնէ զազախօս ալեւիները (այսօրուայ նախկին հայերը նոյնպէս զազախօս են) ճանաչում են եւ գիտեն յականէ յանուանէ, թէ ովքեր իրենց հարեւաններից, ընդամէնը 70-80 տարի առաջ դեռ հայ քրիստոնեաներ էին, եւ այսօր իրենց նման զազախօս ալեւիներ են, նրանք սկզբունքօրէն ալեւի են ընկալուում, ե՛ւ իրենք իրենց ընկալմամբ, ե՛ւ նախկին ալեւիների ընկալմամբ: Բոլոր դէպքերում հայ մարդը յատկապէս, եթէ հետազօտական խնդիրներ ունի այնտեղ, անմիջապէս յայտնի է դառնում եւ այս խնդիրներով հետաքրքիր մարդիկ իրենք էլ էին գալիս մեզ գտնում: Միւս խնդիրն էլ կար. շատ ուշադրաւ էր այն փաստը, որ մենք զուտ հայկական խնդիր չէինք դրել միայն հայկական զանգուածով կամ ալեւիացած հայերով հետաքրքրուել եւ նիւթեր հաւաքել, մեզ համար տարածքը ինքնին շատ հետաքրքիր էր, բայց անկախ նրանից, թէ մարդը այսօր հայ է, նախկինում զազա ալեւի էր, կամ մէկ այլ ինքնուրուի ունէր, բաւական էր, որ նա իմանար հայ ենք, անմիջապէս սկսում էին պատմել իրենց հայկական յիշողութիւնները: Գուցէ նրանց թւում էր, որ քանի մենք հայ ենք, ուրեմն առաջին հերթին միայն հայերով ենք հետաքրքրուում, գուցէ նաեւ այն պատճառով, որ այդ յիշողութիւնները եւ հայկական ներկայութիւնը այնքան անքակտելի են, որ դժուար է երբեմն տարանջատել:

Գիւղերից մէկում, ուր գնացել էինք հանդիպելու մի փերի (իմաստուն մարդ, կրօնական գիտակ, որ ընտանիքի մէջ ժառանգաբար կը փոխանցուի հօրմէն որդիին, հեղինակաւոր անձ, թրքերէն կը նշանակէ՝ սուրբ իմաստուն, քրտերէն՝ տարեց մարդ) հետ, որ մեր առաջին խօսքից՝ բարեւ ձեզ, Հայաստանից ենք, հայեր ենք՝ յետոյ ասաց՝ «մենք այս գիւղը հայերից չենք խլել, այս գիւղը հայերից խլել են Բալուի սիւննի քրտերը, յետոյ նրանք մեզ մաս մաս վաճառել են, եւ հիմա մենք ենք այստեղ ապրում»: Ուզում եմ ասել, բառը ինքը դառնում է կամ «սեզամ բացուիր», կամ հակառակը՝ «անմիջապէս փակուիր»:

Հ- Հետազօտութիւններու ընթացքին ձեզի համար անակնկալ տեղեկութիւններ պարզեցի՞ք:

Պ- Այո. մեզ համար անակնկալներ շատ կային: Ինչպէս պարզուեց, Տերսիմում եղել են հայկական գիւղեր, որոնց ամբողջ բնակչութիւնը հայեր են եղել եւ 1915 թիւը նրանց շրջանցել է, այդ մարդիկ թուրքիայի տարածքում 1915 թուի ցեղասպանութեան յիշողութիւն չունեն: Տերսիմը, ինչպէս յայտնի է, 1915 թուին կիսանկախ էր, դրա համար էլ թրքական կառավարութեան համար այդպէս փուշի նման միշտ մնում էր՝ մինչեւ 1938-ի ջարդերը:

Հայկական այդ գաւառներում 1915-ին ջարդ չի ինքնու մի շարք գործօններ կան, բայց կարծում եմ ամենագլխաւորը եւ ամենաառաջինը այն էր, որ տերսիմցիները չէին ուզում հպատակուել թուրքական իշխանութեան եւ թուրքական իշխանութեան ծրագրերը չէին իրականացնում. իրենք իրենց մէջ միշտ ըմբոստանում էին. սա դեռ ոչ վերլուծական առաջնային դիտարկում է: Տերսիմի տարածքի մեծ մասը ի հարկէ ցեղասպանութեան ենթարկուել է՝ խաբարդը ամենէն ահաւոր կոտորածի տարածքն էր, Բալուն եւալն: Ես նկատի ունեմ կան նաեւ մեզ անյայտ այնպիսի դէպքեր, երբ բուն Տերսիմի զազա ալեւի բնակչութիւնը փորձել է հայկական ամբողջ գիւղեր պաշտպանել, որպէս ալեւիական գիւղեր եւ իբրեւ այդպիսին ներկա-



Խոզրքոյ (ներկայիս՝ Ալանիազի) գիւղը Տերսիմի Մեծկերտ շրջանին մէջ կը գտնուի: Գիւղի բնակիչներուն մեծամասնութիւնը ալեւիացած հայեր են: Գիւղի բնակիչներէն Ջիշա Փոլատը (նկարը) կը հաստատէ, որ իրենք Տերսիմի հայկական Միւրաքեան ցեղախումբի շատաիղներէն են եւ իրենց պատկերակալ Հազա գիւղէն Խոզրքոյ հաստատուած են 1915-ին:

յացնել աշխարհին: Եղել են նաեւ ներքին տեղաշարժեր մէկ գիւղից միւսը, խառն բնակչութիւն ունեցող գիւղերում որպէս կանոն կոտորածներ չեն եղել, բայց տեղի զազախօս ալեւի բնակչութիւնը, հայերը պաշտպանելու որպէս գին՝ վերցրել է նրանց ունեցուածքը: Այսինքն՝ փոխհատուցման, գոհողութեան, փոխյարաբերութիւնների վերաիմաստաւորման գործօնը կար:

Մեր նիւթերում զգալի չափով կայ երկու կողմերի յիշողութիւններից բխած այն փաստը, որ մինչեւ 38 թուական այդ հայերը մնացել են նաեւ որպէս քրիստոնեայ հայեր, եւ Տերսիմի այս կիսանկախ վիճակը թուրքական իշխանութիւններին մղեց այն բանին, որ 36 թուականին նախ Հալւորի Ս. Կարապետը պայթեցրին, որ շատ կարեւոր սրբազան տարածք էր տեղի ամբողջ բնակչութեան համար եւ 38 թուականին՝ ի հարկէ Տերսիմի կոտորածները: Այդ կոտորածների ժամանակ բոլոր հայկական գիւղերը, որոնք դեռեւս մնացել էին կիսանկախ վիճակում, ենթարկուեցին կոտորածների:

Ինձ շատ զարմացրեց ու հետաքրքրեց այն, որ այսօրուայ ալեւի զազախօս բնակչութեան տարբեր տեսակի պատմութիւններում կամ ինչպէս իրենք են ասում՝ մասալաներում, շատ մեծ ներկայութիւն ունի հայկական տարրը. օրինակ ես ծայրից ծայր ձայնագրել եմ Գրիգոր Լուսաւորիչի պատմութիւնը, յաճախ անուններն էլ նոյնն են մնում, օրինակ Գրիգոր Լուսաւորիչը Կորկիս էր, Տրդատի անունը չկար, բայց թագաւորը կար, տարիներ շարունակ փոսում մնալու պատ-

Այս էջը կը հովանաւորեն Մ. եւ Ս. Սեյիկ եւ Տապիուհի Պէլիբաճեան

Dangerously Elegant

JEWELLERY THAT SETS YOUR HEART ON FIRE



 LUGARO *25* Anniversary

www.lugaro.com | Metropolis at Metrotown 604.430.2040 | Park Royal South 604.925.2043 | Mayfair Centre 250.382.2040

ALL ITEMS: DIAMONDS & 18K WHITE GOLD, RING: 1.75 CARAT TW, PENDANT 2.10 CARAT TW, BRACELET 10.08 CARAT TW

մուծվելը, ամէն օր հաց գցելու պատմութիւնը կար, Հոփսի-սիմեանց կոյսերու պատմութիւնը կար՝ առանց անուաններու եւ այլն:

Տերսիմուս դեռ կան պատմողներ՝ հեքիաթասացներ, մասալաներ իմացողներ, որոնց ասում են պապա կամ փրերեր: Մենք աւելի շատ պապաներից եւ բիրերից էինք գրանցում, բայց Տերսիմի աշխարհայ մտաւորականներն իրենք էլ են գրանցում եւ նոյնիսկ փորձում են մոտեւաւորել իրենց պատմութիւնները եւ երբեմն եւ մտաւորականներից գրանցում էի մի մոտեւաւորած պատմութիւն, յետոյ խնդրում էի, որ ես հանդիպեմ այդ հեքիաթներ պատմողներին, որից ինքը ստեղծել էր իր մոտեւը եւ տեսնում էի տարբերակները այդ պատմութիւնների: Տերսիմի բնակաւորման մասին շատ ուշագրաւ պատմութիւն կար. Քուրէյշա աշխրէթ (ցեղախումբ) կար, նրա պատմութեան հիմքը այն է, որ Քուրէյշը (այդ աշխրէթի առասպելական հիմնադիր նախահայրը) գալիս է Տերսիմ եւ հանդիպում է մի եկեղեցու հայ հոգեւորականի: Քուրէյշը տէրտէրին ասում է, այս ինչ լաւ է այս եկեղեցին, արի աշատեղ միասին ապրենք, տէրտէրը ասում է ինչո՞ւ միասին ապրենք, այս մեր տարածքն է: Քուրէյշը երկար համոզելուց յետոյ, տէրտէրին ասում է արի պայման դնենք՝ ով յաղթի իր ասածը կը լինի. դնում են տարբեր պայմաններ՝ նետ ձգել եւ այլն: Յաղթում է Քուրէյշը եւ նրանք միասին շատ լաւ ապրում են, մինչեւ Սուլթանը Քուրէյշին կանչում է իր մօտ, նրան ենթարկում զանազան փորձանքների: Այսինքն՝ այս մասալայի մէջ արդէն, տերսիմցի պատմող պապան գիտի, որ այս տարածքում հայեր էին ապրում, եւ դա կայ նաեւ իրենց բանաւոր գիտակցութեան մէջ: Պատմութիւնը յստակ է. հայերի հետ համակցութիւնը եղել է որոշ փոխադարձ պայմանաւորութիւններով:

Պատմութեան շարունակութեան մէջ, գալիս է թուրքը՝ Սուլթանը, եւ նա սկսում է նրանց ենթարկել փորձութիւնների եւ այդ փորձութիւնները բաւական հետաքրքիր ժանրով են եւ միաստիկական եւ առարկայական եւայլն: Ուրեմն Սուլթանի այս ընդհանուր ֆոնը (համայնապատկերը) լրացուցիչ մտերմութեան հնարաւորութիւն է Քուրէյշի եւ եկեղեցու քահանայի հետագայ յարաբերութիւնների ձեւաւորման համար: Հաւաքեցինք այդպիսի բանաւոր շատ պատմութիւններ: Մենք աշխատում էինք նաեւ հաւաքել որոշ անձերի եւ ընտանիքների գերդաստանային կենսագրութիւնները. սա շատ հետաքրքիր մեթոտ է, որով փորձում ենք պարզել թէ մարդը քանի՞ սերունդ է յիշում: Մէկը մինչեւ չորս սերունդ՝ տոհմաւածաւորով, կէտ առ կէտ, որ անձը ո՞ւր գնաց, ի՞նչ կրթութիւն ստացաւ, ի՞նչ աշխատեց, ո՞ւր է հետ հանդիպեց, գրանցել էր: Երեք սերունդը շատերն են յիշում, եւ մենք երեք սերունդ ընտանիքի կամ իրար հետ կապ չունեցող մարդկանց կենսագրութիւնը փորձում ենք գրանցել, այդ կենսագրութիւնները վերականգնում են դարաշրջանի մի ամբողջ պատմութիւն, որ ցոյց է տալիս այս տարածքում եղած զարգացումները՝ թէ՛ հայկական, թէ՛ ալեւիական, պատմութիւն, որ փաստացի գրանցուած չի:

Հ- Տերսիմի մէջ հատուածական յարաբերութիւններ կա՞ն:

Պ- Հատուածական յարաբերութիւններ չեմ կարծում, որ լինեն, ես միշտ ուզում եմ հասկանալ հայկական ինքնութեան դրեւորումը, եթէ կա՛յ առհասարակ, բացի գիտակցութիւնը,

որ պապերը, ծնողները հայ են եղել: Կան առանձին մարդիկ, որոնք սկսում են այդ ինքնութեամբ շարժուել, վերահաստատել իրենց հայկականութիւնը: Օրինակ՝ կան մարդիկ, որոնց ինքնութեան վկայականում գրուած է մի անուն, իրենք կենցաղում օգտագործում են այլ՝ հայկական անուն. էնվէրը իր գիտակցական տարիքին շրջանաւորութեան մէջ է դրել Ասատուր անունը, կողքիններից ո՛չ մէկը դրանից չի դարձանում: Այդ ընդհանուր մշակութային կաթսան, այդ միջավայրը ինք շատ ծանօթ է այդ իրավիճակին եւ դա չի յառաջացնում յարաբերութիւնների տարանջատումներ, բայց կարծում եմ որոշ զգուշաւորութիւններ յառաջացնում է. օրինակ՝ իմ զազա հնուց ալեւի ծանօթները մտածում էին, որ իրենց հայկական ինքնութիւնը վերականգնողները գուցէ մտածում են հայկական մշակութային եւ էթնիկական աշխարհի հետ մասնաւոր յարաբերութիւններ ստեղծել, սրանից ի՞նչ կը բխի, դա լա՞ւ է, թէ՛ վատ, հարցականներ են: Ընդհանրապէս ալեւիզմը մարդակեղծում է, այսինքն նրանց համար առաջնային արժէք է համարում մարդը, կամ գոնէ այդպէս ասում են: Ալեւիզմը կրօններու օտարում չի՝ ես ալեւի եմ, բայց դու իսլամ մահմեդական, սիւննի, ես քրիստոնեայ՝ չկայ մէկը միւսից օտարում: Բայց քանի որ ընդհանրապէս տերսիմցի ինքը քանակապէս քիչ է, ինքն իրեն ինչ որ մի որակ է համարում, որի վրայ փորձում է կառուցել ինչ որ իմբային ինքնութեան ապագայ: Սրանք դեռ նոր երեւոյթներ են, այսինքն՝ վերջին չորս հինգ տարիներն է, որ Տերսիմում նախկինում հայ, պապերը հայ մարդը սկսել է խօսել հայ լինելու մասին:

Հ- Տերսիմցի նախկին հայերը իրենց հագուկապով, կենցաղով, աւանդոյթներով ու սովորոյթներով միւս տերսիմցիներէն կը տարբերի՞ն:

Պ- Տերսիմը շատ երաժշտական է՝ սազը իւրաքանչիւր երկրորդի ձեռքին է եւ իւրաքանչիւր երկրորդը երգում է: Երգերի մէջ զգալի են կրօնական, նաեւ քաղաքական թեմաները:

Հատուածական տարբերակիչ երեւոյթներ չկան: Եթէ մտնէք հայից ալեւիացած ընտանիք եւ բուն ալեւիական ընտանիք, որեւէ տարբերութիւն չէք տեսնի, կարող է երկու տեղերում էլ սերնդային տարբերութիւն լինի՝ տարեց կիներ ասիական գլխաշոր ունենայ, շալուարները, որ հագնում են, ե՛ւ այնտեղ, ե՛ւ այնտեղ կարող էք տեսնել:

Տարբերակիչ աւանդոյթներ չկան, բայց բուն զազա ալեւիների մէջ կան սովորոյթներ, որոնք հայ քրիստոնէութիւնից են գալիս: Դրա ամենացայտուն դրսեւորումը սրբազան տարածքներում մեծ չափով ընդունուած մոմավառութիւնն է, մատաղ անելը, որ իմ պատկերացմամբ հայկական ծէսով է արւում, բայց կրկնում եմ, սրանք դեռ շատ մակերեսային դատողութիւններ են ընդհանրացման հիմք ունենալու համար:

Կան որոշ սովորոյթներ. իրենք, օրինակ՝ հին աւանդական ալեւիները շատ են սիրում ասել, որ իրենք կաղանդ են անում հայերի նման (նոյն հայերէն կաղանդ բառն ալ կ'օգտագործեն), բայց իրականում, կաղանդ բառից բացի մնացած ամէն ինչը, ոչ զազա ալեւիների մօտ, ոչ ալեւիացած հայերի մօտ որեւէ հայկական երեւոյթ չի, բայց կաղանդ բառը, որ կայ, ինք արդէն մղում է այդպիսի պատկերացման: Սիրում են երկու կողմերն էլ ասել, որ մենք ունենք հայկական մշակութային շատ դրսեւորումներ, բայց չգիտեն դա որն է:

Սեյա Էջը կը հովանաւորեն Մ. եւ Ս. Միքէ եւ Կարօն Գասախանեան



RE/MAX
RE/MAX 3000 INC.
Agence Immobilière



9280 L'Acadie
Montréal Qc. H4N 3C5

Bur.: (514) 333-3000
Cell.: (514) 895-5889
Fax: (514) 333-6376

Appelez-moi pour votre
estimation gratuite

Arnaud Kuyumcu
Courtier Immobilier



Տերսիմի Խոզաթի շրջանի Էրկեն գիւղին մէջ կ'սպարին 50-60 ընտանիք, որոնք բոլորը պելուսցած հայեր են: Գիւղացիներուն մեծ մասը այժմ տեղափոխուած է Սթամպուլ: Գիւղին մէջ գտնուող հայկական եկեղեցոյ ատերակ պատերէն մէկուն վրայ տակաւին գոյութիւն ունի հայերէն արձանագրութիւն: Տարիներ առաջ, գիւղացիները իրենց պապենական եկեղեցին քանդած են թրքական բանակի զինուորականներուն հրահանգով, որպէսզի, իբրեւ թէ, այդ քարերը օգտագործուին գիւղի «դպրոցը» կառուցելու» համար:

Կայ ուշագրաւ ընդհանրական մի բան, որ սրբազան տարածքների քանակական բացարձակ մեծամասնութիւնը քրիստոնէական է:

Հ- Տերսիմցի նախկին հայերը Հայադարձուելու միտումներ ունին եւ այդ բայիւն դիմելով ի՞նչ խոչընդոտներու կը հանդիպին:

Պ- Ես երբեք այդպիսի խնդիր իմ առաջ չեմ դրել, ես ուրիշ հարց կը դնէի, ի՞նչ է նշանակում հայադարձութիւն. այո կան մարդիկ, ովքեր հիմա էլ հայադարձուել են, գնացել մկրտուել են: Այս հարցն էլ իր յետեւից բերող խնդիրներ ունի. նախ եւ առաջ ընդհանրապէս Պոլսոյ պատրիարքարանը, նաեւ այլ եկեղեցիներ, մինչեւ դատարանով մկրտութեան դիմողի պաշտօնական ինքնութիւնը չվերականգնուի կամ փոխուի մկրտութիւն չեն անում: Դատարանով ու վկաներով պէտք է ներկայացնեն, որ իրենց նախնիները բռնի իսլամացել են եւ հիմա իրենք ուզում են վերականգնել իրենց ինքնու-

թիւնը: Թուրքիայում սա հիմա արւում է առանց մեծ խոչընդոտի եւ կայ բաւական աւելացող ալիք ու տրամադրուածութիւն, բայց կան, օրինակ, մարդիկ, ովքեր Տերսիմի որեւէ գիւղում են ծնուել, պիտի գնան դատարանով ապացուցեն, սա դժուար մի բան է՝ վկաներ տանել, ծախս է պէտք: Գնում են, ուզում են առանց դատարանի փաստաթղթի մկրտուեն, հայ առաքելական եկեղեցին այս դէպքերում չի մկրտում, ո՛չ թէ որովհետեւ օրէնքն է խանգարում, այլ որովհետեւ տազնապ ունի, որ իրեն կը մեղադրեն՝ մարդկանց իսլամից քրիստոնէայ դարձնելու համար: Փոխարէնը սա անում է աւետարանական եկեղեցին եւ այս մկրտուածների մեծ մասը իրականում մկրտուած է աւետարանական եկեղեցում, բայց սա էլ էական դեր չի խաղում, քանի որ ո՛չ մկրտուածները գիտեն աւետարանական կամ առաքելական եկեղեցու հաւատքի կամ դաւանանքի տարբերութիւնը, ո՛չ էլ դա մարդկանց ինքնութեան հարցում ինչ որ էական դեր է խաղում, քանի որ այդ մկրտութեան վկայականում գրւում է ուղղակի քրիստոնէայ,

Այս էջը կը հովանաւորեն Ս. Է. Ս. Անթր. Ե. Սիկ. Կարդգէս Ե. Դզաւալի Օսմէան



ARZ

fine foods

the essence of
mediterranean gourmet

fine mediterranean prepared foods
always ready...
... even when you're not



don't forget to pick-up any of our fine dips;
always fresh, always delicious.

416 755 5084

1909 Lawrence Avenue East
Scarborough, Ontario M1R 2Y6



Հայերու եւ այլեիներու սրբավայր Հալոտրի գիւղի Ս. Կարապետ վանքը



Հալոտրի վանքը հոս կը գտնուէր մինչեւ 1936, երբ թրքական բանակը թնդանօթներով գետնին հաւասարեցուց զայն



Հալոտրի գիւղի ատերակներուն մէջ աչսօր չորս ընտանիք կ'ապրի. որոնցմէ մէկը այլեւիացած հայ ընտանիք



1938-ի Տերսիմի ապստամբութեան ընթացքին հայ եւ այլեի բնակչութիւն ունեցող Հալոտրի գիւղի տեղահանութիւնը: Գիւղացիներու մեծամասնութիւնը թրքական բանակին կողմէ գնդակահարուեցաւ

լինի դա հայ առաքելական եկեղեցու մկրտութիւն, լինի դա աւետարանական, իսկ այդ բառը բաւական է ինքնութիւնը վերականգնող մարդու համար՝ եթէ այնտեղ գրուած է քրիստոնեայ, իր պատկերացմամբ, ըմբռնմամբ եւ ընկալմամբ՝ ինքը հայ է:

Այլ խնդիր կայ՝ թէ Թուրքիայում հայութիւնը ի՞նչ բան է. Թուրքիայում հայութիւնը նախ եւ առաջ այսօր Սթամպուլում ապրող հայերն են: Ինչպէ՞ս են Սթամպուլում ապրող հայերը այս երեւոյթին վերաբերում՝ այլ խնդիր է:

Շատ տեղերում ինձ պատմում են, (Տերսիմը միակ դէպքը չի) որ նրանք իրենց իբրեւ հայ չեն ընդունում, իսկ իրենք աշխարհում ուրիշ տեղ, փորձ էլ չունեն՝ իրենց հայութիւնը ներկայացնելու: Երեւոյթը ինքը նոր լինելով, բերում է նոր մօտեցումներ եւ նոր ձեւաւորումներ են յառաջանում իր շուրջ: Ինչո՞ւ սթամպուլահայերը նրանց հայ չեն ընկալում եւ չեն ընդունում՝ այլ խօսակցութիւն է:

Նշեմ, որ Տերսիմում հայկական եկեղեցի չկայ. ենթադրենք այս մարդիկ որեւէ տեղ գնացին ու մկրտուեցին վերագարձան Տերսիմ, ասացին՝ ես հայ քրիստոնեայ եմ, ի՞նչ պիտի փոխուի իրենց կեանքում, երբ չյաճախեն եկեղեցի: Չգիտեմ, կա՞մ պէտք է մեկուսանան, եթէ արել են այդ քայլը, իրենց հայութիւնը հաստատող վարկ պիտի լինի, կա՞մ չպիտի լինի, հարց է: Սրանք բոլորը հարցեր են, որոնք յառաջանում են այդ մարդկանց մէջ:

Հ- Իրենց ինքնութիւնը արդէն վերականգնած տերսիմցիները ի՞նչ խոչընդոտներու կրնան հանդիպիլ:

Պ- Նախ, առայժմ երեւոյթը մասսայական չէ, երկրորդ՝ կան մարդիկ, որոնք խօսում են իրենց հայ ինքնութեան մասին եւ սկսում են դա արտայայտել խօսքով, վարքով, իսկ եթէ ուզենայ հայկական մի բան կազմակերպի՝ ի՞նչ պատմի, ի՞նչ անի: Լեզու չգիտեն, մշակութային կեանքի առանձնայատ-

Այս էջը կը հովանաւորեն Արմն, Արլու, Վահագն եւ Պուպինա Վոլայրեան

Pharmacie Nelly, Tania Kanou et Seta Marachian

AFFILIÉE À



JEAN COUTU

SETA MARACHIAN

Pharmacienne-Propriétaire

Հայերէն կը խօսինք



5855, boul. Gouin ouest

Cartierville (Québec) H4J 1E5

Tél.: (514) 334-8641 • Fax: (514) 334-6909

Հայ մասնագետներ տրամադրուած՝ հոգալու ձեր բոլոր կարիքները
Կը պատրաստենք ձեր բոլոր դեղագիրները, նոյնիսկ ուրիշ դեղարաններէ
Տարեցներու համար յատուկ 10% զեղչ (բացառեալ դեղերը)

Vaccination contre la grippe saisonnière Service professionnel et personnalisé

- **Infirmière sur place tous les mercredis**
- **Conseils sur le diabète:** lecteur de glycémie, alimentation, exercice
- **Analyses sanguines:** bilan lipidique complet (cholestérol), glycémie (taux de sucre)
- **Injections et vaccinations**
- **Vérification de la tension artérielle, moniteur de tension artérielle (24h)**
- **Conseils sur les produits orthopédiques** (cannes, marchettes)

**Livraison et cueillette de prescription gratuites
de Montréal et Laval**

Ouvert 7 jours/7 soirs de 9h à 22h

NELLY, TANIA KANOU

Pharmaciennes-Propriétaires

237, Côte Vertu, MTL
Tél.: (514) 331-2134

740, Côte Vertu, MTL
Tél.: (514) 744-2555

475, Côte Vertu, MTL
Tél.: (514) 744-0203



Խոզըքոյ գիւղի Միրաքեան տոհմի այս ընտանիքը կ'ապրի Գերմանիա: Ամառները կը վերադառնան հայրենի Տերսիմ: Ըստ կարգ մը պատմաբաններու, Միրաքեանները հայկական ազնուազարմ Մամիկոնեան նախարարական տոհմի շատաիղներն են: Կեդրոնը՝ ազգագրագէտ Խառատեան

կուժիւններ չգիտեն, պատմութիւն չգիտեն, նրանցից շատ շատերը նոր-նոր իմացել են, որ ընդհանրապէս Հայաստան գոյութիւն ունի:

Նրանց մի զգալի մասը 1938-ի քեմալական ուժերու կողմից տեղի ունեցած ջարդերի եւ 93 -94 Տերսիմի բնակավայրերի աւերման հետեւանքով յայտնուել է Գերմանիայում եւ Միամպուլում, ուր «բարեւ, ես հայ եմ» ասելը հայկական համայնքում ոչինչ ասել դեռ չի նշանակում: Սրան նախորդել էր քսան երեսուն տարի շարունակ Սասունում հատուածաբար ապրած եւ քրտախօս հայերի մուտքը Միամպուլ, որ ինքնին դեռ գործընթաց է զանազան ձեւախեղումներով եւ նոր տազնապներով, ազգային կեանքին մասնակցելու նրանց ցանկութիւնը, կամ էլ ցանկութիւնը մերժելու արդէն պոլսահայերի ձեւաւորուած վերաբերմունքը:

Պոլիսի հայկական համայնքը նաեւ տազնապ ունի, որ Տերսիմում վերաքրիստոնէացող հայը, կարող է ինչ որ չափով Պոլսահայ համայնքը հարուածի տակ դնել: Այդ բոլորը արդէն արտացոլում է Տերսիմում ապրողների վրայ եւ այնտեղ ապրողը դեռ մի քանի անգամ պէտք է մտածի, թէ իր կեանքում ինչեր կարող են առաջանալ այս փոփոխութիւններից:

Հ- Մկրտուող հայերու նպատակը ինքնուրուի վերականգնումն է, թէ այլ նպատակներ կը հետապնդեն:

Պ- Մի քանի խնդիր կայ. ալեւիացած հայը, որ ալեւիացած էր, որպէսզի չտարբերուի, քանի որ հայ լինելով տարբերում էր, հիմա ալեւի լինելով է տարբերում, եւ ալեւի լինելով ու տարբերուելով շարունակում է որոշ մասով մեկուսի մնալ թուրքական իրականութիւնից: Ուրեմն ինք դեռ երկար մտածում է՝ ալեւիզմը իր համար հարազատ բան է, մնա՞յ ալեւի, թէ սիւննի իսլամ դառնայ, որպէսզի չտարբերուի:

Նպատակների մէջ ես չեմ բացառում, որ մկրտուող հայը եւրոպաները գնալով ալեւի շատ հնարաւորութիւն կարող է ունենալ, որպէս հետապնդման ենթակայ կերպար ներկայանալ եւ շահել կեցութեան իրաւունք ու հնարաւորութիւն, քան որպէս ալեւի գնացողը, որովհետեւ սրանից բխում են

շատ որովհետեւներ: Եւրոպական մշակոյթը տարբեր վերաբերմունք ունի նաեւ ո՛չ թէ թուրքիայի եւ ո՛չ միայն թուրքերի, այլեւ թուրքիայից գնացող առանձին հատուածների վերաբերեալ եւ նրանց հետագայ թրքական ինթելեկտուալ-մարկման կամ եւրոպական ինթելեկտուալ՝ այսինքն, ալեւից վերաքրիստոնէացած հայը եւրոպայում միշտ եւրոպական քրիստոնէութեան հետ մերձենալու գոնէ տեսական աւելի մեծ յոյս կամ փոթենցիալ հնարաւորութիւն կը ներշնչի՝ ներգաղթեալների նկատմամբ քաղաքականութիւնը իրականացնողներին:

Վերջում ասեմ, որ Տերսիմում ինքնութեան մեծ փնտռուք կայ, թէ ով ի՞նչ է համարում շատ բարդ երեւոյթ է, ինքնութեան ընդհանրական մի անուն չկայ, բայց այսօր կարծէք ամէնից ալեւի բնորոշ եւ այս խմբի ինքնութիւնը ալեւի կոնկրետ ներկայացնող թերմինը (եզրոյթը) դառնում է աշխարհագրական թերմին՝ տերսիմցի: Ուրեմն, եթէ մենք խօսում ենք տերսիմցիների մասին, տերսիմցի ինքնութիւնը կրող մարդկանցից կարող ենք հանել Տերսիմում ապրող թուրք էթնիկ միաւորի ներկայացուցիչներ, որոնք որոշ չափով կան, ոչ շատ, հիմնականում գաւառական կեդրոններում են եւ պետական պաշտօնեաներ են: Ի հարկէ, զօրքի մէջ շատ կայ, բայց զօրքը տեղի ինքնութեան հարցեր չի վիճարկում, ուրեմն կան նաեւ որոշ չափով սիւննի քրտեր, քուրմանճիախօս քրտեր, որոնք տերսիմցիների ինքնութիւնը չեն կիսում: Այսպէս թէ այնպէս մենք կարող ենք ասել տերսիմցի բառը տուեալ դէպքում, եթէ պայմանական ինքնութեան մի թերմին օգտագործենք, որպէս միաւոր ներառում է իր մէջ Տերսիմում ապրող զագախօս ալեւիներին ու ալեւիացած հայերին այ սա տերսիմցին է, որ ոչ մի թերմինով համահաւաք մի բառով չի ներկայացնում ինքնիրեն եւ յաւերժ փնտռուք ունի այդ ինքնութեան:

Հարցազոյցը վարեց՝
Նայիրի Մկրտիչեան- Տաղեան

Այս էջը կը հովանաւորեն Ս. եւ Ս. Արքայ եւ Անիւս Գարրիէլեան

CARRERA & CARRERA

M A D R I D



WWW.CARRERAYCARRERA.COM



416 227-9200
Bayview Village Shopping Centre

Արցախի վերաբնակեցումը մեր բոլորի սրբազան առաքելությունն է

Ծ.Խ.- Արցախի ազատագրումը տարածքներու վերաբնակեցման հարցին մասին յաճախ անդրադարձած ենք մեր թերթի էջերով: Վերաբնակեցման հարցը մեր ազգային անվտանգության հետ շաղկապուած գերխնդիր է այսօր: «Հորիզոն»-ի Արցախի աշխատակից լրագրող Բելլա Լալայեանի կողմէ վերաբնակեցման չորս գիւղերու մասին ստորեւ ներկայացուած տեղեկատուութիւնը խիստ շահեկան է: Նշենք, որ յօդուածին մէջ նշուած գիւղերէն երկուքին մասին «Հորիզոն» անդրադարձած է 2002-ի եւ 2003-ի բացառիկ թիւերուն մէջ: 2003-ին, Հայկաւանի մէջ բնակութիւն հաստատած էին 50 հոգի (12 ընտանիք), այսօր այդ թիւը դարձած է 61 հոգի (11 ընտանիք), իսկ 2002-ին Եղեգնուտի բնակչութեան թիւը կը կազմէր 167 հոգի (34 ընտանիք), որ այսօր բարձրացած է 220-ի (47 ընտանիք):

Կովսական Տարագիր սուրիահայերի նոր բնօրրանը

Մեքենան սլանում է ասֆալթապատ ու ոլոր-մոլոր ճանապարհով դէպի Բերձոր՝ Քաշաթաղի շրջկեդրոն: Այստեղից արդէն Քաշաթաղը բաժանուած է երկու մասի՝ հիւսիսային, լեռնային Քաշաթաղի եւ հարաւային՝ նախալեռնային եւ հարթավայրային Քաշաթաղի: Այս անգամ իմ ուղղութիւնը դէպի հարաւային Քաշաթաղի Կովսական բնակավայրն է: Ծանապարհը երկար է, ուղեղում դասաւորելու մտքերը շատ:

Ինչպէս եղաւ, որ Ք.Ա. 7-րդ դարից այստեղ հաստատուած հայը, գլորելով ժամանակը դէպի պատմութեան գիրկը, անհետացաւ նրա էջերից: Ինչպէս եղաւ, որ 4-րդ դարից մինչեւ 18-րդ դարը՝ Արցախը, ենթարկուելով ու դիմակայելով քոչուոր ցեղերի, պարսիկների արաբների, մոնղոլների ասպատակութիւններին ու կործանարար արշաւանքներին, պահպանեց իր դիմագիծը, մշակոյթը, հաւատարիմ մնաց իր կրօնին: Եւ ինչպէս եղաւ, որ խաղաղ ժամանակներում, շինարար հայը անկոչ հիւրի կարգավիճակում յայտնուեց իր օճախում, կուչ ու մուչ եկած, անօթեւան, անցանկալի կենտրոնի նման հետզհետէ աւելի փոքր անկիւն զբաղեցնելով իր տանը:

Մտքիս կծիկը քանդուել էր ու մեքենայի հետ գլորուում էր առաջ, ամէն մի ոլորանի հետ բերելով նոր յիշողութիւն:

Տեսնես ինչ ապրումներով պիտի այս ճամբաներով անցնէին այս հողերը ազատագրած մեր մարտիկները, որոնք բաղձալի երազանքը չտեսած, վայր դրեցին իրենց գլուխները, ուժքեր 70 երկար ու ձիգ տարիների գերութիւնից ազատագրեցին հայի շունչին ու խօսքին կարօտ հողերը:

Մեքենան առաջ է գնում, իսկ ճանապարհը կարծես չի կրճատուում: Տարածութիւնը թուում էր անձայրածիր... Եւ այս ամէնը գաւթել էին օտարները, հայրենիք չունեցող, ընդամէնը 20-րդ դարի սկզբին ձեւաւորուած մի պետութեան քաղաքացիներ, ուժքեր իրենց ատրպէյճանցիներ են անուանում:

Այսօր, այստեղ նորից հայն է ապրում, տանուտէրի իրաւունքով է ապրում, հողի հետ հաշտ ու խաղաղ, սիրով ու գորովանքով: Հեռուում երեւացող տրակտորը ջանասիրաբար հերկում էր դաշտը, իր հետեւից «նկարելով» հաւասար ու հարթ գծեր:

«Ժիրայրն է: Օրուայ որ ժամին էստեղով անցնէք, ինքը դաշտում աշխատում է», տեղեկացնում է իմ ուղեկիցը՝ Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավարը:

Մենք ստիպուած էինք կտրել ժիրայրին աշխատանքից, որպէսզի մի քիչ զրուցենք, թէ որտեղից է, ինչպէս եղաւ, որ տեղափոխուեց Կովսական:

«Երբ հայրենքն է կանչում, մտածել-չմտածելու հարց չկայ: Որոշում ես ու գալիս», - հանգիստ ձայնով, մի քիչ էլ իմ հարցից զարմացած ասում է Սուրբիայի նախկին բնակիչ ժիրայր Տօնապետեանը:

«Այնտեղ ունէի ամէն ինչ, տուն, աշխատանք, բայց լեզու չունէիք, ոչ էլ հող: Վաստակս էլ լաւ էր, բայց եկայ, որովհետեւ քո հողի վրայ ապրելը աւելի պինդ է, աւելի լաւ», - շարունակում է զրոյցը Քաշաթաղի շրջանի նոր բնակիչը:

Ժիրայրը ընտանիքի հետ Կովսական է տեղափոխուել 2009 թուականի վերջին: Տեղաւորուել են երկյարկանի մի տան մէջ, որի նորոգման համար Արցախի իշխանութիւնները տրամադրել են որոշակի շինանիւթ՝ թիթեղ, պատուհաններ, դռներ: «Մնացածն էլ մենք կ'անենք, պարզապէս դաշտում գործը շատ է, չեմ հասցնում», - ասում է բազմազաւակ ընտանիքի հայրը:

Եօթ երեխաներից մեծը 16 տարեկան է, փոքրը 8 տարեկան: Տղաների հայրը հպարտութեամբ է խօսում այն մասին, որ իր զաւակները պիտի ծառայեն հայոց բանակում՝ հայրենիքի պաշտպանութեան գործում իրենց փոքրիկ ներդրումը կ'ունենան:

Իր մեծ ընտանիքի համար ժիրայրը ապագան Կովսականում ջերմ գոյներով է պատկերում՝ «Միայն այն, որ հայրենիքում ես, լաւ է: Այստեղ ամէն ինչը կայ նորմալ ապրելու համար, ուղղակի ծոյլ մարդու տեղ չի»: Հէնց առաջին տարում ժիրայրը ցանել է 25 հեքթար ցորեն, իսկ այսօր արդէն նրա ցանքի տարածութիւնները հասել են 100 հեքթարի: Սա վերջնագիծը չէ, յաջորդ տարի եռանդուն հողագործը մտադիր է նորից ընդլայնել հողատարածութիւնները, ցորենից բացի նաեւ մշակել հնդկացորեն, արեւածաղիկ, սոյա, մանաւանդ, որ ցանքատարածութիւնների մշակութիւնը այս տարի մի քանի անգամ հեշտացել է: Տեղի հողամշակները նոր սարք

Այս էջը կը հովանաւորեն Ս. Ե. Մ. Յակոբ Եւ Անահիթ Մէր Պաշտպանութեան

են կիրառման մէջ դրել, որի հեղինակները հէնց իրենք՝ հողագործներն են: Սարքի որոշ մասեր ունէին ձեռքի տակ, պակասն էլ ներկրել են Սուրիայից: Ստեղծագործ հողամշակները նոյնիսկ հաշուի են առել այն, որ հնարաւոր լինի սարքը ամրակցել Արցախեան դաշտերում գործարկուող ուսուսական արտադրութեան գիւղտեխնիկային: Այսպիսով հնարաւոր եղաւ հողի մշակման երեք միջոցառում կատարել միանգամից:

«Արդէն ունեմ սեփական տրակտոր, նաեւ նոր սարքից: Առայժմ այսքանը ինձ բաւարարում է, պէտք եղած դէպքում օգնում եմ նաեւ իմ հարեւան հողագործներին», - ասում է Ժիրայրը:


Տրակտորը ձեռք է բերել արտօնեալ վարկի միջոցով եւ ընդամէնը մէկ տարում արդէն հասցրել է լրիւ մարել վարկը: Ընտանիքի եկամուտն առայժմ միայն ցանքատարածութիւնների մշակութիւնն է: Սակայն հեռանկարում ուրուագծուած է անասնապահութիւնը: «Այս մասին խօսելը դեռ շուտ է: Ուզում եմ դաշտում հնարաւոր ամէն ինչ անեմ, յետոյ անցնեմ անասնապահութեանը, բայց ասեմ, որ դա այնքան էլ հեռու ծրագիր չէ», - վստահեցնում է Ժիրայրը:

Քաղաքական հարցերը եռանդուն հողամշակի, ինչպէս ասում են «ականջը չեն տաքացնում»: «Ինչ բանակցութիւն, ինչ բան... ով է խօսում հող ետ տալու մասին, էդպիսի բան չի լինում. ինչու պիտի ետ տանք, ում պիտի տանք...», - ազատագրուած տարածքների ճակատագրի մասին հարցս մի ամբողջ հարցերի շարան առաջացրեց վերջապէս իր հայրենիքը գտած, երկար տարիներ օտար ափերում դեգերած հայի մօտ: Ինձ թուաց, թէ իմ հարցից յետոյ նա այլեւս չի ուզում խօսել հետս, կասկածելով նոյնիսկ իրեն ազգակից լինելուս մէջ: «Սա իմ հայրենիքն է, իմ հողը, եթէ ես դրանում համոզուած չլինէի, նոյնիսկ ամսական մէկ միլիոն տոլար էլ տային, չէի գալ այստեղ: Իսկ հայրենիքը ուրիշին նուէր չեն տալիս», - վրդովուեց գրուցակիցս:

«Աշխարհի բոլոր ծայրերում, ուր էլ ապրում է հայը, յարգուած է, բայց բոլոր տեղերում էլ նա հիւր է: Մենք պիտի մտածենք մեր հողերը, մեր տարածքները կենդանացնելու, մեր երկիրը հզօրացնելու համար: Մենք դրախտ ունենք, արժէքը չգիտենք», - արդէն ոչ թէ իմ հարցերին էր պատասխանում



Կովասականի ուսումնարանը



Գամիշլիցի Ժիրայրը այժմ Կովասականի բնակիչ է

արմատներով տարօնցի Ժիրայրը, այլ աւելի շատ տարիներով իրեն տանջող մտքերն էր բարձրաձայնում:

Իր վերջնական հանգրուանը, նոր հասցէն Ժիրայրի համար հարաւային Քաշաթաղի Կովասական քաղաքն է: Այն հիմնադրուել է 1997 թուականին՝ սկզբում որպէս գիւղ, յետոյ զարգացման չափանիշներին համապատասխան ստացաւ քաղաքի կարգավիճակ:

Դժուար տարիներն՝ առանց ելեկտրականութեան, որ աւերուել էր պատերազմի տարիներին, առանց ջրի, հիւանդանոցի, դպրոցի, առանց հեռահաղորդակցութեան հնարաւորութեան, արդէն ետեւում են: Այսօր քաղաքը կայացել է իր բոլոր ենթակառուցուածքներով: Խնդիր է մնում հիւանդանոցի վերանորոգումը, որը կառավարութիւնը խոստացել է իրականացնել մօտ ժամանակները: Իսկ վաղուց սպասուած մանկապարտէզի շէնքի կառուցման աշխատանքները սկսուած են: Ֆինանսաւորողը գործադիր իշխանութիւնն է:

Կովասականն ունի 701 բնակիչ (2009-ին՝ 475): Միայն 2011 թուականին քաղաքն ընդունել է քսանհինգ նոր երիտասարդ ընտանիք: Պատրաստուած է ընդունել եւս վեց ընտանիքների՝ Սուրիայից: Շէնքը, որտեղից նրանց բնակարաններ պիտի յատկացուեն, վերանորոգման ընթացքում է: Միջոցները տրամադրում է «Թիւֆէնկեան» հիմնադրամը: Կայ նաեւ Սուրիայից պատրաստի տնակների ներկրման պետական ծրագիր՝ ընդհանուր առմամբ 120 հատ:

Շրջկեդրոնից եւ մայրաքաղաքից ահագին հեռաւորութիւնն եւս խնդիր չէ հարաւային թեւի բնակիչների համար: Շաբաթը երկու անգամ Կովասականից հաստատուած են երթուղիներ դէպի Ստեփանակերտ, Բերձոր, Կապան եւ Երեւան:

Բնակիչների մօտ 50 տոկոսը աշխատում է ենթակառուցաներում, բացի դրանից եկամուտների հիմնական աղբիւր է հողի մշակութիւնը: Աննկարագրելի ու անծայրածիր դաշտերում ցորենի, եգիպտացորենի, արեւածաղկի, հնդկացորենի

Այս էջը կը հովանաւորեն Ա. եւ Ս. Մեյրբոսու Եւ Օմիկ Գաւիթ-Ճեան

եւ այլ բոյսերի մշակութեամբ զբաղուելու հնարաւորութիւնները նախանձեղի են: Գործում են արտօնեալ գիւղատնտեսական վարկեր՝ ցած տոկոսով: Մշտական խմելու եւ ոռոգման ջուր, մինչեւ 2000 քառ. մետր տնամերձ, որի մշակումը ամբողջովին հոգում է տանտիրոջ սեղանը բանջարեղէնով ապահովելու հարցը: Պէտք է ասել, որ հարաւային Քաշաթաղում ձմեռը շատ կարճատեւ ու բաւականին մեղմ է լինում, ինչը հիանալի պայման է այստեղ անասնապահութեան զարգացման համար: Տեղացիները զբաղում են նաեւ մեղուաբուծութեամբ: Հիւանալի են հնարաւորութիւնները նաեւ ձկնաբուծութեան զարգացման համար: Քաշաթաղի լեռներից է սկիզբ առնում Արցախի ջրային պաշարների 80 տոկոսը: Հարաւային մասում Քաշաթաղը Իրանից զատում է Արաքս գետը: Այս գետի վրայ գտնուող հսկայական ջրամբարը մօտ ապագայում կը վերածուի հանգստի գօտու, ինչը զբօսաշրջութեան զարգացման հեռանկար է, նոր աշխատատեղերի եւ եկամուտների նոր աղբիւր:

Քաշաթաղի նկարագիրն ամբողջացնելու համար պիտի նշենք, որ 3404 քառ. քմ. (1313 քառ. մղոն) ընդհանուր մակերեսով այս շրջանի վերաբնակեցումը ռազմական նշանակութիւն ունի Արցախի համար:

Ամէնից առաջ՝ Արցախը Երեւանի հետ կապող հիմնական ճանապարհն անցնում է շրջկեդրոն Բերձորով, որը ստացել է նաեւ «Կեանքի ճանապարհ» անունը:

Հայաստանի հետ կապող մնացած երեք ճանապարհներից երկուսը նոյնպէս անցնում են Քաշաթաղի շրջանով՝ Ղափան-Ջանգելիան-Ջերբախլի, Մեղրի-Միջնաւան-Հոռադիգ:

Ջարգացած ու վերաբնակեցուած Քաշաթաղը ամուր հիմք է բանակցային դիրքորոշման հարցում: Այն փաստացի հիմք կը լինի, ինչը դժուար կը լինի փոխել:

Քաշաթաղի գիւղատնտեսական հարուստ տարածքը՝ Արցախի ինքնաբաւութեան հնարաւորութիւնն է:

Անդրադառնանք որոշ տուեալների:

Վաւերացուած տուեալների համաձայն, 1994-ին Քաշաթաղ են եկել 24 000 բնակիչ: Մի մասը ընդամէնը կարճատեւ դադար է առել այստեղ եւ հեռացել: Հաստատուած բնակիչների առաւելագոյն թուաքանակը գրանցուել է 2003-ին՝ 13 000 հոգի: 2008 թուականին շրջանում գրանցուել է 8000 բնակիչ:

Սա մի կողմից վերաբնակեցման քաղաքականութեան մէջ ԼՂՀ իշխանութիւնների անհետեւողականութեան, միւս կողմից որոշ ղեկավարների ֆինանսական անպատասխանատուութեան ու խարդախութեան հետեւանքն է: Հնարաւոր չէ նաեւ անտեսել այն հանգամանքը, որ ծրագիրը ընդամէնը ֆինանսական օժանդակ հնարաւորութիւն դարձաւ Հարաւային Հայաստանի բնակիչների համար: Շրջանին մօտ գտնուելը նրանք օգտագործեցին ժամանակաւոր այստեղ հաստատուելու, վերաբնակչի համար նախատեսուած բոլոր արտօնութիւններից օգտուելու համար՝ այդպէս էլ չդառնալով հիմնական բնակիչ: Այս բացթողումը վերացնելու համար վերջին տարիներին ԼՂՀ իշխանութիւնները մշակեցին ծրագրի իրականացման նոր մօտեցումներ: Այսօր արդէն Քաշաթաղ են գալիս միայն այստեղ մշտական բնակութիւն հաստատելու մտադրութիւն ունեցող մարդիկ:

2011 թուականին Քաշաթաղի շրջանն ընդունել է 230 նոր ընտանիք՝ 800 բնակիչով: Այսօրուայ դրութեամբ շրջանն ունի մօտ 10 000 բնակիչ:

1994-ից յետոյ ձեւաւորուած 94 համայնքի փոխարէն

շրջանն այսօր ունի 53 համայնք՝ ապահովուած ելեկտրակա-նութեամբ ու ջրով: Բոլոր համայնքներում հիմնովին լուծուած է դպրոցների հարցը: Բուժապասարկման խնդիրը եւս շուտով կը լուծուի: Բացի տեղերում բուժկէտերի կառուցման, գործող բուժհիմնարկները սարքաւորումներով համալրման հարցից, մի շարք համայնքներ ԼՂՀ նախագահի կողմից արժանացել են նուէրի՝ շտապ օգնութեան մեքենայի:

Շրջանի վերաբնակեցման ծրագրին անցած տարիների ընթացքում աջակցել են մի շարք կազմակերպութիւններ՝ տրամադրելով ֆինանսական եւ աշխատանքային օգնութիւն: Դպրոցների ու բուժկէտերի, բնակելի տների վերանորոգում, մանկապարտէզների կառուցում, բուժասարքաւորումներ, համակարգիչներ, գրքեր, հագուստ, խոշոր եղջերաւոր անասունների տրամադրում. սրանք տարբեր կազմակերպութիւնների կողմից Քաշաթաղում իրականացրած մարդասիրական միջոցառումներն են: Այս շրջանը աշխարհի տարբեր անկիւններում գտնուող հայերի համար հայրենիքի հանդէպ ունեցած զգացումների դրսեւորման միջոց է...

Հայկաւան Ազատամարտիկ Հայկի գիւղը

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն... առաջին հայացքից տարբերութիւնն ընդամէնը կարգավիճակի կամ մէկ բառի մէջ է, սակայն իրականում 1994-ին ազատագրուած Արցախը նոր կարգավիճակն իր արտացոլումը գտաւ արցախցու կեանքի բոլոր բնագաւառներում: Ամենապարզ ու տեսանելի փոփոխութիւնն նրա աշխարհագրական սահմանների եւ Արցախի քաղաքական քարտէսի վրա միայն հայկական անուններով նշմարուած գիւղերի մէջ է, որոնց շարքում է նաեւ Հայկաւանը:

Ինձորեակ, Արեւշատ, Ջրաբերդ... Հագրութի հարաւային մասի երեք հայկական գիւղերի մէջ էր խցկուել ատրպէյ-ճանական փոքրիկ Սիրիկ գիւղը: Սա էր ատրպէյճանցիների քաղաքական խորամանկութիւնը: Դարան մտնել հարեւանութեամբ, որ հայի անասունը գողանան կամ բանջարանոց թալանեն, կամ հայի աղջկան առեւանգեն, իսկ եթէ հայուհին չհնազանդի, հանգիստ սպանեն ու հետքը կորցնեն: Այդպէս էլ Սիրիկը. մեխի նման խցկուել էր երեք հայկական գիւղերի մէջտեղ եւ պարբերաբար վնաս էր հասցնում հարեւաններին: Առաջին լուրջ բախումը այստեղ ատրպէյճանցիների հետ եղել է 1919 թուականին: Հայի արեան ծարաւ թուրքերը վառել էին Արեւշատ գիւղը: Բայց շինարար ու խաղաղասէր հայի համբերութիւնը սպառուեց ու կրակը լափեց արիւնարբու ու սոված գայլերի ատրպէյճանական բոյնը: Սիրիկը 1919-ին այդպէս դատարկուեց:

Սակայն ժամանակը հոսեց ու կրկին կենդանացաւ թուրքի բոյնը: Երկրորդ անգամ դարանակալած թշնամու հարեւանութիւնից ազատուեցին գոյապայքարի տարիներին, իսկ 1994-ին արդէն հայկական անունով այս գիւղում՝ Հայկաւանում, բնակութիւն հաստատեց առաջին հայ ընտանիքը: Գիւղը կոչուել է 20-րդ դարի սկզբներին այս ձորակում քաջ յայտնի հրամանատար Հայկ Բաղասեանի անունով, ում սպանել էր դարանակալած թուրքը: Հետագայում նրա թուրքի պատիւ իր պապիկի կոչուեց Հայկ, ով նոյնպէս ընկաւ թուրքի ձեռքից արդէն արցախեան ազատամարտի տարիներին:

Այս էջը կը հոսի ամառը Մ. Եւ Մ. Դոյնաւ եւ Մարո Գալուստեան

«Այս տարածքի վերաբնակեցումը ռազմավարական նշանակություն ունի Արցախի համար; Սահմանակից գիւղերի կայացումն ամէնից առաջ ամրապնդում է սահմանները: Բացի դրանից գիւղատնտեսութեան, մասնաւորապէս, անասնապահութեան համար հիանալի են պայմանները»,- պատմում է Հայկի գերդաստանի զաւակ՝ պատգամաւոր Վահան Բաղասեանը, (նոյնպէս ազատամարտիկ, 1994-95 եւ 1999-2001 Հազրութի վարչակազմի ղեկավար), ում նախաձեռնութեամբ սկսուեց Հայկաւանի վերաբնակեցումը:

Սկզբնական շրջանում վերաբնակեցման ծրագիրը հետեւողական ու կազմակերպուած բնոյթ էր կրում: Միանգամից 20 ընտանիքներ տեղափոխուեցին Հայկաւան, որտեղ տների մի մասը վերանորոգուել ու կառուցուել էր ՀՅԴ «Արցախ» ֆոնտի շնորհիւ: 1995-ի սկզբին Հայաստանի նախագահ Լ.Տ Պետրոսեանի հրամանով դադարեցուեց ՀՅԴ-ի գործունէութիւնը, որը պատճառ եղաւ 80 բնակիչ ունեցող Հայկաւանում տների վերակառուցման ծրագրի ընդհատմանը: 2000 թուականին բնակիչներին թիւը Հայկաւանում, ըստ Վահան Բաղասեանի, աւելի քան հարիւր էր: Կառավարութեան օգնութիւնը վերաբնակիչներին կրում էր տեղափոխման ծախսերի հատուցման, մանր եղջերաւոր անասունների, ընտանի թռչունների տրամադրման բնոյթ:

Տիգրան Գրիգորեանի ընտանիքը Հայկաւանում բնակութիւն հաստատած երկրորդն էր: «Համարեա բոլորս երկրաշարժի գոտուց ենք: Եկել ենք, քանի որ գոնէ տուն, անասուն տալիս էին, իսկ դա մեզ համար մեծ բան էր»,- պատմում է Տիգրանը, ով այն ժամանակ ունէր ընդամէնը մէկ երեխայ: Բնակութեան առաջին տարիները, որոնք բաւականին լուրջ փորձութիւն եղան երիտասարդ ընտանիքի համար, արդէն ետեւում են: «Առաջին երեք տարիները չունէինք լոյս, ջուր: Չկար հեռախօսից օգտուելու հնարաւորութիւն: Այդպէս գոյատեւեցինք երեք տարի, որից յետոյ վերակազմուեցին ելեկտրագծերը: Ջրի հարցը նոյնպէս լուծուած է մեր իսկ ջանքերով: Հեռախօսակապն էլ կայ»,- պատմում է արդէն 7 զաւակների հայրը՝ Տիգրանը: Մեծ աղջիկը արդէն ամուսնացել է եւ ապրում է Հայկաւանում: Թոռնիկի են սպասում: Փոքրի մի տարին նոր պիտի բոլորի: Հէնց այս փոքրիկի ծնուելու առթիւ բազմազաւակ ընտանիքը կառավարութիւնից նուէր ստացաւ՝ բոլոր յարմարութիւններով նորակառոյց տան բանալիները, որ գտնուում է հին տան հարեւանութեամբ: Այս նուէրը նրանց համար նաեւ հպարտանալու առիթ է՝ «պետութիւնը չի մոռացել մեզ», ասում է Տիգրանը: «Դժգոհելու առիթ չունեմ, ետլա ենք գնում»,- մեծահոգաբար շարունակում է Տիգրանը, ում հետ զրոյցի ընթացքում պարզեցինք, որ ունեցած երեք կովերից մէկը մահացել է ծնելու ժամանակ, միւսին դայլերն են կերել, երրորդն էլ ծախել են որոշ հոգսերից ազատուելու համար: Նորից անասուն գնելու միջոցներ Տիգրանը չունի, նաեւ վախենում է, որ բախտն այս անգամ էլ չար կատակ կ'անի: Տան սննդի պաշարները լրացնում է տնամերձ դաշտը մշակելու շնորհիւ: Մրգատու ծառերի առատութիւնն եւս որոշակիօրէն թեթեւացնում է հոգսերը:

Ի հակադրութիւն Տիգրանի, միւս զրուցակցիս՝ Յակոբ Մովսիսեանի դժգոհութիւնը սահման չունէր՝ «այսքան տարիներից յետոյ, ինչու պիտի ես յարմար առիթի սպասեմ, որ թողնեմ գնամ»: 1995 թուականից այստեղ հիմնաւորուած, այդ տարիներին Հայկաւանում շրջվարչակազմի ղեկավարի լիազօր ներկայացուցչի խանդավառութիւնը մարել է: «Սկզբնական շրջանում վերաբնակեցման ծրագիրը կազմա-



Տիգրան Գրիգորեան եւ իր ընտանիքը



Հայկաւան



Այս էջը կը հովանաւորեն Ս. եւ Ս. Քրիզամոյ եւ Ասրի Լախոյշեան

կերպուած բնոյթ էր կրում: Տարիների ընթացքում ամէն ինչ բարձրիժողի մատնուեց: Մի քանի տարին մէկ, եթէ մի դեկալաբի երես ենք տեսնում, ուրախանում ենք»- ասում է Յակոբը:

Վերջերս վեց երեխաների հայրն իր ընտանիքի հետ ստիպուած եղաւ տեղափոխուել գիւղապետարանի շէնք, քանի որ իր տան տանիքը լրիւ փլուել էր: Երեխաներից աւագը ուսանում է Երեւանում, երկուսը նախադպրոցական տարիքի են, իսկ երեքը սովորում են Հայկականի դպրոցում: Դպրոցի շէնքն, ի թիւս 5 բնակելի տների, կառուցել է «Երկիր» միութեան ԱՄՆ-ի մասնաճիւղը՝ ամերիկահայ բարերարների միջոցներով: Տարօրինակ շինարարական լուծումների արդիւնքում այն, կարելի է ասել, կրթօժանի տպաւորութիւն չի թողնում: Ներսից պատկերն աւելի տխուր էր՝ քանդուած առաստաղ ու յատակներ, խոնաւ պատեր, ջարդուած ապակիներին փոխարինած թիթեղների պատճառով մութ սենեակներ, հասարակ գրադարակների բացակայութեան պատճառով նստարաններին շարուած դռքեր, որի տպաւորութիւնից սենեակը աւելի շատ նման էր պահոցների նկուղ, քան դասասենեակների:

Դպրոցն ունի ընդամէնը ինը աշակերտ, այս տարի կրթօժանի ընդունեց եւս երկու նոր աշակերտի: «Գիւղում ունենք նախադպրոցական տարիքի 16 երեխայ: Այս պայմաններում անհնար է լինելու նրանց ուսուցումը», - մտահոգուած է դպրոցի տնօրէն Զարինէ Հայրապետեանը: «Ուսուցչական կազմը համալրուած է բարձրագոյնն աւարտած մասնագէտներով: Ունենք անհրաժեշտ գրականութիւն, դասընթացքները կազմակերպուած են ծրագրին համապատասխան, սակայն չենք վերանորոգման խիստ կարիք ունի: Չունենք նաեւ մարզարան-դահլիճ, մարզական գոյքի մասին խօսելն էլ աւելորդ է: Մի բան արէք, որ երիտասարդ ընտանիքները չթողնեն հեռանան», - դպրոցի տնօրէնի վերջին նախադասութիւնը մեղքի զգացում առաջացրեց իմ մօտ:

Այս խօսքերից նորից բորբոքուեց Յակոբը. «պիտի աշխատանք լինի, որ մնայ երիտասարդը գիւղում: Անասնաւարկերից վախենում են օգտուեն, քանի որ չգիտեն թէ ինչ միջոցներով պիտի մարեն վարկերը: Մսի եւ կաթի մթերման հնարաւորութիւն չկայ: Կտրուած ենք շրջկեդրոնից, մայրաքաղաքի մասին էլ չեն խօսում: Փոխադրամիջոցների բացակայութիւնը անշարժութեան է մատնել ժողովրդին: Գոնէ բնութիւնն է առատ, կարողանում ենք օգտուել նրա բարիքներից՝ որ կողմ նայես մրգատու ծառեր են», - գրուցակցիս ջղայնութիւնը չէր հանդարտուում: «Ես օրինակ, հնդկահաւ եմ պահում: Աշնանը հինգ հնդկահաւը հիմա դարձել է 70, յետոյ կը դարձնեմ 360... կամ մի հիւանդութիւն կը գայ ու կը սատկեն բոլորը կամ եթէ նոյնիսկ ուզեմ վաճառեմ՝ ինչպէ՞ս տանեմ հասցնեմ շրջկեդրոն: Անցած տարի խոզերի ափրիկեան ժանտախտի պատճառով սատկեց մօտ 200 խոզ: Հիմա նորից պիտի սկսենք գէրոյից, բայց ինչպէ՞ս», - ինձ ուղղած հարցի պատասխանը ես հաստատ չունէի, իսկ նա տեսնելով իմ շփոթութիւնը, երեւի խղճաց ինձ ու կատակի վերածեց խօսակցութիւնը «ոչինչ չունենք, կան միայն կանայք, տղամարդիկ եւ երեխաներ, բայց ուրախ էլ ապրում ենք»:

«Հայկականը անտէր դրախտ է», - արդէն քիչ խաղաղած շարունակեց Յակոբը եւ ձեռքը պարզեց դէպի դիմացի բարձրագիր անտառը. «Իհնամիկը (խօսքը Ատրպէյճանի նախագահի մասին է) այստեղ երկու տարի ճամբար է եկել դպրոցական տարիներին: Եթէ սա վատ տեղ լինէր, Հայտարը իր գաւակին չէր ուղարկի այստեղ հանգստանալու»:

Ամփոփելով Հայկականի նկարագիրը՝ ասենք, որ Յակոբի բերած տուեալների համաձայն գիւղում մնացել էին վեց ընտանիք, որոնք աճելով դարձել են տասնմէկ: Բնակիչների թիւը 61 է: Հիմնական գաղմուկները մնում է անասնապահութիւնը, որ առանձնապէս չի զարգանում հիմնականում մսի եւ կաթի մթերման հնարաւորութեան բացակայութեան պատճառով: Այսօրուայ դրութեամբ գիւղում կա 70 գլուխ խոշոր եղջերաւոր անասուն: Ոռոգման ջուրը խնդիր է: Անասնաճանցանքատարածութիւնները գիւղտեխնիկայի բացակայութեան պատճառով մնում են անմշակ:

Վերջերս կառավարութիւնն այս ճորակի գիւղերի զարգացման համար մշակել է «Բանաճորի ենթաշրջանի զարգացման» ծրագիր, սակայն հայկականցիները չեն համարձակուում օգտուել ծրագրից: Մտավախութիւնը վարկերը մարելու նրանց անկարողութիւնն է:

Գիւղի միակ փոխադրամիջոցը վերջին օրերին ԼՂՀ նախագահից նուէր ստացուած շտապ օգնութեան մեքենան է, որը գտնուում է հարեւան Խանձաձոր գիւղում: Այս երկու գիւղերը այսօր մէկ համայնք են կազմում:

«Ցաւօք, պիտի համաձայնեմ, որ Հայկականի վերաբնակեցման ծրագիրը յաջողած համարել չի կարելի», - ասում է Վահան Բաղասեանը:

Հայկականի ապագան լուրջ քայլեր է պահանջում, որոնց շարում Վահան Բաղասեանը առանձնացրեց երեքը

- 1.- Հայկականը պէտք է լինի առանձին վարչական միաւոր:
- 2.- Առանձին ուշադրութիւն պէտք է յատկացուի դպրոցին, ինչն իրենց երեխաների ճակատագրով մտահոգուած երիտասարդ ընտանիքների այստեղ մնալու նախապայմաններից մէկն է:
- 3.- Կառավարութիւնը կամ անհատներ պէտք է այստեղ գործարարական ծրագրեր ձեռնարկեն, դրանով իսկ տեղացիների համար լուծելով աշխատանքի հարցը:

**Նոր Գետաշէն
Գետաշէնցիներու նոր հայրենիք**

Բազմել ես լեռներից, ունես հազար շէն,
Արծիւների բոյնն ես, չքնաղ Գետաշէն,
Բարբարոս ցեղերի անդադար սանձող,
Դու քաջերի օրրան, իմ քաջ Գետաշէն...

1999 թռակահանին, Թարթառ գետի հիւսիսային ափին, անվրդով ու կարծր լեռների ստորոտում, կիսաքանդ ու խարխուլ տներից մէկի օճախի ծուխը կենաքի հօտը հաճելիօրէն տարածեց շուրջը, ազդարարելով Նոր Գետաշէնի ծնունդի մասին:

Ալեքսանդր Նազարեանը այստեղ էր հասել իր տասներկու ընկերների հետ: Հասել էին՝ իրենց հետ բերելով ատրպէյճանցիներին գերի մնացած Գետաշէնի կսկիծը, պապենական տան կարօտախտը ու Նոր Գետաշէն կառուցելու վճիռը:


«Այստեղ ամէն ինչ յիշեցնում է մեր Գետաշէնը: Նոյն լեռները, գետը, մի խօսքով ամէն ինչը շատ նման է մեր Գետաշէնին», - չմարող թախիծը իրեն զգացնել էր տալիս իմ գրուցակցի աչքերում, ձայնում, - «մենք սփոփուում ենք այն մտքից, որ ահա այս լեռների ետեւում մեր Գետաշէնն է եւ մենք շնչում ենք մեր Գետաշէնի օդը», - ձեռքը մեկնելով դէպի դիմացի լեռը ցոյց է տալիս Ալեքսանդր Նազարեանը՝ Նոր Գետաշէն համայնքի ղեկավարը:

Այս էջը կը հովանաւորեն Մ. և Մ. Ժոյֆէ և Աննա Վրոյաբեան

KOHAR

CHAYASA AD1-19B

live
CONCERT
experience



Newly Released Triple DVD Package

Live in Concerts in Damascus & Aleppo, Syria, 2009
The Package Includes a Songbook of 128 pages
A unique production to add to your collection

AVAILABLE NOW, visit us here:

www.hayasashop.com



Նոր Գեոտաշէն

Գիւղը անուանեցին Նոր Գեոտաշէն, որպէսզի այն կանչի ու նորից համախմբի գեոտաշէնցիներին, որոնք 1991 թուականի գարնան՝ Շահումեանի եւ Գեոտաշէնի ենթաշրջանի հայաթափութիւնից յետոյ ցրուել են աշխարհով մէկ: «Սկզբում շատ դժուար էր: Ինչպէս ասում են թաց խոտի վրայ կրակ ենք վառել, բայց չենք յուսահատուել: 21-րդ դարում ապրում էինք լամբի լոյսի տակ, աշխարհից կտրուած, նոր հոգսեր չալակած, բայց շատ համերաշխ էինք: Իրիկունները հաւաքուած էինք մէկի տանը, խաղում, գրուցում, որոշում յաջորդ օրուայ անելիքները: Պետութիւնը մեզ օգնեց շինանիւթերով, փոքրիկ գումարներով, մենք էլ թեւ թիկունք արեցինք ու կառուցեցինք մեր տները»: Արդէն ոչ հեռու անցեալում մնացած դժուարութիւնների մասին է պատմում համայնքի ղեկավարը:

20 ընտանիքներով 1999 թուականին հիմնադրուած Նոր Գեոտաշէնի խնդիրները նման էին Արցախի միւս վերաբնակեցուող գիւղերի խնդիրներին՝ ելեկտրական հոսանք, դպրոց, հեռարձակում, ջուր, ճանապարհ եւ այլն-եւ այլն, որոնց լուծմանը գիւղում սպասում էին հաւատով ու համբերութեամբ: Եւ լուծուեցին..

2003-ին, կառավարութեան վերաբնակեցման ծրագրի համաձայն գիւղ հասած ելեկտրական հոսանքը փոխեց կեանքի հունը Նոր Գեոտաշէնում: 2005-ին լուծուեց նաեւ հեռահաղորդակցութեան խնդիրը: Վերանորոգուեցին գիւղամիջին եւ շրջակայքի հետ կապող ճանապարհները:

Շօշափելի ներդրումներ արեցին սփռուած հայ տարբեր կազմակերպութիւններ եւ անհատներ: Այսպէս, ամերիկահայ բարերար Նորմա Միլլըրի շնորհիւ գիւղն ապահովուեց խմելու ջրով, իսկ Սպանիայի հայոց առաջնորդարանի միջոցներով 2005-ին կառուցուեց դպրոցի շէնքը:

Վերաբնակեցուող գիւղերում, մասնաւորապէս Նոր Գեոտաշէնում իր ծրագրերն է իրականացնում նաեւ Լիբանանի «Արցախ» Փոնտը, մէկ կով տրամադրելով ընտանեքում ծնուած երրորդ երեխայի պարագայում:

Մնելիութիւնը Նոր Գեոտաշէնում տարեկան 5 երեխայ է: Բազմազաւակ ընտանիքների համար կառավարութեան

ծրագրերը բաւականին թեթեւացնում են գիւղի աճող ընտանիքների հոգսերը՝ իւրաքանչիւր 4-րդ եւ յաջորդ երեխայի համար դրամատան մէջ բացելով 700 000 դրամ (1850 տոլար) գումարի հաշիւ: Վեցերորդ երեխայի ծնուելու դէպքում պետական միջոցներով ընտանիքի համար կառուցուում է բնակելի տուն՝ բոլոր յարմարութիւններով եւ մինչեւ 2000 քառակուսի մեթր տնամերձով:

Այսօր Նոր Գեոտաշէնն ունի 50 ընտանիք՝ 230 բնակչով: Դպրոցում սովորում է 40 աշակերտ:

Վերջին տունը Նոր Գեոտաշէնում կառուցուել է 2007-ին, իսկ պետութեան կողմից վերջին նուէրը շտապ օգնութեան մեքենան էր, որի կարիքն այնքան զգացուում էր գիւղում: Շրջկեդրոնից բաժանող 14 քմ. ճանապարհը երբեմն անյաղթահարելի ու դժոխային էր թւում մեքենայի բացակայութեան պատճառով:

1999-ից այս կողմ Նոր Գեոտաշէնը հասցրել է կայանալ բոլոր կառույցներով՝ դպրոց, գիւղապետարան, բուժկէտ, ակումբ: Իսկ գիւղում հիւրատան կառուցումը լաւագոյն վկայութիւնն է կեանքի աշխուժութեան եւ շօշափելի հեռանկարների մասին:

«Մեզ մօտ մշտական բնակութիւն հաստատել ցանկացողներ շատ կան, պարզապէս չենք կարող ընդունել, ազատ բնակելի տներ չկան», - ասում է համայնքի ղեկավարը: «Բնութիւնը շատ շոյլ է գտնուել, հողը բերրի է, բերքն ամէն տարի առատ: Այստեղ միայն շատ ծոյլ մարդը կը մնայ սոված: Լաւ կը լինի եթէ տարածքում գոնէ մի փոքրիկ պահածոների գործարան բացեն: Ամէն տարի թոններով պտուղ է փճանում, մինչդեռ պտուղի գինը շուկաներում օրէ օր աճում է», - ասում է համայնքի ղեկավարը:

Լեռնանիստ Նոր Գեոտաշէնում ցանքատարածութիւններ չկան: Եղածը խոտով ծածկուած արօտավայրեր են, ուստի գիւղի համար լաւ հեռանկարներ ունի անասնապահութիւնը: Գիւղատնտեսութեան այս ճիւղի զարգացման համար կառավարութիւնը վերջերս մշակել է ծրագիր՝ մինչեւ 1,5 միլիոն դրամ վարկ է տրամադրուում նուազագոյնը երկու խոշոր եղջերաւոր անասուն ունեցողներին: Անասնապահութեան զար-

Այս էջը կը հովանաւորեն Վախէ Եւ Թայֆու Գրքարկութեան Ասօգ Եւ Պաշտօն



www.tlcglobalinc.com

TLC GLOBAL INC

Printing and direct marketing project management

2455 Guenette
St-Laurent, Quebec H4R 2E9
Tel.: (514) 337-0311
1-888-725-0311
Fax: (514) 337-9777

Offset and Digital Printing

- Graphic Design
- Brochures
- Pocket Folders
- Stationary (Letterheads, envelopes)
- Business Cards
- Packaging
- Large Format Printing
- Digital Cutting
- Lettering
- Exhibit booths
- Pop up Displays and Banner Stands

Fulfillment Services

GLOBAL's high-tech inventory and data management systems give us the ability to provide a wide range of fulfillment services - all to meet the just-in-time demands of the marketplace:

- Order processing / receiving
- Distribution / shipping
- Mailing
- Inventory management
- Promotional checks
- Gift Cards
- Warehousing / logistics
- Customer inquiries
- Canada Post liaison services
- International mailings
- Rebate offers
- Coupon redemption

GLOBAL fulfills your commitments.

Data Management

Your business depends on accurate, up-to-the-minute information. But staying on top of all the information you need isn't easy. That's why GLOBAL does data... with the deep-thinking technology and the knowledgeable staff to carry your information burden.

GLOBAL has the information management systems to create, maintain, update and process your data.

- Data entry
- Letter carrier pre-sort
- Address verification and correction
- Database enhancements
- Data and list management
- U.S. sorts
- Database maintenance

GLOBAL manages your Database.

Our fully automated mail shop production department does it all

Mailing Services

- Addressing / labelling: paper labels; continuous-form and pressure sensitive labels; Cheshire labels; and ink-jet printing.
- Document laser personalization
- Postal code sorting (automated and manual)
- Letter carrier pre-sort, Canada and USA
- Folding
- Insertion (automated and manual)
- Polybagging
- Postal metering
- U.S. and international mailings
- Address verification and correction (merge/ purge)

Mheir "Moe" Kaloussian

514-924-4553

moe@tlcglobalinc.com

գացմանը կը նպաստի նաեւ «Արցախկաթ» ընկերութեան մասնաճիւղի բացումը, որը նախատեսուած է մօտ ապագայում: Այսօրուայ դրութեամբ գիւղում կայ 110 մեծ եւ 300 փոքր եղջերաւոր անասուն:

Ինչպէս հարեւան համայնքներում, Նոր Գետաշէնում զարգանում է մեղուաբուծութիւնը: Մեղրի արտադրութիւնը գիւղացիների համար եկամուտների յուսալի աղբիւր է, իսկ տնամերձի մշակութիւնը գետաշէնցու սեղանը առատ է պահում անարատ բանջարեղէնով ու մրգերով: Հողի մշակութեան հարցում խոչընդոտը ոռոգման յատուկ ջրամղիչ մեքենայի բացակայութիւնն է, որը պէտք է ջուրը գետից հաւաքի ջրամբարում եւ հաւասար բաշխի թաղամասերով:

Պապենական օճախը կենդանի պահելու պատուախնդրութեամբ, հայրենի հողին անտեսանելի թելերով կապուած հայի կերպարն է նոր գետաշէնցին, որ դաժան ու մռայլ անցեալի յուշերը շալակած, անխռով ու հալալ քրտինքով վաստակում է իր ապրուստը: «Մեզ ոչինչ պէտք չի, միայն թէ խաղաղութիւն լինի, մնացած ամէն ինչը կը ստեղծենք ինքներս», - արցախեան պատերազմում հօրն ու եղբօր կորցրած Ալեքսանդր Նազարեանի փափաքը միայն խաղաղ երկիրն է:

Նշենք, որ մինչեւ պատերազմը Հին Գետաշէնը ունէր 7000 բնակիչ: Այսօր գետաշէնցիների մեծ մասը բնակութիւն է հաստատել Ռուսաստանի տարբեր քաղաքներում: Մօտ 500 ընտանիք բնակում են Հայաստանի տարբեր շրջաններում: Իսկ մի մասն էլ նորից արմատներ է ձգել հայրենի տունը իրենցից բաժանող լեռան ետեւի ստորոտում՝ բնակութեան նոր հասցէն վաւերացնելով Նոր Գետաշէն անունով:

Նոր Գետաշէնի բնակիչ Ռուբէնը

1991-ի գարնանը Շահումեանի հայերի բռնի տեղահանումը մղձաւանջի պէս մի բան էր 60-ամեայ Հայրումեան Ռուբէնի համար: Պատկառելի տարիքի տղամարդը կարծես թէ չհաւատար իրականութեանը, յուսալով, որ կ'արթնանայ եւ այդ սարսափելի երազը կը կորսուի: «Վերջինը ես լքեցի գիւղը մեր գիւղացի Գաբոյի հետ. յոյս էի պահում, որ ուր որ է մերոնք կը գան, բայց...»: Խոր հառաչ քաշելով լռում է դարդի ծանրութիւնից քչախօս դարձած ծերունին: Յետոյ շարունակում է խօսել, որը աւելի շատ նման է բարձրաձայն մտածելուն: «Տուն էինք կառուցել, ապրում էինք մեզ համար խաղաղ, հանգիստ, ոչ մէկին չէինք խանգարում, իսկ թուրքը...» ու նորից լռում է:

Ծերունու վէրքերը չբերքեցելու, նրան աւելորդ անգամ ցաւ չպատճառելու հանգամանքը կաշկանդեց իմ լեզուն, եւ բոլոր հարցերս կորցրին իրենց իմաստը: Ինչ պիտի ասէր 60 տարիների վաստակը, ապագայի բոլոր ծրագրերը եւ սեփական տունը՝ հայրենի օճախը թուրքի վայրագութեանը, բարբարոսութեանը զոհաբերած մարդը:

«Նորից տուն եմ կառուցել, ստեղծել ամէն ինչ: Այսպէս էլ ապրում եմ, էլի: Ինչ պիտի անեմ», - կարծես ինքն իր հետ խօսւում է Ռուբէն հայրիկը, ի մի բերելով վերջին տարիների արած թողածը: «Սկսել ենք գերոյից եւ արդէն ամէն ինչից քիչ-քիչ ունենք՝ կովեր, սագեր, հաւեր: Մշակում ենք տնամերձը, ինչքան կարողանում եմ օգնում եմ երեխաներիս»:

Երեք երեխաներից աւագը՝ աղջիկն արդէն ամուսնացել է եւ ապրում է առանձին, իսկ որդին ու կրտսեր աղջիկն էլ ապրում են իր հետ: Ծերութեան օրով ստեղծածից գոհ է եւ ասում է, որ աւելին պէտք էլ չի:



Ջախին՝ Ռուբէն պապիկը իր հարազատներով

Նրան չի մտահոգում ոչ մի քաղաքական բանակցութիւն, ոչ մի քաղաքական որոշում: Իսկ ազատագրուած տարածքները յանձնելու մասին զրոյցները 80-ամեայ ծերունու համար քննարկման ենթակայ չեն. «ոչ մի հող էլ չի յանձնուի, ժողովուրդը կը պահի: Ոչ մի տեղ այստեղից չեմ գնայ, սա իմ հողն է, այստեղ է մեր տունը, այստեղ է կնոջս գերեզմանը: Ես նրան թողնեմ, ուր գնամ: Ես ամէն կերպ կը պաշտպանեմ իմ հողը, ոնց որ կռուել ու ազատագրել ենք, էգպէս էլ կը պահենք ազատագրածը», - հանգիստ ու անվրդով ասում է Նոր Գետաշէնցի ծերունին:

Եղէգնուտ Արցախի հիւսիսային սահմանապահը

Թարթառը դուրս էր եկել փերերից, քշել տարել էր Եղէգնուտի բանջարանոցները: Աւերել էր նաեւ գիւղամիջի, ինչպէս նաեւ գիւղը շրջկեդրոնին կապող ճանապարհը: Գիւղացիների մտահոգութիւնը վարակել էր նաեւ մեզ, սակայն այլ էր մտահոգութիւնների պատճառը՝ նրանք ջուրը քշած վաստակի մասին էին մտածում, իսկ մենք առաջացած դժուարութիւններից իրենց նոր բնակավայրի նկատմամբ հնարաւոր հիասթափութիւնից: Սա տարիներ առաջ էր, իսկ այսօր Շահումեանի հիւսիսային սահմանին մօտ, Եղէգնուտ համայնքի ղեկավար Ժաննա Մանուկեանը հպարտութեամբ նշում է, որ 1999 թուականին 15 ընտանիքներով հիմնադրուած գիւղն այժմ ունի 47 ընտանիք:

«Վերջին երեք ընտանքին ընդունել ենք 2010 թուականին: Բայց էլի ցանկացողներ կան, պարզապէս ազատ տներ չունենք», - ասում է գիւղապետը: Յատկանշականն այն է, որ Եղէգնուտում հիմնականում երիտասարդ, աճող ընտանիքներ են: Ծնելիութիւնը տարեկան կազմում է 6-7 երեխայ: Կառավարութեան ծրագրի համաձայն, ընտանիքում 4-րդ եւ յաջորդ երեխան ծնուելու դէպքում, ամէն երեխայի համար տրամադրուած է 700 000 դրամ, իսկ 6-րդ երեխայի դէպքում տուն է կառուցւում ընտանիքի համար: Այնպէս որ կենցաղային պայմանների մտահոգութիւն բազմազաւակ ընտանիքները չունեն:

Այս էջը կը հովանաւորեն Թամար եւ Աւուսկ Անդրխանեան



Եղեգնուտի գիտապետ Ժաննա Մանուկեան



Եղեգնուտի մանկապարտէզի բալիկները

Ընդամէնը մէկ տասնեակից քիչ աւելի ժամանակահատուածում եղէգնուտցիները պետութեան աջակցութեամբ յաղթահարել են վերաբնակեցուող գիւղի բոլոր դժուարութիւնները: Առաջին հերթին լուծուել է ելեկտրականութեան հարցը, այնուհետեւ խմելու ջրի հարցը՝ կառավարութիւնը տրամադրել է խողովակներ եւ փոքրիկ գումար, իսկ գիւղացիները ջուրը հասցրել են ամէն մի բակ:


Գիւղի միջով անցնող գետը, արօտավայրերն ու մեղմ կլիման ստեղծել են բոլոր պայմանները ապրուստի միջոցները հոգալու համար: «Մեր սեղանին հիմնականում մեր աշխատանքի արդիւնքն է՝ միսը, կաթնամթերքը, բանջարեղէնը, մրգերը: Այսօրուայ դրութեամբ համայնքն ունի 127 մեծ, 28 փոքր եղջերաւոր անասուն, 141 թեւ ընտանի թռչուն: Խոզերի քանակը քիչ է՝ ընդամէնը 10, քանի որ վերջերս բռնկուած վարակի պատճառով սատկել են մի քանի տասնեակ խոզեր: Սպասում ենք, որ վարակի վտանգն անցնի, կրկին բազմացնենք»,- անտեսութեան ընդհանուր նկարագրին ծանօթացնում է համայնքի ղեկավարը:

Ասենք, որ լեռնանիստ գիւղերում, բացի անասնապահութիւնից, լայն թափ է առնում մեղուաբուծութիւնը, իսկ Եղեգնուտը բացառութիւն չէ: Անարատ մեղրի արտադրութիւնը եղէգնուտցու համար կայուն եկամտի աղբիւր է: 220 բնակիչ ունեցող համայնքն արդէն ունի 129 մեղուի փեթակ:

«Ամէնից կարեւորը անգործութեան խնդիր չունենք, գիւղացիների 95 տոկոսը աշխատավարձ է ստանում, մի մասը աշխատում է դպրոցում, մի մասը մանկապարտէզում, մի քանի աշխատատեղ ապահովում է գիւղապետարանը, բուժկէտր եւ ակումբը, իսկ տղամարդկանց մեծ մասը մօտիկ զօրամասում պայմանագրային զինծառայողներ են»,- պատմում է գիւղապետ Ժաննա Մանուկեանը:

Այսօր 2011 թուականի Եղեգնուտի դիմագիծն է, իսկ ընդամէնը մի քանի տարի առաջ գիւղը չունէր դպրոցի շէնք, մանկապարտէզ, գիւղապետարան:

«Հայ կրթական հիմնադրամ»ի միջոցներով կառուցուած փոքրիկ շէնքը, որտեղ նախկինում տեղակայուած էր



Եղեգնուտի մանկապարտէզը

դպրոցը, այսօր վերանորոգուել եւ դարձել է գիւղապետարան: Գիւղի միջնակարգ դպրոցի երկյարկանի լուսաւոր, կահաւորուած, ներքին ջեռուցման համակարգով շէնքը կառուցուել է կառավարութեան միջոցներով՝ մօտ 93 միլիոն դրամ: Այս տարին երրորդ ուսումնականն է գիւղի աշակերտների համար նոր դպրոցում: ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան շնորհիւ գիւղում գործում է 25 տեղանոց մանկապարտէզ:

Առաջին հայեացքից վերաբնակեցուող գիւղի սովորական թուացող առօրեան, նկատելի կամ ոչ այնքան մեծ յաջողութիւններով հնարաւոր դարձաւ միայն գիւղացու անկոտորում կամքի ու սեփական հողին կապուած մնալու վճռի շնորհիւ:

ԲԵԼԼԱ ԼԱԼԱՅԵԱՆ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Այս էջը կը հովանաւորեն Դուբն, Շանք եւ Աւաւն Սոմապետեան



Restaurant Roberto.com
That's Amore!

dal 1980



Mets réconfortant
Comfort Food



Գործազրկությունը խոչընդոտ արցախցի երիտասարդության բարեկեցության համար



Բագրատն ու Լիլիան իրենց երեխաներով

Արցախում երիտասարդության զբաղումը կախված է չլուծված մնալ: Կառավարությունն այդ ուղղությամբ դեռևս չունի մշակված քաղաքականություն: Եւ գործազուրկ անձանց թիւն էլ հեռու է իրականությունից:

Այսպիսով՝ 140 հազար բնակչություն ունեցող Արցախի հանրապետությունում, ըստ պաշտօնական վիճակագրական տուեալների, գործազուրկների թիւը կազմում է ընդամենը մոտ 3000 քաղաքացի: Այս թիւը չի կարող արտացոլել իրական վիճակը, քանի որ աշխատանք փնտրողներից շատերը պարզապէս չեն գրանցւում որպէս գործազուրկ:

Նոյն աղբիւրի համաձայն, աշխատանք փնտրողների գերակշիռ մասը երիտասարդներն են եւ դրանց մեծ մասը բարձրագոյն կրթութեամբ են: Ըստ Սոցիալական ապահովութեան նախարարութեան տուեալների՝ աշխատանք փնտրողները հիմնականում մանկավարժական, բուժքոյրական, տնտեսագիտական, թարգմանչական կրթություն ունեն:

Արցախի ճարտար գիւղի բնակչուհի Սուզաննա Առուստամեանը անգլերէն լեզուի մասնագէտ է: Երեք տարի է, ինչ աւարտել է համալսարանը, սակայն առ այսօր համապատասխան աշխատանք չի կարողացել գտնել:

«Մի շարք տեղեր եմ դիմել աշխատանքի ընդունուելու նպատակով, սակայն միշտ մերժում եմ ստացել: Որովհետեւ առանց ծանօթի միջամտութեան անհնար է ինչ-որ տեղ աշխատանքի ընդունուելը: Աշխատում եմ նրանք, ովքեր թիկունք

ունեն»,- յուսահատ պատմում է 25-ամեայ Սուզաննան:

Մարտունու չըջանի ճարտար գիւղը Արցախի ամենամեծ գիւղական համայնքներից է՝ իր 6 հազար բնակչությամբ: Այս գիւղում՝ ի տարբերություն այլ գիւղերի, աշխատողների թիւն անհամեմատ մեծ է: Մի քանի դպրոցները, գիւղապետարանը, շուրջ հարիւր հոգանոց աշխատատեղ ունի: Սակայն երիտասարդները հիմնականում ստիպուած ծառայում են գիւղի մերձակայքում գտնուող զօրամասում՝ այդպիսով օրուայ ապրուստ վաստակում:

23-ամեայ Արեւ Գասպարեանի օրը սկսւում է առաւօտեան ժամը 7-ին: Երիտասարդ օրիորդը ստիպուած է օրական մի քանի քիլոմեթր դժուարանցելի ճանապարհ կտրել, որպէսզի հասնի աշխատավայր: Նա նոյնպէս ծառայում է Պաշտպանութեան բանակում:

«Ես մասնագիտութեամբ ուսուցչուհի եմ, բայց քանի որ չեմ կարողացել համապատասխան աշխատանք գտնել, ստիպուած ներկայ գործն եմ անում՝ համակարգչային աշխատանք: Շատ չեմ սիրում իմ այս աշխատանքի բնոյթը, բայց ստիպուած եմ, քանի որ եթէ թողնեմ այս աշխատանքը, պէտք է լքեմ նաեւ գիւղը»,- պատմում է Արեւը եւ աւելացնում, որ ժամանակին գիւղում աշխատանք չունենալու պատճառով իր եղբայրը տեղափոխուել է Ռուսաստան եւ արդէն տաս տարի է, ինչ ապրում է այնտեղ:

Մշտական աշխատանքի բացակայությունը նաեւ խո-

Այս էջը կը հովանաւորեն Ա. Եւ Ա. Մխնն Եւ Մարալ Տասրեճեանը

չընդոտ է ընտանիք կազմել ցանկացողների համար: Չնայած այն բանին, որ ամսական 85 հազար դրամ (225 տոլար, Արցախում միջին աշխատավարձի չափն այդքան է) աշխատավարձը հազիվ թէ մի քանի բացեր լրացնի, բայց գոնէ առօրեայ ծախսերը հնարաւոր է մուծել: Սակայն այդ փոքրիկ աշխատավարձը շարունակում է երազանք դառնալ հարիւրաւոր երիտասարդների համար:

Բագրատն ու Լիլիան այն երիտասարդ ընտանիքներից են, որ որոշել են սեփական ուժերով կառուցել իրենց տունը:

Նրանք ապրում են Հաղբուլթի շրջանի Դրախտիկ գիւղում, որտեղ համեմատաբար միւս գիւղերի, պայմանները բաւականին լաւ են: Յամենայն դէպս, Դրախտիկում չեն բողոքում, որովհետեւ ունեն ջուրի, փոխադրամիջոցների եւ կենցաղային այլ պայմանների յարմարութիւններ:

Բագրատը 30 տարեկան է, իսկ Լիլիան՝ 25, բայց արդէն հասցրել են 4 երեխայ ունենալ: Երեխաներից մեծը՝ Արենը, երկրորդ դասարանում է սովորում, իսկ փոքրը դեռ 6 ամսական է: Երիտասարդ, բայց արդէն մեծ ընտանիքը մէկ տարուց աւելի ապրում է առանձին՝ գիւղի մի դատարկ տանը, որն ամէն պահի կարող են պահանջել, որ ազատեն: Բագրատը պատմում է, որ ծնողների հետ արդէն հնարաւոր չէր ապրել, դրա համար որոշեցին առանձնանալ:

«Մի տան մէջ 4 ընտանիքով էինք, դէ ո՞նց կը տեղաւորուենք: Դրա համար առանձնացանք: Հիմա այս երկու սենեակնոց տանն ենք ժամանակաւոր ապրում, մինչեւ որ տան հարցը լուծենք»,- ասում է նա:

Իսկ հարցի լուծումը սեփական ուժերով տուն կառուցելն է, թէեւ դա այնքան էլ հեշտ գործ չէ: Մօտ 20 օր առաջ են տան հիմքը դրել, բայց, ինչպէս ասում է Բագրատը, շարունակել առայժմ չեն կարող, քանի որ Ֆինանսական միջոցներ չունեն:

«Հիմնական գործ չունենք, մօտ 45 հազար դրամ (120 տոլար) ենք ստանում պետութիւնից՝ որպէս երեխաների նպաստ: Միակ կայուն եկամուտը դա է: Մի քանի հեքթար ցորենի արտ ենք ցանում, այն էլ կիսում ենք եղբայրներով, որ ետև գնանք: Կողքից էլ շինարարութիւնում եմ աշխատում, տրակտոր եմ քշում, բայց, միեւնոյնն է, չի հերիքում: Հազիւ ընտանիքիս ծախսերն եմ հոգում»,- պատմում է երիտասարդ հայրը, որի կարծիքով՝ սեփական ուժերով տան կառուցումը լաւագոյն դէպքում կը տեւի 6-7 տարի:

Երիտասարդների բարեկեցութեանն ուղղուած ծրագրերի պէս բացակայում են նաեւ երիտասարդական շարժումները, որը կարող էր իրավիճակի դէմ պայքարի սկիզբ դնել: Արցախում գործող մի քանի երիտասարդական կազմակերպութիւններն աշխուժանում են ընտրութիւններից ընտրութիւններ:

Երիտասարդ քաղաքագէտ Արտակ Բեգլարեանը, որ իր ուսումն ստացել է եւրոպական մի շարք բարձրագոյն ուսումնարաններում, կարծում է, որ հենց ինքը՝ երիտասարդութիւնը պէտք է բարելաւի իր վիճակը.

«Մեզ պէտք են ստեղծագործ, նախաձեռնող ու նուիրեալ երիտասարդներ, ովքեր իրենց շուրջը կը հաւաքեն մնացածներին ու նախաձեռնողական ոգին կը բարձրացնեն»,- ասում է Արտակը, ում կարծիքով երիտասարդութեան շրջանում գործազրկութեան եւ ընդհանրապէս սոցիալական իրավիճակը համապատասխան է Արցախի վիճակին:

ԼՈՒՍԻՆԷ ՄՈՒՍԱՅԷԼԵԱՆ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԱՆԴԱՊԱՏՈՒՄՆԵՐ

Տերսիմ

Ջալալի թուրքերու ասպատակութենէն զերծ մնալու համար, Տերսիմի հայ բնակչութիւնը անսալով Տէր Սիմոն բանիմաց եւ քաջ քահանայի խորհուրդներուն, դաւանափոխ դառնալու փոխարէն, կը նախընտրէ ընդունիլ դրացի Ալաուի քերտերու կրօնը եւ կ'ապրի անվտանգ: Իրենց առաջնորդի անունը յաւերժացնելու համար, իրենց լեռնաշղթան կ'անուանեն Տէրսիմոն, որ ժամանակի թաւալումին ընթացքին կը փոխուի եւ կ'ըլլայ Տերսիմ:

Ջէյթուն

Ջէյթունի առաջին բնակիչները եղած են Անիէն եկած եօթ տուն հայ գաղթականներ: Անոնք սկիզբը հաստատուած են այժմու Շէհրեռոկ քաղաքէն քանի մը մղոն հեռու, ձորի մը մէջ, որ կոչած են Անի-ձիւր (Անի-ձոր):

Երբ Հեթում իշխանի կինը՝ Ջարմանուհին կը տիրապետէ Կոկիսոնի եւ Կապանի բերդերուն, անառիկ այդ հողերուն վրայ ան կը հիմնէ նոր իշխանութիւն մը եւ 300 կտրիճներով կ'իշխէ հողատարածքին: Ջարմանուհիի զարմիկներէն Սէթ, կը հաստատուի Ջէյթունի միջնաբերդին մէջ, եւ իր բարի համբաւով մեծ ազդեցութիւն կ'ունենայ շրջանի բնակչութեան վրայ: Իւրաքանչիւր անգամ, որ արտակարգ դէպք մը պատահի, ժողովուրդը կ'ըսէ. «Սէթի՛ն դիմենք, Սէթի մօտ գնանք...»: Սէթ եւ Սէթին բառերը կրկնուելով, կ'աղաւաղուին եւ կը դառնան Ջէթին կամ Ջէյթուն:

Ա կ ց

Անի քաղաքի կործանումէն ետք, քաղաքի բնակիչներուն մէկ մասը դուրս կու գայ իր աւերուած քաղաքէն, փնտռելու նոր ապրելավայր մը: Կը հասնին ձորի մը եւ լեռնային ջրառատ վտակի մը: Երկար որոնումներէ ետք կը գտնեն այդ վտակի ալը ու հոն կը հիմնեն իրենց նոր քաղաքը եւ կ'անուանեն՝ Ակն:

Ա գ ու լ ի ս

Քարակոյտի մը տակ քնացած է Թադէոս առաքեալ: Երբ ան արթնցած եւ բացած է աչքերը, տեսած է լուսաբացը եւ ըսած՝ Ակն ի լոյս, որ հետագային փոխուելով դարձած է Ագուլիս: Նկարը՝ պատմական Ագուլիսը 1910-ին, նախքան հայաթափումը:

Խոզնգեղ կամ Խոզնտեղ

Կը գտնուի Տերսիմ: Տրդատ Թադաւոր՝ խոզ դառնալէ ետք, կ'ապրի մօտակայ քարալի մը մէջ: Ժողովուրդը այդ վայրը կը կոչէ Խոզնգեղ կամ Խոզնտեղ:

Սիյա Էջը կը հովանաւորեն Մ. եւ Ս. Զաւին եւ Վարսեմիկ Ասրգիսեան



CASSANDRA I.D.A. PHARMACY

ARMENIAN MEDICAL CENTRE & PHARMACY

Pharmacists

Sarkis Balian, BScPhm, RPh
 Maral Balian, PharmD, RPh
 Vartan Balian, PharmD, RPh

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԻ
 ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻԷ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ
 ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ
 ՎԱՐՎԱՆ ՊԱԼԵԱՆ

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետետողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% գեղջ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցեք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:

Walk-in Clinic onsite: (416) 331-9111

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)
 Toronto, Ontario M1R 1V2 Tel : (416) 449-2040 Fax: (416) 449-2048



Անկախության հետ Հայաստան Գերիտուծած վտանգներէն՝ աղանդաւորականութիւնը

«Զգոյշ եղէք, չըլլայ թէ մէկը ձեզ խաբէ, որովհետեւ շատերը պիտի գան իմ անունովս ու մոլորեցնեն շատերուն»

Մատթէոս 24. 4-6

Հայաստանի մէջ աղանդաւորական շարժումներ գոյութիւն ունեցած են երրորդ դարէն սկսեալ, սակայն անոնք երբեք այնքան մեծաթիւ ու ազդեցիկ չեն եղած, որքան մերօրեայ անկախ Հայաստանի ժամանակաշրջանին:


20-րդ դարու երկրորդ կիսուն, աղանդաւորական շարժումները փորձեցին մուտք գործել Հայաստան, սակայն խորհրդային Միութեան կարգերը թոյլ չտուին անոնց ներթափանցումը:

Տասնամեակներ ետք, երբ մէկ կողմէ խորհրդային Միութիւնը արդէն տկարացած էր, իսկ միւս կողմէ 1988-ի երկրաշարժը քաոսի վերածած էր Հայաստանը, աղանդներու Հայաստան հեզասահ ներթափանցման պատեհ առիթը ստեղծուեցաւ: 1998-ին, Հայաստանի մէջ Եհովայի վկաներուն թիւը հասաւ 22 հազարի:

1991 թուականին Հայաստանի Գերագոյն խորհուրդը (ներկայիս Ազգային ժողով) ընդունեց խղճի ազատութեան եւ կրօնական կազմակերպութիւններու մասին օրէնք մը, որ խտրականութիւն կը դնէր կրօնական կազմակերպութիւններու եւ Հայ առաքելական եկեղեցւոյ միջեւ՝ վերջինիս տալով մենաշնորհներ: 1993 թուականին նախագահ Տէր Պետրոսեան կրօնական կազմակերպութիւններու գործունէութիւնը սահմանափակող հրամանագիր արձակեց: 1995 թուականը կրօնական հալածանքներու գագաթնակէտն էր:

2001 թուականին Եւրոխորհուրդի անդամ դառնալով, Հայաստան պարտաւորութիւն ստանձնեց երաշխաւորելու, որ բոլոր կրօնական համայնքները, մասնաւորաբար «ոչ աւանդական»ները, կարենան առանց խտրականութեան ու անարգել դաւանել իրենց կրօնը:

2004-ին, Եւրոպական խորհուրդի ճնշումներուն տակ եւ մարդկային իրաւունքներու ու խղճի ազատութեան պատրուակով, Հայաստանի կառավարութիւնը վաւերացուց կրօնական գաղափարախօսութիւններ դաւանող օտար կազմակերպութիւններու մուտքը հայրենիք: Աղանդաւորական կազմակերպութիւններու գործունէութիւնը դարձաւ օրինական, մէկ նախապայմանով, որ անդամներուն թիւը 500-էն նուազ չըլլայ: Ընդունուեցաւ այլընտրանքային գինուորական ծառայութեան մասին օրէնքը, որ իրաւունք կու տար անհատին գինուորական ծառայութենէն դուրս աշխատանքային ծառայութիւն կատարելու: Եւրոպական խորհուրդը, 2007-ի Յունուար 23-ի թիւ 1532 բանաձեւով կոչ ըրաւ Հայաստանի իշխանութիւններուն վերանայիլ այլընտրանքային ծառայութեան մասին օրէնքը՝ համաձայն Եւրոխորհուրդի փորձագէտներու առաջարկներուն, ներում չնորհել կրօնական հայեացքներու հիմնաւորմամբ գինուորական ծառայութենէն հրաժարած դատապարտեալներուն: Հայաստանի Հանրապետութեան գինուորական այլընտրանքային ծառայութեան օրէնքը պարտադիր գինուորական ծառայութեան զօրակոչի ենթակայ քաղաքացիին իրաւունք կու տար անցնելու այլընտրանքային ծառայութեան, եթէ անոր կրօնական դաւանանքը կամ համոզումները կը հակասեն գինուորական ծառայութիւն կատարելու սկզբունքին, ինչպէս՝ գէնք կրել եւ օգտագործել:



Եհովայի վկաներու Watchtower պաշտօնատետրի հայերէն տարբերակը՝ «Դիտարան»

Աղանդաւորական շարժումներու պատճառով աղանդաւորական հայ երիտասարդը իրաւունք ունեցաւ բանակին չծառայելու, որովհետեւ, ըստ անոնց դաւանանքին, գէնք վերցնելը արտօնուած չէ:

Ներկայ դրութեամբ, շատ մը ընտանիքներ եւ երիտասարդներ կը շարունակեն անդամագրուել օտար աղանդներուն՝ պարզապէս բանակային ծառայութենէ խուսափելու համար: Իսկ եթէ այսօր 10 քաղաքացիէն մէկը մերժէ գէնք բարձրացնել թշնամիին դէմ, վտանգուած կ'ըլլայ նոյնինքն հայրենիքի գոյութիւնը:

Այսօր Հայաստանի մէջ պաշտօնապէս գրանցուած է 64 աղանդ եւ կը գործեն աւելի քան 100 ոչ պաշտօնական կրօնական կազմակերպութիւններ: Մօտ երեք միլիոն հաշուող Հայաստանի բնակչութեան աղանդաւորներու թիւը, ըստ «Քայքայիչ պաշտամունքից տուժածների վերականգնողական եւ օգնութեան կեդրոն»ի փոխանցած տուեալներուն՝ 300-350 հազար է:

Եհովայի վկաներուն կողքին, յայտնի աղանդաւորական շարժումներէն են՝ «Նոր Սերունդ»ը, «Կենդանի Հաւատք»ը, «Կեանքի խօսք»ը (Word of Life), Մորմոնները (Յիսուս Քրիստոսի վերջին օրերու սուրբերու եկեղեցի - The Church of Jesus Christ of Latter-day Saints) եւ այլն: «Կեանքի խօսք»ը, Հայաստանի ամէնէն գործունեայ եւ ամենէն կազմակերպուած աղանդաւորական շարժումներէն մէկն է. եթէ ժամանակին խաբէութիւններով ժողովուրդը կը հեռացնէին Մայր Աթոռէն, այսօր «Կեանքի խօսք» աղանդաւորական շարժումի անդամները կը վարեն տարբեր քաղաքականութիւն: Անոնք կը ներկայանան այնպէս, իբրեւ թէ չեն տարբերի Հայ առաքելական եկեղեցիէն, ժամանակակից բոլոր միջոցները կ'օգտագործեն մարդոց գիտակցութեան եւ ենթագիտակցութեան վրայ ներգործելու համար եւ ամէն ինչ կ'ընեն, որպէսզի մարդիկ չփոթի մատնուին: «Կեանքի խօսք»ը Հայաստանի մէջ իր գործունէութիւնը սկսած է 1990-ին եւ ներկայիս ունի 10 հազար հետեւորդներ:

2002-ին, «Համագործակցութիւն յանուն ժողովրդա-



LE CRYSTAL
SALLES DE RÉCEPTION

www.lecrystal.com

5285 Henri-Bourassa ouest, Ville St-Laurent (514) 337-8160





Վեդրոնը՝ երկու օտար մորմոն քարոզիչներ Երևանի մէջ



Մորմոնական աղօթատեղի Երևանի մէջ

վարութեան» եւրոպական կազմակերպութեան տուեալներով, եհովականները թիւը Հայաստանի մէջ կազմած է 28 հազար, այսինքն՝ Հայաստանի բնակչութեան մէկ տոկոսը «վկայ» է:

Մորմոնները, որպէս կրօնական կազմակերպութիւն, Հայաստանի մէջ գրանցուած են 1992-ին: Ունին 8 կեդրոն-աղօթատեղի, որոնցմէ 5-ը՝ Երեւանի մէջ: Կը հրատարակեն «Լիւսնա» ամսագիրը: Ըստ կառավարական պաշտօնական տուեալներու, Հայաստանի մէջ մորմոնները թիւը կը հասնի մօտ 2000-ի, սակայն, իրականութեան մէջ, այդ թիւը շատ ակերի մեծ է: Միացեալ Նահանգներէն « Յիսուս Քրիստոսի վերջին օրերու սուրբերու եկեղեցի»ի քարոզիչներ յաճախ կը գործողուին Հայաստան, մորմոնականութեան ուսմունքն ու իրենց սուրբ գիրքը՝ «Մորմոնի գիրքը» (The Book of Mormon) տարածելու համար:

2004-ին հրապարակուած Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութեան հրապարակած Հայաստանի մէջ կրօնական ազատութիւններու մասին զեկոյցին մէջ, Հոգեգալստականները թիւը կը գնահատուի 25 հազարով:

Վերջին տարիներուն Հայաստանի մէջ աղանդաւոր ընտանիքներ կատարած են աղմկայարոյց սարսափելի գործեր՝ անձնասպանութիւններէ բացի, Սեւանի մէջ ծնողներու սպանութիւն, մօր կողմէ գաւակներու սպանութիւն եւ այլն:

Մասնագէտներու կարծիքով, աղանդներու գործունէութիւնը չի սահմանափակուիր միայն «հոգիներու որսով», այլ՝ հետախուզական գործողութիւններով՝ տուեալներու հաւաքում, տեղեկութիւններու ապահովում, գործարքներու թափանցում եւ պայման չէ, որ այս բոլորը իրականանան պաշտօնական կառույցներէն ներս, այլ՝ մայրաքաղաքի մարզերու եւ գիւղերու մէջ շրջուն քարոզիչներու միջոցով:

Իւրաքանչիւր կրօնական կառույց ունի իր գործունէութեան ոլորտը. մէկը կը զբաղի սննդամթերքի, միւսը՝ ոսկիի եւ աղամանդի առեւտուրով, երրորդը՝ քաղաքաշինութեամբ: Բոլոր կրօնական կառույցներու անդամները տասանորդներ կը վճարեն, տասանորդ չի վճարեր միայն Հայ Առաքելական եկեղեցին: Աղանդաւորական որեւէ կառույց ունի երկու խնդիր՝ իշխանութիւն եւ դրամ: Աղանդաւորներու ղեկավարներէն մէկը ըսած է. «Կ'ուզե՞ս դառնալ միլիոնատէր, ստեղծէ քու աղանդը»: Ուրիշ ղեկավար մըն ալ ըսած է. «հաւատքը պիզնէս է: Ժողովուրդը կ'ուզէ հաւատալ, մենք զինք կը բաւարարենք եւ անոր դիմաց դրամ կը ստանանք»:

Հետեւաբար աղանդներն ու աղանդաւորական շար-

ժումները կը սպառնան ոչ միայն եկեղեցիին, այլ հայ ժողովուրդին, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ: Աղանդաւորական շարժումները կը խաթարեն հայրենիքի ազգային շահերը, հետեւաբար առողջ հասարակութեան ձեւաւորման համար, հարկ է դիմել միջոցներու եւ գտնել լուծումներ:

Տարբեր ոլորտի մասնագէտներ այս հարցի շուրջ ունին իրենց առաջարկած հետեւեալ լուծումները.

Անհրաժեշտ է լուրջ փոփոխութիւններ եւ յստակացումներ կատարել հոգեւորական-կրօնական ոլորտին առնչուող օրէնքներուն մէջ:

Աշխուժացնել եկեղեցի-պետութիւն համագործակցութիւնը, ապահովելու համար քաղաքացիներուն հոգեւոր անվտանգութիւնը:

Պէտք է ստեղծել օրէնք, որ կը կարգաւորէ կրօնական կառույցներու կարգավիճակը, այսինքն՝ պէտք է ստեղծուի կրօնական կառույցները հսկող օրէնսդրութիւն եւ պէտք է պատրաստել փորձաքննութիւն կատարող մասնագէտներ:

Պէտք է պատրաստել մասնագէտներ կամ ստեղծել անկախ կազմակերպութիւններ, որոնք կարենան պայքար մղել աղանդաւորականներուն դէմ, որովհետեւ խաբելով աղանդաւորական կառույցին մէջ ներքաշուած անձը բնականոն կեանքի վերադարձնելու համար կը պահանջուի երկուքէն-եօթ տարի եւ նիւթական ահռելի մեծ միջոցներ:

Այս պայքարի մէջ մեծ դեր ունի եկեղեցին իր դաւանաբանութեամբ եւ քարոզչութեամբ: Պէտք է նշել, որ վերջերս եկեղեցականները առակել գործունեայ դարձած են, որուն շնորհիւ բազմաթիւ երիտասարդներ սկսած են աշակցիլ եկեղեցւոյ: Հայ առաքելական եկեղեցւոյ եւ հայրենասիրական կազմակերպութիւններու ջանքերով վերջապէս հայ ժողովուրդի մէջ յստակ պատկերացում մը ձեւաւորուած է աղանդներու գոյութեան ու անոնց պառակտիչ գործունէութեան մասին:

Մարդիկ սկսած են ակերի յաճախ իրենց վրդովմուր արտայայտել աղանդներու գործունէութեան հանդէպ: Անոնք աղանդ բառի մէջ «պառակտիչ», «բաժնող», «քայքայիչ» տարրերը տեսնելու հետ միատեղ, սկսած են զայն ընկալել նաեւ իբրեւ «դաւաճան» բառի հոմանիշ:

Բայց այս բոլորի դէմ աղանդներն ու անոնց ազդեցութեան տակ ինկածներն ալ ձեռքերնին ծալլած չեն նստած:

Նայիրի Մկրտիչեան-Տաղլեան

Hush Puppies is a Registered Trademark of Wolverine World Wide, Inc. ©2011



www.hushpuppies.ca

Feel the Hush.

Hush Puppies®

*we go nuts
for you!*



Bassé Express

Laval Tél.: 450-781-1255 Montréal Tél.: 514-387-4568

DDO Tél.: 514-683-0111 Blainville Tél.: 450-434-2525

Franchise disponible / Franchise available

www.bassenuts.com

«Ներկայումս Հայաստանի եւ Ատրպեյճանի ուղղման հաւասարակշռութիւնը հաւասար է»

Հարցազրոյց ուղղման մասնագէտ Արծրուն Յովհաննիսեանի հետ

Հարց.- Օդային պաշտպանութեան ծիրին մէջ, ուղղմանաւերու թուաքանակով Հայաստան կը գիշի ատրպեյճանական կողմին: ՀՀ պաշտպանութեան բանակը ի՞նչ ալընտրանքներով կը հաւասարակշռէ այս կացութիւնը:

Պատ.- Հայկական բանակի եւ ատրպեյճանական բանակի մօտեցումները այս հարցում տրամագծօրէն տարբերում են: Նրանք հիմնականում պատրաստուած են յարձակողական պատերազմի, մենք՝ պաշտպանողական: Այս առումով նշեմ մի քանի նկատառում: Նախ՝ հայկական բանակը ունի տարածաշրջանում լաւագոյն ՀՕՊ-ը (հակա-օդային պաշտպանութիւն), որի արդիւնաւէտութիւնը մենք տեսանք 2011-ի Սեպտեմբեր 12-ին, յետոյ դա հէնց պատերազմի փայլուն արդիւնքների աւանդական շարունակութիւնն է: Յիշեցնեմ որ մենք Արցախեան գոյամարտի ժամանակ մօտ

30 ատրպեյճանական թռչող ռազմական սարք ենք խոցել, ինչը, հաշուի առնելով մեր պայմանները՝ մասնագէտների եւ միջոցների պակաս, ՀՕՊ-ի միայն ցամաքային բաղադրիչ, բացառիկ արդիւնք է:

Ծիշդ է, իրենք թուապէս շատ թռչող սարքեր ունեն, սակայն օդուժի կառուցման իրենց մօտեցումը խորհրդային է եւ ընդամէնը քանակ է, այն էլ բազմատեսակ քանակ, որակ գրեթէ չկայ: Սարքերը հին են, ղեկավարման համակարգեր եւ գերճշգրիտ համակարգեր ու սպառազինութիւն չկան, իսկ սովորական սպառազինութիւնը յատկապէս յեռնային տեղանքում շատ ցած արդիւնաւէտութիւն ունի: Բացի դրանից, նրանք սեփական դպրոց եւ աւանդոյթներ այս ոլորտում չունեն: Իսկ ամենահետաքրքիրը այն է, որ սեփական փորձից դասեր չեն քաղում: Ես այս մասին մանրամասն անդրադարձեմ եմ իմ մենագրութիւններում:



Արծրուն Յովհաննիսեան



Skud հեռահար հրթիռ

Հարց.- Հեռահար ցամաքային հրթիռներու առնչութեամբ, ո՞վ կը գերազանցէ՝ ՊաՖՌՆ թէ Երեւանը:

Պատ.- Երկիր-երկիր դասակարգի հրթիռները, որոնք հիմնականում նախատեսուած են յարձակողական գործողութիւնների իրականացման համար ներկայումս տարածաշրջանում սկսում են մեծ դերակատարութիւն ունենալ, դառնում են քաղաքական զսպման գործիք: Գաղտնիք չէ, որ Ատրպեյճանի ղեկավարութիւնը բազմիցս յիսորտում էր իր ռազմատենչ յայտարարութիւններով: Սակայն Սեպտեմբեր 21-ին Երեւանում տեղի ունեցած զօրահանդէսը ապացուցեց, որ հայկական նմանատիպ հրթիռների տեսականին եւ հզօրութիւնը, ասել է թէ ներուժը շատ աւելի մեծ է: Մենք այսօր տիրապետում ենք այս դասի երկու տեսակի կարելոր հրթիռների, չհաշուած ոչակտիվ համազարկի հրետանային կայանքները: Դրանք են մարտավարական, 120 քմ. հեռահարութեամբ TOCHKA հրթիռային համալիրները, ինչպէս նաեւ 9K72 (SKUD) մարտական հրթիռները որոնք ունեն 300 քմ. հեռահարութիւն:

Սիւս էջը կը հովանաւորեն Ս. եւ Ս. Արքիս եւ Սեփ Մաճակեան

Յատուկ նշեմ, որ այս վերջին հրթիռից տարածաշրջանում ունեն միայն Հայաստանի Հանրապետությունը եւ Իրանը: Ոմանք կարծիք յայտնեցին այն մասին, որ 9K72 համակարգը չունի մեծ ճշգրտություն եւ հնացած է, սակայն յիշեցնեմ, որ տուեալ հրթիռային համալիրների ելեկտրոնային սարքաւորումները Հայաստանի ռազմարդիւնաբերական համալիրի կողմից կատարելագործուել են, ինչի արդիւնքում հայ զինուորականները առաւելագոյն հեռահարութեան վրայ (300 քմ.) ստացել են ոչ աւելի քան 150-200 մեթր շեղում: Սա հիանալի ցուցանիշ է: Յայտնի է, որ 9K72 (SKUD)-ի հրթիռները ունեն մինչեւ մէկ թոն մարտական ծայրամաս, ընդ որում մարտական մասը կարող են կազմել ոչ միայն սովորական, այլ նաեւ տարատեսակ ճշգրիտ հարուածող մասեր: Այս ամէնից զատ, ցանկացած զինատեսակի վերջնական կիրառողը մարդն է, եւ այստեղ պէտք է նշել, որ Հայաստանի հրթիռային հրետանաւորները զօրավարժութիւնների ժամանակ զբաղեցնել են փայլուն արդիւնքներ, հէնց SKUD-ի կիրառմամբ: Այո, այս հրթիռները նոր չեն, սակայն չի կարելի միանշանակ պնդել, որ դրանք արդէն հնացած են: Ի դէպ, նշեմ, որ ռուսական կողմը 2000-ի սկզբներին մարտական պայմաններում եւ զօրավարժութիւնների ժամանակ արձակել է նման աւելի քան 250 հրթիռ, այդ թւում նաեւ շահագործման ժամկէտն անցած, սակայն ոչ մի խափանման դէպք չի գրանցուել:

Հայկական հրթիռային յարձակողական ներուժի մասին կ'ուզենայի յատուկ նշել, որ դժուար չէ պատկերացնել, որ 9K72 (SKUD)-ի մօտ 1000 քիլոկրամնոց մարտական մասերի համար Ատրպէյճանի տարածքում կը գտնուեն տնտեսութեան կարեւորագոյն նշանակութեան նշանակէտեր, որոնց հարուածելու համար ամենեւին էլ զերճշգրիտ սպառազինութիւն հարկաւոր չէ: Իսկ զերճշգրիտ հարուածների համար արդէն յայտնի է, որ Հայաստանը ունի ТОЧКА մարտավարական հրթիռային համալիրներ, եւ չի բացառուում նաեւ հայկական ռազմարդիւնաբերական համալիրի կողմից WM-80 եւ այլ կայանների հրթիռների կատարելագործումը, մինչեւ զերճշգրիտ միջոցների: Այս ամէնի համագումարը հաշուի առնելով, կարելի է հաստատել, որ Հայաստանի յարձակողական ներուժը Ատրպէյճա-



ՀՀ բանակի դիպուկահարներ (sniper)

նին գերազանցում է:

Հարց.- Հայաստանի բանակը ՀՀ 20-ամեակին նուիրում զօրահանդէսին ցուցադրեց «Կոուկկ» անօդաչու հետախուզական ինքնաթիռները: Նման զինատեսակի արտադրութիւն տարածաշրջանին մէջ այլ երկիր կ'իրագործէ: «Կոուկկ» ինքնաթիռ է միայն կամ կարողութիւնը ունի մասն հրթիռային համակարգով օժտուելու:

Պատ.- Մեր «Կոուկկ»-ը ի հարկէ բացառիկ մի սարք է, որը ստեղծուել է հայ մասնագէտների շնորհիւ, դա շատ կարեւոր իրողութիւն է: Ի հարկէ այն իր հնարաւորութիւններով որոշակիօրէն գիջում է աշխարհի առաջատար իսրայէլական կամ ամերիկեան շատ նման սարքերի, սակայն ունի բաւականին լաւ տուեալներ: Նման սարքերի ստեղծմամբ զբաղուում են նաեւ թրքական ընկերութիւնները եւ Իրանի ռազմարդիւնաբերական համալիրը: Թէ ինչ արդիւնքներ են նրանք գրանցել՝ դժուար է ասել, սակայն հաստատ այդ արդիւնքները այնքան էլ մեծ չեն, եւ այդ սարքերը հաւանաբար նորից ինչ որ առումով կը գիջեն նոյն ամերիկեան եւ իսրայէլեան սարքերին: Ատրպէյճանում ներկայումս արտադրուում են իսրայէլեան որոշ սարքեր, սակայն դրանք չեն ստեղծում ատրպէյճանցի մասնագէտները, աւելին՝ նրանք այդ գործարանում ընդամէնը իրար են միացնում

Իսրայէլից բերուած մի քանի կազմածներ: Մեր սարքը ներկայումս իրականացնում է հիմնականում հետախուզութիւնը եւ կրակի կառավարման խնդիրներ, ժամանակի հետ կարող է իրականացնել նաեւ այլ խնդիրներ: Ի դէպ, նշենք, որ «Կոուկկ»-ը մեր մասնագէտների միակ ստեղծագործութիւնը չէ, ներկայումս իրականացուում են նաեւ նոր սարքերի ստեղծման լայնածաւալ աշխատանքներ:

Հարց.- Ռազմական արդիւնաբերութիւնը Հայաստանի մէջ այսօր ինչ վիճակի մէջ է: Ի՞նչ կ'արտադրուի:

Պատ.- Ռազմական արդիւնաբերութիւնը Հայաստանի Հանրապետութեան նման փոքր երկրի համար շատ կարեւոր է, սակայն նաեւ բարդ ոլորտ է: Գաղտնիք չէ, որ մենք ղեռ պատերազմի ժամանակ կատարում էինք այնպիսի վերանորոգումներ, որոնք կատարում էին խորհրդային մեծ գործարանները: Ներկայումս եւս մեզանում կատարում են տարբեր սարքերի վերանորոգումներ, որոնք ժամանակին կատարուել են միայն Ռուսաստանում: Օրինակ հրասայլեր, թռչող սարքեր եւ այլն: Արտադրութիւնը եւս, չնայած շատ մեծ ծաւալ չունի, սակայն զգալիօրէն թափ է հաւաքում: Ներկայումս արտադրում են զինատեսակների որոշ նմոյշներ, զինամթերք կամ հանդերձանքի պարագաներ: Մեզանում ստեղծուել են բացառիկ ռատիոմեքե-

Այս էջը կը հովանաւորեն Ա. Եւ Ա. Մայի Եւ Աստուծոյ Թորոտան



Plaza Volare
SALLE DE RÉCEPTION - CÉLÉBRATION DE MARIAGE



CROWNE PLAZA
MONTREAL AÉROPORT

6600, Côte-de-Liesse,
Saint-Laurent | 514-735-5150
www.plazavolare.com

La Plaza
SALLES DE RÉCEPTION



420 Sherbrooke West
Montreal | 514-499-7777
www.la-plaza.ca



6086 Sherbrooke East
Montreal | 514-255-2922
www.buffetantique.com

EMBASSY
PLAZA

1003 Boul. Curé-Labelle
Laval | 450-781-0606
www.embassyplaza.com

LE CHALLENGER
SALLES DE RÉCEPTION

2525 rue des Nations
Saint-Laurent | 514-337-7160
www.challengerpiazza.com

PLAZA
SUR LE LAC

1 Place De La Belle-Rive
Laval | 450-681-0053
www.plazasurlelac.com

PLAZA
LUCE
DESIGN RESTAURANT

Catering Division
514-965-LUCE (5823)
www.plazaluce.com

նական սարքաւորումներ, որոնք տարբեր ցուցահանդէսներէ ժամանակ ապշեցրել են աշխարհի առաջատար շատ մասնագէտները: Մենք լաւ ականդոյթներ ենք ձեռք բերում ՀՕՊ սարքաւորումների ստեղծման գործում: Զօրահանդէսի ժամանակ յայտարարուեց, որ կատարելագործուել են ՀՕՊ շատ սպառազինութիւններ:

Ներկայումս Ռուսաստանի հետ իրականացուած են մի քանի այլ նոր գործարանների վերագործարկման ծրագրեր, որոնցում կ'արտադրուեն նոր նմոյշներ, մեքենաներ կամ զինատեսակներ:

Հարց.- Ինչպէս կը գնահատէք Հարաւային Կովկասի երեք երկիրներու ռազմաբաղաձեւակաւ կացութիւնը այսօր:

Պատ.- Ներկայումս տարածաշրջանի երեք նախկին խորհրդային երկրների ռազմաքաղաքական իրադրութիւնը բաւականին հետաքրքիր է: Այդ իրադրութիւնը թելադրուած է նախ այն հակամարտութիւններով, որոնք առկայ են՝ Արցախեան հիմնախնդիր, Աբխազիայի, Օսէթիայի եւ այլ խնդիրներ, ինչպէս նաեւ աշխարհաքաղաքական զարգացումներով կամ ասել է թէ՛ տարածաշրջանի վրայ մեծ տեղութիւնների ազդեցութեամբ: Գաղտնիք չէ եթէ ասենք, որ տարածաշրջանի միակ երկիրը Հայաստանի Հանրապետութիւնն է, որը ունենալով ռազմավարական յարաբերութիւններ Ռուսաստանի հետ, միաժամանակ լաւ յարաբերութիւններ ունի աշխարհի այլ ուժային կեդրոնների հետ: Վրաստանի յարաբերութիւնները Ռուսաստանի հետ թշնամական են, սա-



Մասնայատուկ ուժերու (commando) զինուորներ մարզումի ընթացքին

կայն ներկայումս պատերազմի հաւանականութիւնը այնքան մեծ չէ, միւս երկրների հետ եւս կան որոշակի խնդիրներ, սակայն ամէն ինչ կառավարելի է: Ատրպէյձանի յարաբերութիւնները Իրանի հետ, մեղմ ասած բարեկամական չեն, Հայաստանի դէպքում ամէն ինչ միանգամայն պարզ է, թշնամական, իսկ Ռուսաստանի հետ յարաբերութիւնները եւս բարեկամական չի կարելի համարել: Հայաստանի յարաբերութիւնները հարեւանների հետ բարեկամական են, չհաշուած թրքական երկու պետութիւնները, որոնք բացայայտ թշնամական են տրամադրուած: Հայաստանի Հանրապետութեան եւ

Արցախի պետական սահմանների վրայ կայ լարուածութիւն, որը երբեմն վերածուած է կարճատեւ, սակայն իսկական մարտական գործողութիւնների: Սակայն, դրանով հանդերձ, հէնց այս պահին մեծ մարտական գործողութիւնների վերսկսման հաւանականութիւնը մեծ չէ: Յատուկ շեշտում եմ մեծ մարտական գործողութիւններ եւ չեմ նշում պատերազմ, քանի որ պատերազմը իրականում ընթացքի մէջ է, ուղղակի վարում է որոշակի այլ պայմաններով ու կանոններով: Ներկայիս ոչ մեծ հաւանականութիւնը չի նշանակում սակայն, որ այն անհաւանական է որոշակի յստակ ժամանակահատուածում ընդհանրապէս: Ատրպէյձանի աշխոյժ սպառազինումը, ինչպէս նաեւ թշնամական մթնոլորտի ձեւաւորումը, կարող է վերածուել մարտական գործողութիւնների: Սակայն, դրանով հանդերձ, պէտք է ասել, որ ներկայումս Հայաստանի եւ Ատրպէյձանի ռազմական հաւասարակշռութիւնը առնուազն հաւասար է, եթէ չասենք, որ շատ բազմաթիւներում մենք ենք աւելի շահեկան վիճակում: Սա ինչ որ առումով զարմանալի է, քանի որ այդ հաւասարակշռութեան պահպանման կամ աւելի ճիշդ մի կողմից գերազանցութեան ապահովման իսկ մեր կողմից գերազանցութեան չէզոքացման համար ներդրուող միջոցները բաւարար չեն:

ՀԱՐՑԱԶՈՐՅՑԸ ՎԱՐԵՑ՝
ՎԱՀԱԳՆ ԳԱՐԱԳԱԾԵԱՆ



Կոունկ անօդայնու օդանավ

Սիյա Էջը կը հովանաւորեն Ս. Էս Ս. Սերգեյ Էս Սիյն Քէյթեան

Քսան տարի անց... Տաս տարի ետք...



Արարատեան դաշտի մայրամուտը

Քսան տարի առաջ, Օգոստոս 24-ի առաջին ժամերուն, շօշափեցի՝ ինծի համար մինչեւ այդ օրը վերացական սրբութիւն համարուող Հայրենիքը, եւ հակառակ այդ մտքի համար հասուն համարուող տարիքիս, պահ մը ինծի թուաց, որ երբ օդանաւէն իջնեմ հո՛ղ պիտի տեսնեմ. չէ՞ որ «Հայրենի հող» արտայայտութիւնը, մեզի փոխանցուած հայեցի դաստիարակութեան ընթացքին հնչող ամենօրեայ արտայայտութիւնն էր... Բայց օդանաւէն իջալ ու հողի փոխարէն տեսայ չոր ու սեւ գետին մը: Պահ մը ցնցուեցայ ու յետոյ քիթիս տակէն ծիծաղեցայ մտածածիս համար, իսկ ուրիշ ո՞ւր կրնար վայրէջք կատարել օդանաւը...

Գրեթէ արեւածագ էր. ուղղուեցանք «Հանրապետութեան հրապարակ» ու սկսանք երգել ժամեր առաջ այնտեղ պարզուած հայոց եռագոյնին տակ (Օգոստոս 23, Հայաստանի անկախութեան հռչակագրի ընդունման օրն է): Դաշնակցական երիտասարդներէ կազմուած առաջին խումբն էինք, որ Հայաստանի վերանկախացումէն ետք մուտք գործեցինք Հայրենիք, իբրեւ դաշնակցականներ:

Վերացական թուացող իրական Հայրենիքի հետ բախումը խառն զգացումներ կը յառաջացնէր: Կայծակի արագութեամբ անցան 15 օրերը՝ առանց շատ բան տեսնելու. խառն իրավիճակ էր՝ օրուան յատուկ ժամերուն միայն կարելի էր շրջանէ շրջան տեղաշարժիլ... ամայի փողոցներ... դատարկ խանութներ... կոպիտ մարդիկ... գեղեցիկ ու անխնամ բնութիւն... սքանչելի ճարտարապետութեամբ կառուցուած վանքեր ու եկեղեցիներ... 15 օրերու հպանցիկ ակնարկով այդպիսին էր Հայրենիքս, զոր տեսայ առաջին անգամ, սակայն այդ սեւ ու չոր գետնէն մինչեւ Գառնի ու Գեղարք իմս էին բոլորը, ինծի կը պատկանէին նոյնիսկ մարդոց կոպիտ արտայայտութիւնները՝ չէ՞ որ անոնք կը հնչէին հայերէն... Առաջին ակնթարթէն ետք այդ չոր ու սեւ թուացող գետինը այնքան փափուկ էր ու փխրուն, որ մինչեւ ծունկերս խրուեցայ այնտեղ ու զգացի իսկական հողին ջերմութիւնը: Ահա թէ ինչ կը

նշանակէ անծայրածիր աշխարհի մէջ ունենալ կտոր մը երկիր եւ զգալ անոր սեփականութեան ուժը...

Կը հաւատամ այն առասպելական խօսքին, թէ Հայաստանի մէջ ձգողական ուժ մը կայ, եթէ մէկ անգամ տեսար միշտ պիտի ուզես տեսնել: Սակայն դարձեալ տեսնելը զիս չէր գոհացներ՝ պէտք էր վերադառնալ: Բայց ինչպէ՞ս...

Յաջորդ տարի Հայաստան եկալ ուսանելու: Երեք ամիս ետք բոլոր պայմանները վճռեցին վերադառնալ Սփիւռքեան ծննդավայր... կեանքիս ամենադառն իրականութեան հետ անհաշտ մնալով վերադարձայ՝ մէջս կրելով իրական հայրենիքը...

Տաս տարի առաջ դարձեալ Հայաստան եկայ՝ ուսանելու պատրուակով եւ Հայաստանէն չհեռանալու վճռականութեամբ: Ուսումս ստացայ աշխատանքի հետ գուգահեռ, ընտանիք կազմեցի ու կեանքիս ամենամեծ երջանկութիւնը այն է, որ աղջիկս՝ Ժառանգելով Սփիւռքի դաստիարակութեան բարձր արժէքները, նաեւ բախտաւորութիւն ունեցած է լոյս աշխարհ գալու ճիշդ տեղը, աշխարհի այն անկիւնին մէջ, ուր կը զգայ պատկանելիութեան զգացումը:

Տաս տարի է կը վայելեմ Հայաստանի մէջ ապրելու հաճոյքը եւ յաճախ «պոռոռաւօ» կ'ըսեն ինծի, այնքան շեշտուած «պոռաւօ» մը, որ կը զայրացնէ զիս, կարծես Հայաստանի մէջ ապրելը՝ պատերազմի առաջին գիծին վրայ կռուելուն համազօր հերոսութիւն կը համարեն: Անոնց կարծիքով «չատ հայրենասէր»ը ան է, ով Հայաստանի մէջ կ'ապրի:

Տաս տարի է կը շփուիմ իսկական հայրենիքի ու հայրենակից տարբեր մարդոց հետ եւ վերջապէս եզրակացուցի, թէ ի՞նչ է հայրենասիրութիւնը:

Արդեօ՞ք Գամիշլիի մէջ, երկրէն կտրուած ամենախուլ անկիւնին մէջ ապրած հայրս, որ ամբողջ համայնքը իր ուսերուն առած կ'ապրէր Հայաստանով ու հայութեամբ՝ հայրենասէր չէ՞ր, որ Հայաստան չեկաւ ապրելու:

Արդեօ՞ք իր գործարարական ծրագիրները իրականաց-

Այս էջը կը հովանաւորեն Մ. և Մ. Գէորգ և Պարսր Գալլոյլեան



Սպրիլ 23, 2011, երիտասարդական ջահերթ Երևանի մէջ

նելու համար Հայաստանը բարենպաստ երկիր մը համարող այն ընտանիքը, որ զգուանքով կը խօսի հայաստանցիի մասին եւ հակառակ իր մեծ շահոյթներուն ու բարեկեցիկ կեանքին հերոսութիւն կը համարէ իր Հայաստան տեղափոխուելը, հայրենասէ՞ր է...

Արդեօ՞ք Սփիւռքի մէջ ապրող իւրաքանչիւր խմբագիր, ազգային գործիչ, ուսուցիչ, կամ երիտասարդ, որ գիշերը ցերեկին խառնելով կը նպաստէ հայապահպանութեան գործին եւ կ'ապրի Հայաստանի մէջ ապրելու հնարաւորութիւն ստեղծելու երազանքով կամ անոնցմէ շատերը նոյնիսկ հայրենիքը մէկ անգամ տեսնելու յոյսով, հայրենասէր չե՞ն...

Արդեօ՞ք Հայաստան տեղափոխուած այն սփիւռքահայ, որ կը նպաստէ խեղճ ու կրակ ժողովուրդի շահագործման, կաշառակերութեան ու երկրի մէջ տիրող փտածութեան, կամ գործի բերումով Հայաստանի մէջ է, բայց էութեամբ Հայաստանէն դուրս՝ նոյնիսկ Հայաստանի հեռուստատեսութեան ալիքներուն անձանօթ, հայրենասէր է...

Արդեօ՞ք Հայաստանէն հեռացած մտաւորականներն ու արուեստագէտները, որոնք տեղափոխուեցան Հայաստանէն, բայց հայրենիքին չհատարկուեցան եւ արտերկրի մէջ օտարներու մէջ կը տարածեն հայկական մշակոյթը ու կ'ապրին Հայաստան վերադառնալու երազով, հայրենասէր չե՞ն...

Արդեօ՞ք Հայաստանէն չհեռացող այն ծախուած մտաւորականներն ու հայկական մշակոյթը աղաւաղող արուեստագէտները, հայրենասէր են...

Իւրաքանչիւր հարցիս պատասխանի մասին մտածելէն ետք հասկցայ, որ հայրենասիրութիւնը պատկանելիութեան զգացումն է եւ այդ զգացումը ապրելակերպի վերածելն է:

Իւրաքանչիւրս պէտք է զգայ, որ ինք հայ ազգին պատկանող զաւակներէն մէկն է ու չթերազնահատէ կամ չարհամարհէ նոյն ազգի ոեւէ զաւակ, ուր ալ գտնուի ան, ինչ թեւի ալ պատկանի: Եթէ անոր թերութիւններուն մասին պիտի խօսինք, խօսինք ցաւով, սրբազրելու յոյսով, օգնելու մտադրութեամբ եւ ոչ թշնամանքով... Սփիւռքահայը հայաստանցիին համար չըսէ «ասոնք ասանկ են», հայաստանցին ալ սփիւռքահայուն չ'ըսէ դուք հայ չէք: Ինչ ալ ըլլանք նոյն ազգին կը պատկանինք...

Հայաստան տեղափոխուած սփիւռքահայը եթէ Հայաստանի պատկանելու հաճոյքը զգա՛յ, իր տեղափոխուելը ոչ թէ հայրենասիրական թմբկահարումի կամ հերոսութեան պէտք է վերածէ, այլ հաճոյքի, իսկական վայելքի, սեփական տան մէջ ապրելու բնական երեւոյթի:

Թող կոպիտ չհնչէ, բայց իմ կարծիքովս Հայաստան տեղափոխուած իւրաքանչիւր սփիւռքահայ Հայաստան հաստատուած է՝ դրդուած անձնական այն շահերէն, զորս կարելի է բնութագրել հետեւեալ ձեւով՝ գործարարական ծրագրերը իրականացնելու, իր զաւակներու հայեցի կրթութիւնը ապահովելու, հոգեկան բաւարարութիւն եւ գոհունակութիւն զգալու համար: Այս պատճառներէն իւրաքանչիւրը կամ բոլորը միասին առած, բոլորն ալ անձնական են եւ անոնցմէ իւրաքանչիւրի իրականացումը ոչ թէ հերոսութիւն է այլ հնարաւորութիւն, որ կեանքի պայմանները մէկուն կ'ընձեռէ՝ միւսին ոչ: Ուստի Հայաստան հաստատուած սփիւռքահայուն ո՛չ թէ «պուաօ» պէտք է ըսել, այլ պէտք է երանի տալ... Իսկ Հայաստանէն դուրս ապրող հայերուն, որոնք ունին ազգին ու հայրենիքին պատկանելու զգացումը՝ մաղթել, որ անոնց համար նոյնպէս հնարաւորութիւն ստեղծուի, որ անոնք դան Հայաստան՝ ապրելու կամ յաճախ տեսնելու... Իսկ հայրենիքը ամէն պարագային սրտի մէջ է իւրաքանչիւր հայու, որ ունի անոր պատկանելու սրբազան զգացումը:

Փառք Աստուծոյ, որ ՔՍԱՆ ՏԱՐԻ ԱՆՑ, հայրենիքը մնաց ազատ ու խաղաղ՝ իր ծածանող եռագոյն դրօշի տակ...

Փառք Աստուծոյ, որ ՏԱՍ ՏԱՐԻ ԵՏՔ դեռ բազմաթիւ սփիւռքահայերու հետ կը շարունակենք վայելել Հայաստանի մէջ ապրելու հաճոյքը...

«Պուաօ» բոլոր այն սփիւռքահայերուն, որոնք օտարութեան մէջ ստեղծած են անհող Հայրենիք ու անկարելին կը փորձեն՝ օտարացման յորձանքներէն փրկելու նոր սերունդները եւ զիրենք քիչ մը աւելի երկար հայ պահելու յոյսով, մերթ ընդ մերթ կը հասցնեն Հայաստանի ափեր՝ խօսելով ու պատմելով Հայաստանի մասին, կամ կը ստեղծեն անոր հետ շփուելու եւ այցելելու հնարաւորութիւններ:

Նայիրի Մկրտիչեան-Տաղեան

Այս էջը կը հովանաւորէ Գրիգոր Ալի Պապարեան

occasiongabriel.com



ONE GROUP ONE FORCE



CERTIFIED
VEHICLES

HONDA
Certified
Used Vehicles

PRE-OWNED VEHICLES
FINANCING STARTING AT

0.9%*



NISSAN JUKE



HONDA CR-Z

*Subject to credit approval. Some conditions apply. Financing starting at 0.9% on select models only. See Honda Gabriel and Nissan Gabriel for all details.



NEW VEHICLES • PRE-OWNED VEHICLES

For more information, please contact

Harry Sayan, hsayan@gabriel.ca

Kevork Asadourian, kasadourian@gabriel.ca

Manoug Khadjadourian, mkhadjadourian@gabriel.ca



514-324-7777



514-327-7777

Հարցազրույց ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտեի Անդամացուցիչ Րաֆֆի Տօնապետեանի հետ

«Նոր սերունդը համախմբելու, անոր ազգային դաստիարակութիւն ներարկելու
եւ զայն գաղութային ազգային կեանքի ապագայ դրօշակիրը դարձնելու
առաջադրանքը՝ սրբազան առաքելութիւնն է»

Հարց.- 2011-ի ամրան Հայաստանի մէջ կայացաւ ՀՅԴ 31-րդ Ընդհանուր ժողովը: Հայրենի մեր հանրապետութիւններուն հանդէպ ի՞նչ պարտաւորութիւններ եւ առաջադրանքներ ստանձնեց կուսակցական իւրաքանչիւր շրջան:

Պատ.- Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւններու հզօրացման եւ քաղաքական գետնի վրայ անոնց դիրքերու ամրապնդման համար, Ընդհանուր ժողովը բանաձեւեց յատուկ որոշումներ:

Յառաջիկայ երկամեակին Հայաստանի մէջ պիտի կայանան խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններ: Ընտրութեանց նախօրեակին, կուսակցութիւնը նպատակադրած է հայրենիքի ընկերային, տնտեսական, առողջապահական եւ այլ ոլորտները արժեւորող յատուկ թղթածրարներ պատրաստել, որպէս նախընտրական փլաթֆորմ: Ինչպէս այլ կուսակցական շրջաններ, մեր շրջանը, փորձագէտ կուսակցականներու միջոցով իր աջակցութիւնը կը բերէ այս աշխատանքի մասնագիտական բաժնի մշակման գծով:

Արցախի գծով, աշխատանքները կը տանինք երկու ճակատի վրայ: Առաջինը՝ Արցախի սահմանամերձ եւ ռազմագիտական կարեւոր նշանակութիւն ունեցող շրջաններու վերաբնակեցման ծրագիրներու իրագործումն է: Երկրորդը՝ Գանատայի տարածքին գործող Հայ Դատի յանձնախումբերու մեր ցանցին միջոցով, արցախեան հիմնահարցին հայանպաստ դիրքորոշում ստեղծել գանատական քաղաքական եւ կառավարական շրջանակներուն մէջ: Հիմնականօրէն, մենք քարոզական աշխատանք ծաւալած ենք Գանատայի մէջ, նպատակ ունենալով գանատական կառավարութիւնը մղել որ ներգործօն մասնակցութիւն ունենայ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը խաղաղ լուծումի մը յանգեցնելու աշխատանքին մէջ եւ նպաստէ տարածաշրջանին մէջ քաղաքական կառուցութիւն հաստատելու ջանքերուն:

Այստեղ նշեմ նաեւ, որ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը, տարիներէ ի վեր կը գտնուի թրքական եւ ատրպէյճանական հակաքարոզական արշաւները սանձազերծելու պարտադրանքին տակ: Թրքական ճակատին վրայ, ստիպուած ենք դիմակազերծել ուրացման անոնց քաղաքականութիւնը Գանատայի մէջ, յատկապէս ակադեմիական եւ համալսարանական շրջանակներէ ներս, իսկ Ատրպէյճանի պարագային, ստիպուած ենք հակադարձելու հայերը իբրեւ յարձակապաշտ կողմ ներկայացնելու քարոզչութեանց: Գանատացի քաղաքական դէմքերու եւ պաշտօնատարներու հետ մեր հանդիպումներու ընթացքին, յաճախ անոնց կը փոխանցենք պատ-



Ձախէն աջ՝ Րաֆֆի Տօնապետեան, Գանատայի արտաքին գործոց նախարար Ծոն Պէյրոս եւ Հայ Դատի յանձնախումբի Օթթաւայի գրասենեակի տնօրէն Ռուբէն Գուլումճեան

մական վաւերագրական փաստաթուղթերու վրայ հիմնուած Հայ Դատի յանձնախումբերու պատրաստած Հայկական Յեղասպանութեան եւ Արցախեան հիմնահարցի մասին թղթածրարները:

Հարց.- 2011-ի Մայիսին Գանատայի մէջ կայացան խորհրդարանական ընտրութիւններ: Ի՞նչ ներդրում ունեցան Հայ Դատի յանձնախումբերը զանազան կուսակցութիւններու թեկնածուներու զօրակցութեանց գծով:

Պատ.- Ինչպէս գիտէք, Գանատայի մէջ դաշնակցային մակարդակի վրայ կայացող խորհրդարանական ընտրութիւններու ընթացքին, Գանատայի Հայ Դատի յանձնախումբը կը զօրակցի այն թեկնածուներուն, որոնք աջակցած են Հայկական Յեղասպանութեան ճանաչման աշխատանքին եւ կամ գանատահայ զաղուծի որոշ հարցերու արծարծման ուղղութեամբ հայանպաստ դիրքորոշում ունեցած են: Նոյնը պատահեցաւ այս ընտրութիւններուն, երբ զօրաշարժի ենթարկեցինք Քեպէզի, Օնթարիոյի, Պրիթիչ Գոլոմպիայի եւ այլ շրջաններու Հայ Դատի յանձնախումբերն ու միաւորները: Մեր ակնկալած արդիւնքները լաւ էին: Բայց, ինչպէս գիտէք, Քեպէզի մէջ Նոր Դեմոկրատ կուսակցութեան (NDP) նարնջագոյն ալիքի անակնկալ յորձանքն ու յաղթանակը մեզի

Այս էջը կը հովանաւորեն Մ. եւ Ս. Մարութ եւ Մանիա Լայուսպեան



Our SERVICE makes the difference!

- Free mobile service
- Windshield replacements
- Stone chip repairs
- Tinted windows
- Lifetime warranty against leaks
- Remote starter
- Car radio and alarm system
- Windshield vandalism claims billed directly
- We pay higher deductibles



GET A FREE QUOTE NOW!

514.856.0580

8855, Henri-Bourassa West, St-Laurent, Qc H4S 1P7

vitretech.com



համար ալ անակնկալ էր, ինչպէս որ ամբողջ գանատական քաղաքական դաշտին համար զգայացունց յեղաշրջում մըն էր: Սակայն այստեղ նշեմ, որ իբրեւ ընկերվարական կուսակցութիւն, մեր յարաբերութիւնները ընկերվարական գաղափարախօսութիւններու դրօշակիր Նոր Դեմոկրատ կուսակցութեան հետ միշտ լաւ եղած են, աւելի՛ն՝ նոր դեմոկրատները միշտ նեցուկ կանգնած են խորհրդարանին մէջ ներկայացուած իրերայաջորդ Հայկական Ցեղասպանութեան բանաձեւերուն: Ընտրութիւններուն յաջորդող հանգրուանին, մեր յանձնախումբերու ներկայացուցիչները արդէն ծանօթացման հանդիպումներ ունեցած են նորընտիր NDP-ականներու հետ:

Ընտրութիւններուն յաղթանակած իշխող Պահպանողական կուսակցութեան հետ մեր յարաբերութիւնները վերջին հնգամեակին կը գտնուին իրենց բարձրակէտին:

Ազատական կուսակցութեան հետ պատմականօրէն միշտ սերտ եղած են մեր յարաբերութիւնները: Հայաշատ թաղամասերու մէջ իրենց թեկնածութիւնը առաջադրած Ազատական թեկնածուներ, որոնք Հայկական Ցեղասպանութեան ճանաչման գծով դրական գործունէութիւն ցուցաբերած են, արժանացած են շրջանի հայութեան քուէին: Այսօր, մենք կը շարունակենք մեր հանդիպումները անոնց ներկայացուցիչներուն հետ:

Այս ընտրութիւնները յատկանշուեցան նաեւ հայ թեկնածուներու մասնակցութեամբ: Պահպանողական թեկնածու Յակոբ Էվերեկլեանի եւ Ազատական կուսակցութեան թեկնածու Նուշիկ Էլոյեանի ընտրապայքարին իրենց մասնակցութիւնը բերին Մոնթէրէյլի, Լաւալի եւ Թորոնթոյի Հայ Դատի յանձնախումբերէն միաւորները: Հակառակ համազարգացման գորակցութեան, երկու հայ թեկնածուներն ալ յաջողութեան չհասան, ի մասնաւորի վերը յիշուած նարնջագոյն ալիքին պատճառով:

Մենք կը կարծենք, որ այս երկու թեկնածուներու փորձառութիւնը օրինակ պիտի ծառայէ յառաջիկային, որպէսզի հայ գաղութի նոր սերունդի ներկայացուցիչներ նետուին գանատական քաղաքական դաշտ:

Հարց.- 2011-ին ի՞նչ էր Գանատայի Հայ Դատի յանձնախումբի եւ անոր Օթթաուայի գրասենեակի աշխատանքային ծիրը:

Պատ.- Օթթաուայի գրասենեակը կը համադրէ եւ գործադրութեան հոլնի մէջ կը դնէ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի բազմաբեւեռ ծրագիրները: 2015-ի Եղեռնի 100-ամեակի ոգեկոչման սեմին, յանձնախումբը արդէն նախաձեռնութիւններ աշխատանքներու ձեռնարկած է: Անմիջապէս որ ծրագիրները պատրաստ ըլլան, զանոնք պիտի դնենք հանրութեան տրամադրութեան տակ, որպէսզի ի մի հաւաքուելով, համախումբ շարքերով իրագործենք 100-ամեակի ոգեկոչումը: Մեր ակնկալութիւնն է, որ 2012-ին ստեղծուի համազարգացման մարմին մը, որ 100-ամեակին ընդառաջ սկսի հոլնի մէջ դնել աշխատանքները:

Ուիսիփէկի մէջ կառուցուելիք Գանատայի Մարդկային իրաւանց թանգարանին մէջ Հայկական Ցեղասպանութեան տաղաւարին արժանաւոր տեղ մը յատկացնելու առնչութեամբ, յանձնախումբը 2011-ին հրապարակուած կոչով մը յստակացուց իր կեցուածքը: Յանձնախումբը կը յուսայ, որ թանգարանը Հայկական Ցեղասպանութեան բաժնի պատմական եւ արխիւային բովանդակութեան լայն տեղ տրամադրէ:

2011-ի Հոկտեմբեր 21-ին, Օթթաուայի մէջ նախաձեռնութիւններով հանդիպում մը ունեցանք Գանատայի արտաքին գործոց նախարար Ժոն Պէյրտի հետ: Նախարարին յանձնուեցան Հայկական Ցեղասպանութեան եւ Լեռնային

Ղարաբաղի հիմնահարցին մասին յանձնախումբին կողմէ պատրաստուած թղթածրարներ: Այս հանդիպման ընթացքին, Հայաստան-Գանատա քաղաքական-տնտեսական յարաբերութիւններու զարգացման անդրադառնալով, շեշտեցինք Հայաստանի մէջ գանատական դեսպանատուն մը հաստատելու անհրաժեշտութիւնը:

Այլ գետնի վրայ, դաշնակցային ընտրութիւններէն ետք, Հայ Դատի յանձնախումբի նախաձեռնութեամբ, Հոկտեմբեր 25-ին, Գանատայի խորհրդարանին մէջ կայացաւ Հայաստան-Գանատա խորհրդարանական բարեկամութեան խմբակցութեան դիւանի ընտրութիւնը: Ժողովը նախագահութեան պաշտօնին վերստին ընտրեց Պահպանողական կուսակցութեան անդամ տոքթ. Հարըտ Ալպրէսթը, իսկ փոխնախագահ ընտրուեցան Ժիմ Քարիճիանիս (Ազատական), Ալեքսանտր Պուլէրիս (Նոր Դեմոկրատ) եւ Ժօ Տանիէլ (Պահպանողական): Ներկայիս աշխատանքները կեդրոնացուցած ենք խմբակցութեան անդամներու թիւը բարձրացնել:

Հարց.- ՀՅԴ Գանատայի Երիտասարդական միութեան (ԳԵՄ) եւ Պատանեկան միութեան (ԳՊՄ) աշխատանքները ի՞նչ ընթացքի մէջ էին անցնող տարեշրջանին:

Պատ.- Հ.Յ.Դաշնակցութեան Գանատայի կառույցին համար, նոր սերունդը համախմբելու, անոր ազգային դաստիարակութիւն ներարկելու եւ գայն գաղութային ազգային կեանքի ապագայ դրօշակիրը դարձնելու առաջադրանքը՝ սրբազան առաքելութիւն է:

Նշեմ, որ երկու կառույցներն ալ թուային աճ արձանագրած են, սակայն, ինչպէս գիտէք, Դաշնակցութեան համար թուաքանակէն աւելի կարեւոր է որակը եւ այս առնչութեամբ, միշտ պահանջած ենք պատանեկանի վարիչներէն եւ երիտասարդականի պատասխանատուներէն, որպէսզի կատարեն իրենց լաւագոյնը:

2011-ի ամրան, երիտասարդականի կամաւոր վարիչներու խումբ մը այցելեց Հայաստան, ուր Վանաձորի ճամբարներէն մէկուն մէջ երկշաբաթեայ ազգային-դաստիարակչական ծրագիր մը գործադրեցին հայաստանցի պատանիներու համար:

Պատանեկանը իր կարգին կը պատրաստուի 2012-ի հայաստանագնացութեան:

Հարց.- Երկարատեւ սպասումէ ետք, Օթթաուայի մէջ նշանակուեցաւ Հայաստանի Հանրապետութեան նոր դեսպան: Համագործակցութեան ի՞նչ աշխատանքներ կատարուած են ցարդ:

Պատ.- Մենք միշտ շեշտած ենք, որ Գանատայի մօտ Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչութիւնը դեսպանի մակարդակով ըլլայ: Ուրախ ենք, որ մի քանի տարուան ընդմիջումէ ետք, Հայաստանի Հանրապետութիւնը Գանատայի մէջ դարձեալ կը ներկայացուի լիազօր դեսպանի մակարդակով: Այսօր, նոր նշանակուած դեսպան պրն. Արմէն Եգանեանի հետ մենք ամենօրեայ կապի մէջ ենք եւ մեր համագործակցութիւնը դրական է ու արդիւնաբեր: Մենք կը հաւատանք, որ դեսպանի մը ներկայութիւնը կարեւոր է Գանատա-Հայաստան յարաբերութիւններու զարգացման համար: Այլ գետնի վրայ, տարիներէ ի վեր լուրջ աշխատանք կը տանինք նաեւ Հայաստանի մէջ գանատական դեսպանատան մը հիմնադրման գծով:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՎԱՐԵՑ՝
ՎԱՀԱԳՆ ԳԱՐԱԳԱԾԵԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION HAYASTAN CANADA INC.
HAYASTAN FOUNDATION CANADA INC.

Շնորհալուր Նոր Տարի եւ Ա. Ծնունդ

Սեպտեմբեր 17-ին, Շուշի քաղաքին մեջ Հանդիսաւոր կերպով տեղի ունեցաւ վերանորոգուած Պռոշեան պողոտայի պաշտօնական բացումը, որուն նորոգութեան ծախսերը ստանցւած էր ՀՀ Հիմնադրամի Մոնթրէալի վարչութիւնը:

Բացման հանդիսութեան ներկայ էին ԼՂՀ վարչապետ Արայիկ Յարութիւնեանը, ՀՀ Հիմնադրամի գործադիր տնօրէն տիար Արա Վարդանեանը, Մոնթրէալի մասնաճիւղի վարչութեան ատենապետ տիար Անդրանիկ Շիրինեանը եւ բազմաթիւ հիւրեր, շուշեցիներ եւ Մոնթրէալէն ժամանած հայրենակիցներ: 252մ երկարութիւն եւ 8մ լայնութիւն ունեցող պողոտան քաղաքի գլխաւոր մուտքը հանդիսացող Ղազանչեցոց փողոցը կը միացնէ Հախումեան փողոցին: Նոր հեղեղատարը, լուսաւորութեան համակարգն ու ճանապարհային երթելեկութեան նշանները կ'ապահովեն նորոգուած փողոցին արդիւնաւետ շահագործումը:

ՀՀՀ-ի Մոնթրէալի վարչութեան ատենապետ պրն. Շիրինեան փոխանցեց իր սրտի խօսքը, ըսելով. «Մոնթրէալի մասնաճիւղի անունով կ'ողջունեմ մեր սիրելի շուշեցիները եւ կը փոխանցեմ մոնթրէալահայութեան սերն ու ջերմագին բարեմաղթութիւնները. հոգ չէ թէ մեր քաղաքները իրարմէ բաւական հեռու են, սակայն մեր սրտերը միշտ ալ մօտ եղած են ձեզի. Մոնթրէալը հիմնադրամի ստեղծման օրէն ի վեր հայեացքը ուղղած է դէպի Արցախ ու սատար հանդիսացած Արցախի վերանորոգման ծրագիրներուն»:

Հոս կ'արժէ յիշել նաեւ, թէ 2010-ին Մոնթրէալէն խումբ մը երիտասարդներու անձնական ջանքերով մասնաճիւղիս անունով նորոգուեցաւ Արծնի գիւղի համայնքային կեդրոնի համակարգիչի սրահը:



Սեպտեմբեր 2010



Յունուար 2011

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի
 Մոնթրէալի մասնաճիւղ

ՇԵՆՑՆԵՆՔ
ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ



Յունիս 2011



Յունիս 2011



Սեպտեմբեր 2011



Սեպտեմբեր 2011

Ձեր տուրքէ գերծ նուիրատուութիւնը կրնաք կատարել եւ դրկել գրուած անունին եւ հասցէին:



Fondation Hayastan Canada Inc.
 2340 Chemin Lucerne #30
 Ville Mont-Royal, Qc. H3R 2J8
 Tél.: 514 738-3530 • Fax: 514 738-2622

Հայեցի դաստիարակութիւնը՝ հիմք ազգային ուժանակարութեան

Ի՞նչ կը հասկնանք հայեցի դաստիարակութիւնը ըսելով: Յստակացնենք հարցումը՝ տարբեր հարցումով մը. արդեօ՞ք, ինչպէս ոմանք կը կարծեն, հայերէնի դասաւանդումը հայեցի դաստիարակութիւնն է: Հայերէն սորվիլը, հայ մշակոյթին ծանօթանալը, հայոց պատմութիւնը գիտնալը կը նշանակէ՞, որ հայեցի դաստիարակութիւն ստացած ենք: Եթէ այո՞ ըսենք, այդ կը նշանակէ, որ մասնակի ըմբռնում մը միայն ունինք հայեցի դաստիարակութեան մասին: Եթէ ո՛չ ըսենք, մեղանշած կ'ըլլանք թէ՛ մենք մեզի ու մեր ճիւղին նկատմամբ՝ սորվելու մեր լեզուն եւ մնացեալը, եւ թէ՛ սորվեցնողին նկատմամբ, որովհետեւ, հայեցի դաստիարակութիւնը այդ բոլորն է, բայց ոչ միայն:

Ուրեմն, ի՞նչ է հայեցի դաստիարակութիւնը, կամ ի՞նչ է նպատակը այդ դաստիարակութեան:

Փորձենք այս բարդ հարցադրումին պարզ պատասխան մը բանաձեւել: Հայեցի դաստիարակութեան նպատակն է կերտել հայ մարդը, անդամը հայ ազգին, հայ քաղաքացիին, Հայաստանի՝ քաղաքացին, նոյնիսկ եթէ հոն՝ իր պապերու հայրենիքին մէջ չ'ապրիր: Ուստի, հայեցի դաստիարակութիւնը այն ամենն է, որ մեզ հայ կ'ընէ, ո՛ւր որ ալ ապրինք՝ Հայաստանի մէջ թէ՛ Հայաստանէն դուրս, ի՛նչ ալ ըլլայ կամ եղած ըլլայ դուրսը գտնուելուն պատճառը: Հայեցի դաստիարակութեան բացակայութեան, անկարեւոր կը դառնայ այս վերջին հարցը, այսինքն մեր երկրին մէջ կամ մեր երկրէն դուրս ապրելը:

Իսկ ի՞նչ է, որ մեզ հայ կ'ընէ. հայերէն գիտնալէն, հայ մշակոյթը ճանչնալէն կամ հայոց պատմութեան ծանօթ ըլլալէն անդին: Այդ ազդակները հիմնական են անշուշտ, բայց անպայման հայ ըլլալու պէտք չ'կայ այդ հմտութիւնը ձեռք ձգելու համար: Շատ մարդիկ, առանց հայկական ծագում ունենալու, ինչ ինչ պատճառներով կրնան սորվիլ մեր լեզուն, մեզմէ աւելի լաւ ալ տիրապետել անոր, ծանօթանալ մեր մշակոյթի բազում երեսներուն, ու հիացմունքով արտայայտուիլ մեր այդ հարստութեան մասին, կամ մխրճուիլ մեր պատմութեան խորքերը ու բանալ անոր մեզի՝ անգամ տակաւին անհասկնալի ծալքերը: Բայց ատով անոնք չեն դառնար հայ: Հայ ըլլալու համար կայ գիտակցութեան հարց մը, գիտակցո՞ւմ մը, prise de conscience մը (եւ հետաքրքրական է այս ֆրանսերէն բառին առնչումը նաեւ խղճի՛ն հետ), առանց որուն մնացեալը իմաստազուրկ կը դառնայ: Ինչի՞ր՝ գիտակցումը – առաջին հերթին՝ պատկանելութեան, անկասկած. ազգին ու հայրենիքին պատկանելութեան. երկրորդ հերթին՝ ինքնութեան, այսինքն իր ո՛վ ըլլալուն, եւ այստեղ է որ լեզու-մշակոյթ-պատմութիւն երրորդութիւնը իր դերը ունի խաղալիք. երրորդ հերթին՝ իր իրաւունքին, այսինքն իր Դատին, որուն տէր ըլլալու պարտաւորութիւնը պիտի զգայ հայ մարդը. իսկ Դատին մաս կը կազմէ անշուշտ Երկիրը, որուն տիրութիւն պիտի ընէ ան:

Ահա այս բոլորը կը պարփակէ հայեցի դաստիարակութիւնը:

Իսկ ո՞ւր կը տրուի այս դաստիարակութիւնը:

Դպրոցի՞ն մէջ, ինչպէս շատեր կը կարծեն ու կ'ակնկալեն իրաւամբ որ այդպէս ալ ըլլայ: Այո՛, բայց ո՛չ միայն, եւ ոչ առաջին հերթին: Այդ դաստիարակութիւնը տունէն՝ կը սկսի, անգամ արգանդէն, երբ տակաւին չ'ծնած ապագայ հայրերէն հայերէն կը լսէ իր նոր կազմուող ականջներով, հայ երգի ու խօսքի կ'ընտելանայ աշխարհ գալէն իսկ առաջ: Յետոյ, մինչեւ դպրոց հասնիլը, արդէն ինքնաբերաբար հայացած պիտի ըլլայ ան, հայ ընտանիքի բարոյական արժէքները անզգալաբար որդեգրած, հայ մշակոյթի միւլտիմեդիա օրհնուած: Հայ ըլլալ-չըլլալու հարց ստեղծուած պիտի չըլլայ իր մտքին մէջ: Հայ՛յ է, վերջապէս: Ու վարժարան պիտի երթայ՝ ամբարանուելու համար իր այդ հայութեան մէջ: Ու եթէ Հայաստանէն դուրս կ'ապրի՝ նաեւ արդէն գիտակից այդ իրողութեան եւս, ու իր ապրած երկրին առնչուած՝ երկրորդ ինքնութիւն մը ունենալն ալ գիտնալով: Տակաւին, եթէ իր ծնողներէն մէկն ալ հայ չ'է՝ ատոր ալ գիտակից, առանց որ այդ իրողութիւնը բան մը նուազեցնէ իր բոլոր միւս գիտակցումներէն: Ընդհակառակն՝ յաւելեալ հարստութեամբ մըն ալ օժտուած ըլլալու հասկացողութեամբ...

Վարժարանը պիտի շարունակէ մարդակերտումի ու հայակերտումի առաքելութիւնը, ու գիտելիքներ չ'է, որ միայն պիտի փոխանցէ, այլ ապրումներ, զգացումներ, սէրեր. մանաւանդ սէրեր – լեզուին, զրականութեան, երգին, գիտութեան ու քաղաքակրթութեան հանդէպ:

Բայց վարժարանէն գատ, վարժարանին առընթեր ու անկէ ալ անդին, կայ ընկերային կեանքը՝ ակումբն ու պատանեկան-երիտասարդական-մարզական-մշակութային միութիւնները, որոնց մէջ ու որոնց շնորհիւ տունէն բերուած արժէքները, դպրոցէն ստացուած դանձերը պիտի ծաղկին, զարգանան: Մամուլ եւ հաղորդակցական այլ միջոցներ պիտի սատարեն այդ զարգացման:

Եւ դեռ կայ մանաւանդ հո՛ղը, որպէս դաստիարակութեան վայր: Հայաստանի մէջ ապրողին համար այդ հողը իր ոտքերուն տակն է, ու անոր տուած կրթութիւնը նոյնպէս պիտի դալ բնական կերպով, մինչ Հայաստանէն դուրս ապրողին ոտքերուն տակ մերթ ընդ մերթ պէտք է ցանուի՝ այդ հողը, ինչպէս գերեզմարուած Արշակ արքայի ոտքերուն տակ ցանուեցաւ... Կամ, պիտի երթայ կանգնի՝ այդ հողին վրայ, քալէ, դպչի անոր, հո՛տը առնէ, կախարդուի անոր խորհուրդով:

Այո՛, եթէ հայերէն պիտի սորվինք, պիտի սորվինք այնպէս, որ պաշտենք զայն, պահենք ու պահպանենք զայն, նոյնիսկ մեր կեանքի գնով, բայց մանաւանդ ապրեցնենք զայն մեզի հետ՝ մեր կեանքի իւրաքանչիւր պահուն՝ մեր հարազատներուն, մեր ընկերներուն թէ՛ մեր գործակիցներուն հետ, երբ կարելի է, բանաւոր թէ՛ գրաւոր մեր հաղորդակցութիւններով, մեր ել-նամակներով, Դիմատետրին (Ֆէյսպուքին) վրայ թէ՛ ձուռուղարաններուն (Թուիթըր) մէջ...

Եթէ մեր մշակոյթին պիտի ծանօթանանք, պիտի ծանօթանանք այնպէս, որ մեր կեանքի առօրեային տայ աւել, եւ ոչ թէ դառնայ մեր կիրականօրեայ ժամանցի առարկան, բեմի՛ վրայ պարզապէս:

Սիւսի կը կը հոգովսուսուրեն Ա. եւ Ա. Կարպիս եւ Սեւակիս Գարբիէլեան

ԳԱՆԱՏԱՅԻ

Ազգային Առաջնորդարան

Տ. Խաժակ Ս. Արքեպիսկոպոս Յակոբեան

Բարեջան Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի
եւ

Ազգային Վարչութիւնը իր Եկեղեցիներով

Հայց. Առաքելական Ս. Յակոբ Առաջնորդանիստ Եկեղեցի, Մոնթրեալ

— ✠ —

Հայց. Առաքելական Ս. Աստուածածին Եկեղեցի, Թորոնթօ

— ✠ —

Հայց. Առաքելական Ս. Գեորգ Եկեղեցի, Լաւալ

— ✠ —

Հայց. Առաքելական Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի, Վանգուվըր

— ✠ —

Հայց. Առաքելական Ս. Նշան Եկեղեցի, Գեմարիձ

— ✠ —

Հայց. Առաքելական Ս. Պօղոս Եկեղեցի, Սենթ Գաթրինգ

կը շնորհաւորեն գանատահայութեան

Նոր Տարին եւ Ս. Ծնունդը

մաղթելով մեր սիրելի ժողովուրդին

բարօր, քաջառողջ, նորանոր յաջողութիւններով լի
եւ երջանկալից տարի մը

Աստուծոյ օրհնութեան ներքեւ թող ծաղկին ու բարգաւաճին
մեր Հայրենիքը, Արցախն ու մեր գաղութները

ՇՆՈ
ՐՀԱ

ԷՈՐ
ՆՈՐ

ՏԱ
ՐԻ ԵՒ

ՍՈՒ
ՐԲ

ԾՆՈ
ԷՆԴ



Եթէ մեր պատմութիւնը պիտի սերտենք, սերտենք այն-պէս, որ ան տեւական դասագիրքը ըլլայ մեզի համար, ներշնչման աղբիւր, կեանքի ուղեցոյց:

Իսկ եթէ հայրենիք պիտի սիրենք, հողին վրայ, թէ հողէն դուրս, սիրենք այնպէս, որ մե՛նք ծառայենք անոր, եւ ոչ թէ փորձենք զա՛յն ծառայեցնել մեզի՝ ունենալով տեսլականը անոր ծառայութեան, հետապնդելով ոչ թէ անհատական շահը այլ հաւաքակա՛նը, որմէ ի վերջոյ օգտուողը կ'ըլլանք նաեւ մենք՝ որպէս մասնիկը այդ հաւաքականութեան: Տեսլական մը՝ Հայաստանին ապահովելու իր ազգային ու մարդկային բոլոր իրաւունքները, զայն զետեղելու ազգերու արդար ու համերաշխ ընտանիքին մէջ:

Ո՞վ է պատասխանատուն հայեցի կրթութեան. ուսուցիչ՞ը, ինչպէս կը կարծեն ու իրաւամբ կ'ակնկալեն շատեր: Այո, բայց ո՛չ միայն, եւ ո՛չ առաջին հերթին: Ծնողքը նախ ու մեծ ծնողները, անկասկած: Իսկ ուսուցչին, բոլոր ուսուցիչներուն կողքին, որովհետեւ միայն հայերէնի ու հայերէնով դասաւանդողներուն ճիտին պարտքը է հայեցի կրթութիւնը, նաեւ վարիչները, մարզիչները, եւ անոնցմէ ալ անդին՝ բոլոր ղեկավարները, տեղական մակարդակներէն սկսելով մինչեւ կաթողիկոսներն ու Հայաստանի նախագահը, որոնց անձնական վարքը, կեցողութիւնը ու համոզումները նոյնպէս դաստիարակչական դեր կը խաղան:

Հայեցի դաստիարակութիւնը, այո, բոլորիս պարտակա-նութիւնն է, ու մեր իւրաքանչիւր քայլը կրնայ մէկ կամ այլ ձեւով մեկնաբանուիլ մեր գաւակներուն կողմէ՝ ի նպաստ կամ ընդդէմ հայեցիութեան:

Ձխաբենք մենք զմեզ ու չխաբենք ուրիշները – հայեցի դաստիարակութիւնը տեւական գործընթաց մըն է, իւրաքանչիւր սերունդի համար՝ օրօրոցէն մինչեւ գերեզման, սերունդէ սերունդ՝ յաւիտեանս յաւիտենից: Այդ գործընթացէն դուրս գտնուողները չեն կրնար երբեք յաւակնիլ առաջնորդել հայութիւնը ըլլա՛յ ազգային-քաղաքական, ըլլա՛յ կրօնական-մշակութային, ըլլայ որեւէ՛ այլ մարզի մէջ:

Այսպիսի լայն ընդգրկումով՝ բարդ ու համապարփակ խնդիր է հայեցի դաստիարակութիւնը, որ պէտք է մղէ բոլորս պատասխանատուութեան խոր գիտակցութեան:

Առ այդ ալ հայեցի դաստիարակութիւնը հիմքն իսկ կը հանդիսանայ ազգային ռազմավարութեան, ու այսօր Ափիւռքի մէջ թէ Հայաստանի՝ մեր տագնապներուն պատճառը այդ դաստիարակութեան պակասն է, ու անոնց վերացման միջոցը՝ այդ դաստիարակութեան ամրապնդումը: Ան պէտք է յստակօրէն ու մանրամասնօրէն բանաձեւուի թէ՛ մեր կուսակցու-թիւններու ծրագիրներուն մէջ եւ թէ՛ Հայաստանի սահմա-նադրութեան:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

- Հայ լեզուին ամուր բերդը նկատուող հայ դպրոցէն ներս մեր լեզուն սկսած է նահանջել: Փաստօրէն հայ լեզուի ու հայերէնով դասաւանդուող նիւթերու պահերը սկսած են նուազիլ. հայերէն լեզու, գրականու-թիւն ու պատմութիւն դասաւանդող ուսուցիչներու թիւը սկսած է պակսիլ. եւ աւելի ահաւորը՝ հայերէն լեզու դասաւանդող ուսուցիչներու հայերէնի մակարդակը սկսած է անկում կրել:

- Հայ լեզուի առաջին ու մնայուն դպրոցը նկատուող հայ ընտանիքէն ներս հայ լեզուն սկսած է աղա-ւաղուիլ թէ՛ լեզուահիւսական ու քերականական հետզհետէ բազմացող սխալներով, թէ՛ օտար բառերու ու ոճային դարձուածքներու յանախակի գործածութեամբ եւ թէ օտարին օտարացնող ներկայութեամբ:

- Հայ լեզուի ուսուցման մէջ կարեւոր դերակատարութեան կոչուած հայ մամուլը եւս սկսած է նահանջ արձանագրել՝ մէկ կողմէն տպագրականի զգալի նուազումին, իսկ միւս կողմէն հայերէն լեզուին տիրապետած խմբագիրներու ու հայ լեզուի նկատմամբ թղթակիցներու ցուցաբերած ընդհանրապէս անփոյթ վերաբերու-մին հետեւանքով:

- Հայ լեզուի առողջ պահպանման մէջ կարեւոր դեր ունեցող եկեղեցին եւս սկսած է թերաւ իր առա-փելութեան մէջ՝ հոգեւորականներու ֆարզներու ու իր հրատարակած պարբերաբերթերու մէջ նշմարուող բազմազան սխալներով:

- Հայ լեզուի պաշտպանութեան ստարբելու կոչուած մեր միութիւններէն, կազմակերպութիւններէն ու կառոյցներէն ներս հայ լեզուն սկսած է տեղի տալ, օտար կայէջերու լայն օգտագործումին հետեւանքով, ինչպէս նաեւ դասախօսական եւ ընդհանրապէս մշակութային ձեռնարկներու նուազումով:

- Հայ լեզուի տարածման ու բիրեղ պահպանման առաջնորդները ըլլալու կոչուած մեր գրողներուն մօտ եւս նշմարելի է բժախնդրութեան ու խստապահանջութեան պակաս՝ յատկապէս շարահիւսական, կէտադրա-կան ու քերականական կանոններու նկատմամբ իրենց ցուցաբերած երբեմն անտարբեր ու երբեմն փախա-մօտեցումներով:

- Այս բոլորին վրայ երբ աւելցնենք հայերէն լեզուի գործածութեան արագասոյր նահանջը արեւմուտփի մէջ հաստատուած մեր գաղութներէն ներս՝ մինչեւ մեր եկեղեցիները ու դպրոցները հասնող, ահա այն ատեն կը համոզուիմք որ արեւմտահայերէնը կորստեան ճամբուն վրայ է:

ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ

Այս ֆոր կը հովանաւորեն Արփու եւ Պալար Միսիսեան



Authentic Italian Dining

Reservations: (514) 337-6664

5291 Henri Bourassa West, St-Laurent, QC H4R 1B7

www.vinorosso.ca

Uino Rosso
RISTORANTE • CUISINE ITALIENNE



Հայաստան՝ արքայական խաղի գերտերություն

Զրոյց շախմատ-ճատրակի հայ վարպետ Լեւոն Արոնեանի հետ

Ճատրակը կամ շախմատը՝ ինչպես ընդունուած է ըսել Հայաստանի մէջ, արքայական խաղ է, զոր վարպետութեն խաղալու հմտութիւնը կարծես ժառանգաբար՝ ի վերուստ տրուած է հայերուն. աշխարհի հայերու յաջողութիւններուն հետեւելով կը նկատենք, որ ոչ միայն Հայաստան իբրեւ երկիր այս խաղին մէջ հասած է ամենաբարձր մակարդակներու, այլեւ՝ այս կամ այն քաղաքի կամ երկրի մէջ, պատանի կամ երիտասարդներ նոյնպէս ճատրակի խաղի մէջ յաջողութիւններ արձանագործ են, իսկ Հայաստանի մէջ ճատրակը տարածուած է գրեթէ բոլոր ընտանիքներուն մէջ:

Հարիւրամեակներ առաջ հնարուած արքայական այս խաղին օրրանը կը համարուի Հնդկաստանը, ուր այս խաղի մասին առաջին անգամ յիշատակուած է 6-րդ դարուն: Առասպելին համաձայն՝ շախմատը հնարած է հնդիկ իմաստուն մը՝ իր տիրակալին համար: Սակայն փաստերը կը վկայեն, որ շախմատի գիւտը ոչ թէ մէկ մարդու, այլ բազմաթիւ ժողովուրդներու մտքի արգասիքն են:

«Շախմատ» անուանումը եկած է Արեւելքէն (պարսկերէնէն), ուր տիրակալը կամ թագաւորը կը կոչեն շահ, ապա բառը հնչափոխուած է «շախ»-ի իսկ «մատ» կը նշանակէ «մահացաւ», հետեւաբար շախմատ կը նշանակէ թագաւորը մեռաւ:

Հայաստանի մէջ շախմատ, հաւանաբար, սկսած են խաղալ 9-րդ դարուն (Եւրոպայի մէջ 11-րդ դարուն) եւ խաղը նախ անուանած են ճատրակ, որ եկած է խաղի հնդկերէն՝ «չատրունկա» անուանումէն, իսկ աւելի ուշ՝ շախմատ:

Հայաստանի մէջ շախմատային ընկերակցութիւնը (այժմ՝ դաշնութիւն) ստեղծուած է 1927 թուականին:

Առաջին առաջնութիւնը իրականացուած է 1934 թուականին: Հայաստանի առաջին ախոյեանը եղած է Հենրիկ Գասպարեան: Ան հայ առաջին վարպետն է, շախմատային համադրութեան գծով՝ աշխարհի մէջ առաջին հայ



գրոսմայսթրըրը: Հայկական ճատրակի մեծութիւններէն եղած է նաեւ Տիգրան Պետրոսեան: Ան երեք անգամ դարձած է Հայաստանի ախոյեան, իսկ 1963-ին՝ աշխարհի 9-րդ ախոյեան:

1970 թուականէն երեւանի մէջ կը գործէ շախմատի տունը, որ 1984-էն ի վեր կը կրէ Տիգրան Պետրոսեանի անունը: 1971-ին հիմնուած է շախմատի մասնագիտացուած դպրոցը: 2002-ին հիմնադրուած է շախմատի կաճարը (ակադեմիան):

Հայաստանի անկախութենէն ետք երկիրը 1992 դարձաւ ՖԻՏԷ-ի անդամ եւ այդպիսով սկսաւ անկախ Հայաստանի շախմատիստներու խոշորագոյն յաջողութիւնները՝ միջազգային ասպարէզէն ներս: Հայաստանի տղամարդոց հաւաքականը 2006-ին եւ 2008-ին դարձաւ շախմատի համաշխարհային մրցոյթի ախոյեան, երեք անգամ՝ (1992,

2002, 2004) մրցոյթի պրոնզէ մետալակիր, երեք անգամ երրորդ տեղը գրաւեց աշխարհի խմբային առաջնութիւններուն (1997, 2001, 2005), դարձաւ Եւրոպայի ախոյեան (1999): Հայաստանի կանանց հաւաքականը նոյնպէս 2003-ին դարձաւ Եւրոպայի ախոյեան, Երեւանի «Միկա» կանանց ակումբը 2006-ին՝ Եւրոպաակաթի յաղթող:

Լեւոն Արոնեան 2005-ին դարձաւ աշխարհի գաւաթակիր, Վլատիմիր Յակոբեանը 1999-ին՝ աշխարհի փոխախոյեան: Միջազգային ասպարէզի մէջ ակնառու յաջողութիւններու հասած են նաեւ Ռաֆայէլ Վահանեան, Սմբատ Լպուտեան, Աշոտ Անաստասեան, Արտաշէս Մինասեան, Կարէն Ասրեան, Գաբրիէլ Սարգսեան, Տիգրան Լ. Պետրոսեան, Զաւէն Անդրիասեան, մարզիչներ Արշակ Պետրոսեան, Տիգրան Նալպանտեան, Արսէն Եղիազարեան:

Անկախ Հայաստանը ներկայացնող շախմատիստներու յաղթանակները կրկնուեցան, շարունակուեցան եւ կը շարունակուին մինչեւ այսօր:

Հայաստանի մէջ ճատրակը պետութեան ամենաբարձր մակարդակի ուշադրութեան կեդրոնին է: 2004 թուականէն ի վեր Հայաստանի շախմատային դաշնութեան նախագահն է Սերժ Սարգսեան՝ երբ ՀՀ պաշտպանութեան նախարար էր, ապա ՀՀ վարչապետ, այժմ՝ ՀՀ նախագահ:

Այսօր Հայաստան ունի 26 գրոսմայսթրը, 22 միջազգային վարպետ, 8 ՖԻՏԷ-ի վարպետ: Միջազգային վարկանիշներ ունին 285, ազգային՝ աւելի քան 3000 շախմատիստներ:

Վերջերս այլ երեւոյթ մը եւս Հայաստանը շախմատի ոլորտէն ներս դարձուց առաջինը: Այս տարի Հայաստանի մէջ ընդունուեցաւ հանրակրթական դպրոցներէն ներս շախմատ առարկան պարտադիր դասաւանդելու օրէնքը: Հայաստան դարձաւ առաջին երկիրը, որուն հանրակրթական ուսումնական ծրագրին մէջ պարտադիր ընդգրկուած է շախմատի դասաւանդումը՝ երկրորդ դասարանէն սկսեալ,

Այս ֆոթո կը հովանաւորեն Անթր Եւ Միկ. Գալուստ Գրիգորեան



NOR COIF

coiffure | esthétique "elle et lui" |
épilation laser

4550, rue Salaberry
Montréal, Québec
H4S 1H4
514.337.4724



Récipiendaire depuis 1993 jusqu'aujourd'hui de :
Prix du meilleur commerce, le choix des consommateurs

Gagnant du premier prix :
"Quest for the best" pour "Top of Shish Taouk"
de la Gazette mercredi le 12 juin 2002.

381-0037
9490 boul. L'Acadie

738-3819
Centre Rockland

շաբաթական երկու դասաժամով: Այս տարեշրջանին շախմատ կը դասալանդուի նաև Արցախի մէկ հանրակրթական դպրոցէն ներս:

Այսօր Հայաստանի շախմատիստներու առաջնակարգը Լեւոն Արոնեանն է: Ան նուաճած է գրեթէ հնարաւոր խոշորագոյն բոլոր տիտղոսները՝ աշխարհի գաւաթակիր, աշխարհի ախոյեան, արագ շախմատի, Ֆիշերի շախմատի, կայծակնային խաղի վարկածներով, «Մեծ սաղաւարտ»ի մրցաշարքի յաղթող: Անհատական վարկանիշով ան աշխարհի 3-րդ շախմատիստն է:

Լեւոն Արոնեան ծնած է 6 Հոկտեմբեր 1982-ին, Երեւան: Հայրը՝ Գրիգորի Արոնով, բնագէտ-բիւրեղագէտ է Պելաուսէն, մայրը՝ Սեդա Արոնեան, լեռնային ճարտարագէտ՝ Հայաստանէն: Ծառակ խաղալ սորված է շատ պատահաբար. ան փոքր տարիքին անբաժան եղած է իրմէ 6,5 տարի մեծ քրոջմէ, հետեւաբար՝ քոյրը, ինը տարեկան Լեւոնը քիչ մը իրմէ հեռացնելու համար, որոշած է շախմատ սորվեցնել անոր: Այդ օրուէն, փոքրիկ Լեւոնը տարուած է շախմատով ու անիկա դարձած է անոր կեանքի ուղին:

1994-ին Հունգարիոյ Շեգեդ քաղաքին մէջ Լեւոն դարձած է մինչեւ 12 տարեկաններու աշխարհի ախոյեան: Այդ առաջնութեան յաղթելու համար անոր շնորհուած է ՖիՏէ-ի վարպետի կոչում: 1995-ին Փարիզի մէջ ան յաղթած է մինչեւ 14 տարեկան շախմատիստներու արագ շախմատի աշխարհի առաջնութեան: 1996-ին դարձած է միջազգային վարպետ: 1997-ին Արոնեան նուաճած է «Գասպարովի գաւաթ»ը: 1999-ին դարձած է Հայաստանի ախոյեան եւ ընդգրկուած Հայաստանի հաւաքականի այն կազմին մէջ, որ Պաթոնմիի մրցոյթին դարձաւ Եւրոպայի ախոյեան: 2000-էն ի վեր միջազգային գրոսմայսթր է: 2002-ին Հնդկաստանի մէջ ան նուաճեց մինչեւ 20 տարեկաններու աշխարհի ախոյեանի կոչումը:

2003- 2005 իր տարած յաղթանակներով սկսաւ Արոնեանի վերելքը եւ ան ներխուժեց շախմատային վերնախաւ:

Արոնեան 2001-էն ի վեր կ'ապրի Գերմանիա, սակայն կը շարունակէ ներկայացնել Հայաստանը, զոր կը համարէ իր հայրենիքը: Ան իր ապրած երկրին մասին կ'ըսէ «Գերմանիայում ինձ լաւ եմ զգում, սակայն... դա իմ հայրենիքը չէ»:



2011-ի Յուլիսին, Չինաստանի Նինսո քաղաքին մէջ կայացած աշխարհի խմբային առաջնութեան մրցոյթին, Հայաստանի ճատրակի հաւաքականը նուաճեց ախոյեանի տիտղոսը: Հայաստանի հաւաքականի անդամներն էին՝ Լեւոն Արոնեան, Սերգէյ Մովսիսեան, Վլադիմիր Յակոբեան, Գարրիէլ Սարգսեան, Ռուպերթ Յովհաննիսեան:

Հ- Ի՞նչ ապրումներ կ'ունենաք երբ մրցոյթներու կը մասնակցիք Հայաստանի դրօշի տակ:

Պ- Մեծ հպարտութիւն է ինձ համար, որ կարող եմ յաջողութիւնների հասնել Հայաստանի դրօշի ներքոյ: Շատ եմ նեղուած, երբ վատ եմ խաղում, չնայած առանց դրա էլ չի լինում՝ չես կարող միշտ յաղթել: Շատ հաճելի է այն զգացումը, որ թիմ ունես թիկունքիդ, որ շատ-շատերը սպասում են քո յաղթանակին:

Հ- Ի՞նչ է ձեր կարծիքը այսօրուան հայ շախմատիստներու մասին:

Պ- Այսօր ունենք շատ լաւ սերունդ, որը երկար տարիներ է չենք ունեցել, շատ ուժեղ խաղացողներ ունենք: 1989 թուականի սերունդը տաղանդաւոր է եւ կարող է շատ բանի հասնել:

Հ- Ձեր կարծիքով Հայաստանը ստարթանույն կը գնահատէ՞ իր շախմատիստները:

Պ- Կարծում եմ Հայաստան շախմատիստի համար ամենայլաւ երկիրն է այսօր: Ամենակարեւորը ժողովրդի յարգանքն է: Հայաստանում չեն մտածում, որ անիմաստ գործով ես զբաղւում, բայց Եւրոպայում՝ օրինակ՝ այդպէս են մտածում:

Հ- Ի՞նչ կը մտածէք երբ կը խաղաք աւրպէյնացիի դէմ:

Պ- Այդ մասին խաղից յետոյ ենք մտածում: Մինչեւ խաղը դրա մասին պէտք է մոռանաս:

Հ- Ձեզի համար շախմատը ի՞նչ է:

Պ- Դա երկու մարդկանց երկխօսութիւն է, աչքերի երկխօսութիւն, մտքերի: Բարձր չենք խօսում, բայց ամէն մի քայլ մի ասոյթ է:

Հ- Հայաստանէն դուրս ապրելով, կարօտի զգացում չէ՞ք ունենաք:

Պ- Միշտ կարօտում եմ յատկապէս՝ Նոյեմբերեանին:

Հ- Ի՞նչ երազներ ունիք:

Պ- Նախ դառնալ ուժեղ խաղացող, երկրորդ՝ տուն կառուցել: Ինձ համար մեծ երազանք է եղել շատ երկրներ շրջել ու ծանօթանալ նրանց մշակոյթին եւ այդ երազանքը իրականացաւ: Նաեւ երազում եմ կարողանալ հանդիպել, խօսել այն մարդկանց հետ, որոնց շատ եմ յարգում, որ ունենամ դրա իրաւունքը: Ես կ'ուզէի, որ մեր շախմատային յաջողութիւնները, մեր գործի հանդէպ մեր նուիրուածութիւնը մեր ժողովրդին դրդէին, որ նրանք պատասխանատուութեամբ վերաբերուեն իրենց սեփական գործին եւ ձգտեն նորին: Այդ ժամանակ ես կ'ասեմ, որ կեանքս յաջողուեց:

Նայիրի Մկրտիչեան Տաղեան



Հայ Օգնության Միությունը,
100-ամեայ՝ սակայն մի՛շտ երիտասարդ,
կը շնորհաւորէ Ձեր բոլորի
Նոր Տարին ու Սուրբ Ծնունդը
եւ Ձեզ կը հրահրէ միանալու
Զաւախքի իր ծրագիրներէն՝

«Բազմազաւակ ընտանիքներու օժանդակութեան ծրագիր»ին
որպէսզի Ամանորը ուրախութեամբ լնցնէ
բոլորի՝ տուններն ու սրտերը:



Հաւաքական մկրտութիւն



Աշակերտներու գրեթեական պիտոյքներ



Հաշմանդամ երեխաներու այցելութիւն



Շարադրական մրցոյթ



Երիտասարդական կեդրոնի սաներ



ՀՕՄ-ի Զաւախքի «Բազմազաւակ ընտանիքներու օժանդակութեան ծրագիր»
կամ այլ ծրագիրներուն Ձեր նուիրատուութիւններուն համար
դիմեցէ՛ք Ձեր Երջանի ՀՕՄ-ի միաւորին, կամ այցելեցէ՛ք ՀՕՄ-ի կայքէջը
www.ars1910.org

Դրամատուներու դրամաբաշխ սարքի (ATM) գիտարարը՝ Լուսեր Ճորճ Սիմճեանն է

Հոկտեմբեր 23-ին, 14 տարի առաջ, Միացեալ Նահանգներու մէջ, 94 տարեկանին մահացաւ հայ ժողովուրդի անուանի զաւակներէն Լուսեր Ճորճ Սիմճեան, որ իբրեւ գիտարար-հնարիչ կարեւոր տեղ կը գրաւէ ամերիկացի հռչակաւոր դէմքերու ոսկեմատեանին մէջ:

Ճարտարագիտական մարզէն ներս աւելի քան 200 գիտերու հեղինակային իրաւունքը կը պատկանի Լուսեր Սիմճեանի: Բժշկական լուսանկարչական համակարգեր, լուսանկարչական ինքնաֆոտոսաւորող խցիկ, ինքնաշխատ (automatic) երեւակման սարք, ռազմական թոնիչներու խթանիչ (stimulator), փոստային սակագիներու հաշուիչ եւ նմանօրինակ բազում գործիքներու հնարիչը եղաւ հայագրի այս հնարամիտ գիտարարը: Յատկապէս դրամաբաշխ սարքի՝ ATM-ի (Automated Teller Machine) գիտարարը կը պատկանի Սիմճեանի, որ իր հնարած հանրայայտ «Պանքմատիք»-ով (Bankmatic) ռահվիրան եղաւ մեր ժամանակներու ամէնէն ընդհանրացած դրամատնային այդ գործիքի ստեղծման ու կատարելագործման:

Լուսեր Ճորճ Սիմճեան (Luther George Simjian) ծնած էր 1905 թուի Յունուար 28-ին, Կիլիկիոյ հայաշատ Այնթապ քաղաքին մէջ: 1915ին թրքական պետութեան գործադրած ցեղասպանութենէն վերապրած տարագիր հայերուն հետ Սիմճեանները եւս յայտնուեցան Պէյրութի մէջ, ուր կարճ շրջան մը ապրելէ ետք՝ Լուսեր անցաւ Մարսէյլ, Ֆրանսա, ուրկէ 1920-ին տեղափոխուեցաւ Մ. Նահանգներ:

15 տարեկան հասակին հաստատուելով Մ. Նահանգներ՝ Քրենքթիքթըթ նահանգի Նիւ Հէվըն քաղաքին մէջ, պատանի Լուսեր կեանքի ասպարէզ նետուեցաւ իբրեւ լուսանկարիչ: Միաժամանակ բժշկութիւն ուսանեցաւ Եյլ համալսարանին մէջ (Yale School of Medicine), մասնագիտանալով իբրեւ լուսանկարչական տարրալուծարանի գիտաշխատող: Տարրալուծարանային լուսանկարիչի իր աշխատանքի տարիներուն, նուիրուեցաւ բժշկութեան ուսումնասիրութեան:

1928-ին նշանակուեցաւ միլենոյն համալսարանի լուսանկարչական բաժանմունքի տնօրէն եւ իրա- գործեց լուսանկարչական սարքերու կապուած քանի մը գիտեր, ինչպէս օրինակ նկարներու մանրադիտակի լուսարձակը (projector):

1934 թուականին տեղափոխուեցաւ Նիւ Եորք, որ երիտասարդ գիտարար-հնարիչին առջեւ նոր հորիզոններ բացաւ: Լուսերի առաջին կարեւոր գիտարար եղաւ սեփական դէմքի լուսանկարման մեծ սարքը, որ շատ արագ տարածուած գտաւ մեծ հանրախանութներու մէջ, նաեւ՝ առիթը ընծայեց հայ գիտարարին, որպէսզի հիմնէ Photoreflex ընկերութիւնը, մեկնելով իր հնարած համանուն գործիքէն: Յաջողութիւնը այնքան մեծ էր, որ Լուսեր Սիմճեան իր գիտարար հեղինակային իրաւունքը եւ համանուն ընկերութիւնը վաճառեց: Շուտով հիմնեց նոր ընկերութիւն մը՝ Reflectone անունով, որպէսզի հրապարակ իջեցնէ միլենոյն անունը կրող նոր սարք մը՝ դարձող հայելիներով օժտուած բազկաթոռ մը, որուն վրայ բազմող ի վիճակի պիտի ըլլար իր սեփական մարմինը դիտելու բոլոր անկիւններէ:

1939 թուականին Սիմճեանի մօտ առաջացաւ կանխիկ դրամ տրամադրող ինքնաշխատ սարքի (Automated Teller Machine - ATM) ստեղծման գաղափարը: Թէեւ դրամա-



տունները թերահաւատութեամբ ընդունեցին դրամ տրամադրող մեքենայ ունենալու գաղափարը եւ հազիւ վեց ամիս փորձարկեցին Սիմճեանի գործիքը, այսուհանդերձ՝ ան շարունակեց աշխատիլ իր գործիքի կատարելագործման վրայ: Մինչեւ 1960 ապահովեց 20 արտօնագիր՝ կատարելագործելով Banmatic սարքը եւ հիմք ըստեղծելով այսօրուան թղթադրամ տրամադրող գործիքներուն համար: 1965-ին ան հնարեց նաեւ միլենոյն գործիքի մետաղադրամ տրամադրող սարքը:

Լուսեր Սիմճեան առեւտրական մեծ յաջողութիւն ունեցաւ Երկրորդ Աշխարհամարտի ընթացքին, երբ գիտարարը ռազմական թոնիչներու սիմիլիչըրին՝ Optical Range Estimation Trainerին, որ կ'օգտագործուէր Մ. Նահանգներու ռազմական օդաչուներու մարզումներուն ժամանակ՝ գնահատելու համար օդանաւային կազմաձեւերու արագութիւնն ու միջտարածութիւնը: Սիմճեանի հնարած գործիքը բազկացած էր հայելիէ, լոյսի աղբիւրէ եւ փոքր սաւառնակներէ: Սիմճեան իր հնարած գործիքէն աւելի քան երկու հազար ըրինակ վաճառեց եւ նիւթական մեծ յաջողութիւն ունեցաւ:

Իր կեանքի վերջալոյսին հայագրի գիտարարը հաստատուեցաւ Ֆլորիտա՝ Ֆորթ Լաուրէյլ (Fort Lauderdale), ուր հիմնեց իր սեփական մեծ տարրալուծարանը եւ մինչեւ 92 տարեկանը աշխատեցաւ նոր գիտերու հնարման վրայ:

Իր մահկանացուն կնքեց 23 Հոկտեմբեր 1997-ին: Ն.Պ.

«Արմենոյտս»ի երաժշտական յանդուզն ու յախուռն ուղղուածութիւնը

Տարիներ առաջ, Հայաստանի մէջ ձեւաւորուեցաւ երաժշտական նոր ուղղութիւն որդեգրած «Արմենոյտս» (The Armenoids) անուանումը կրող նուագախումբ մը, որ գրաւեց հայ հանդիսատեսի ուշադրութիւնը եւ արձանագրեց զգալի յաջողութիւններ:

«Արմենոյտս»ի մասին գրուեցեցինք խումբի հիմնադիրներէն Էդգար Ռոստոմեանի հետ:

«Արմենոյտս անուանումը եւրոպական այս տարածաշրջանի ցեղատեսակն է, ուր ներառուած են տարբեր ազգի ներկայացուցիչներ: Պարտաւորութիւն էր մեզ համար ընտրել այդ անունը եւ նաեւ կրել պատասխանատուութիւն մշակութային բովանդակութիւնը ներկայացնելու կապակցութեամբ»,- կ'ըսէ Էդգար, աւելցնելով, որ ընտրուած անունն ու գաղափարախօսութիւնը բաւական նման էին երազի:

Էդգարի պատմելով, ան իր գաղափարները (աւանդական հին հայկական երաժշտութիւնը միաձուլել նոր երաժշտական կշռոյթներու հետ) կը կիսէ խումբի անդամներէն Սայաթ Գոյուճեանի հետ: Սայաթ ծնած է Պոլիս, ապա տեղափոխուած է Թորոնթօ, իսկ դժուար տարիներուն (1991-1992) եկած ու հաստատուած է Հայաստան: Սայաթն ու Էդգարը, որոնք կը համարուին «Արմենոյտս»ի գլխաւոր հիմնադիրները, միասնաբար կը դաշնաւորեն իրենց



Էդգար Ռոստոմեան

առաջին ստեղծագործութիւնը՝ գայն անուանելով «Արմենոյտս»: Այդ առաջին ստեղծագործութիւնը կարծես կը դառնայ հիմքը յառաջիկային ձեւաւորուող «Արմենոյտս» նախագիծին:

«Երկար տարիներու լուրջ փորձերէ ու աշխատանքներէ ետք, ստեղծուեցաւ «Արմենոյտս» նախագիծը: Փորձեցինք ինչ որ տեղ «Արմենոյտս»ի ստեղծագործութիւններուն մէջ ներառել թէ՛ դժուար տարիներու փորձառութիւնը, թէ՛ ուրախութիւնը եւ թէ՛ թախիծը: Միեւնոյն ժամանակ՝ գնահատելով մեր ազգային մշակոյթը, անոր արմատները, աւելի լուրջ նշանակութիւն տուի «Արմենոյտս»ի գաղափարներու ճիշդ տարածման եւ այդ գաղափարներէն ամենակարեւորը այն է, որ որքան որ դուն ազգային ես, նոյնքան ալ միջազգային ես»,- կ'ըսէ Էդգար:

«Արմենոյտս» նախագիծի հիմնական նպատակը եղած է այլ երկիրներուն ցոյց տալ, թէ որքան խոր արմատներ ունի հայկական մշակոյթը եւ ինչքան զուգահեռ եւ համահունչ կրնան քայլ պահել այլ քաղաքակրթութիւններու հետ, միեւնոյն ժամանակ ընկա-


լելով անոնց մշակոյթը եւ ներկայացնելով հայկականը:

«Տարբեր մտածողութեան տէր մարդիկ, ովքեր օգտագործեցին եւրոպական երաժշտութեան ուղիները եւ անոնց տեսակը համակցեցին արեւելեան մեղեդիի խորութեան եւ մնացած այլ նրբութիւններու հետ, այս էր «Արմենոյտս»ը»,- կ'ըսէ Էդգար աւելցնելով, թէ ինք սխալած չէր, որովհետեւ արեւելեան մեղեդին եւ անոր դրսեւորումները վերջին տարիներուն ներթափանցեցին համաշխարհային արուեստի բեմէն ներս եւ այդ հաստատումին վառ ապացոյցը՝ արեւելեան երաժշտութեան կշռոյթներով յագեցած միջազգային բազմաթիւ երաժշտական ստեղծագործութիւններն են:

Ըստ Էդգարի, «Արմենոյտս»ը Հայաստանի մէջ գործող շատ իւրայատուկ, համաշխարհային, այլընտրանքային, մեծ ժողովրդականութիւն ունեցող երաժշտական կառոյց մըն է, որ կը գործէ անկախ սկզբունքներով եւ կը ներկայացնէ այն երաժշտական համաձուլումները, որոնց մէջ կը ներկայացուի ժամանակակից անցուղարձը, ժամանակակից մտածողութեան տեսակը, ինչպէս նաեւ հասարակութեան իսկական հայելին է:

Նախագիծը համագործակցած է լուրջ կշիռ ունեցող ֆոլքլորային, աշուղական, ինչպէս նաեւ երաժշտական այլ ուղղութիւններու հետեւող ներկայացուցիչներու հետ, ինչպէս՝ Գէորգ Տապաղեան, Թովմաս Պօղոսեան, Ջիւան Գասպարեան եւ այլ արուեստագէտներ, որոնք իրենց կարեւոր ներդրումը ունեցած են «Արմենոյտս»ի արուեստի տարածման մէջ:

«Արմենոյտս»ը նման է յօրինուածքի (organism), ճիշդ ձեւով սնանած երեխայի, որուն խնամած եւ ճիշդ կրթութիւն տուած են: Այդ յօրինուածքը հասակ առած է, պատանեկութեան տարիներ թեւակոխած է, ծանր ժամանակներ անցուցած է: Ունեցանք վերելք, ունեցանք նաեւ որոշակի տարածայնութիւններ խումբի անդամներուն հետ, բայց յետոյ այդ ամէնը վերա-



Այս էջը կը հովանաւորեն Միֆայէ Եւ Պաֆայէ Արսմեան

կանգնեցաւ, շտկուեցաւ, մենք դարձեալ վերամիացանք եւ արդէն մօտ ատենէն պիտի հրապարակենք մեր երկրորդ ձայնասկաւառակը եւ DVD-ն»,- կ'ըսէ մեր զրուցակիցը:

«Արմենոյտս»ի իւրաքանչիւր անդամ մասնագիտական լուրջ ներդրում ունեցած է խումբի ծաւալած գործունէութեան մէջ: «Խումբին անդամ է Ռուբէն Յարութիւնեանը, որ լաւապէս կը տիրապետէ լրագրական սկզբունքներուն, լրագրող է: Ան խումբին ներարկեց իւրայատուկ երաժշտական ուղղութիւն, որ այդ ժամանակ նոյնիսկ համաշխարհային մեծ ճանաչում վայելող խումբեր զեռ չէին օգտագործեր: Այս հաստատումիս փաստն է «Ղարաբաղ» ստեղծագործութեան մէջ հնչող յանգաւորման ձեւը եւ տեսակը: Երբ համացանցի վրայ տեղադրուեցաւ «Ղարաբաղ» ստեղծագործութիւնը, «Sony Music» եւ համաշխարհային շատ մը այլ ձայնագրման սթիւտիոններ սկսան գործածել այդ երաժշտական արհեստագիտութիւնը, որուն հիմնադիր-



ներէն մէկը, կրնամ վստահեցնել, որ Ռուբէնն է: Այս մէկը մեզի համար իւրայատուկ փոքր յաղթանակ է:

«Սերգէյ Դայէլեան մեր խումբի միւս հմուտ ելեկտրոնային երաժշտութեան ներկայացուցիչն է, որուն հետ միասին երկար տարիներ ուսումնասիրած եւ մշակած ենք «Արմենոյտս»ի ձայնային հնչողութիւնը եւ գործիքաւորման այլ նրբութիւնները: Սայաթ Գույումճեանը, որ իմ գաղափարակիցս է, աշխատանք տարած է «Արմենոյտս»ը «հիփ հօփ»ի բնագաւառին հետ համաձուլելու առումով»:

«Լենա Ասլանեանը, դասական իր ձայնով, «Արմենոյտս»ի երկրորդ ձայնասկաւառակին մէջ կը կատարէ հոգեւոր երաժշտութիւն, ուր ընդգրկուած են դասական յորինողներու ստեղծագործութիւններ՝ Եկմալեան, Կոմիտաս...: Մատլէն Ասրեանը, Արցախի Այան, «Արմենոյտս»ի խորհրդանիշն է: Մատլէն Ասրեանի հետ համագործակցութիւնը բաւական երկար տարիներու վրայ կ'երկարի»,- կ'ըսէ Էդգար Ռոստոմեան:

«Արմենոյտս»ի իւրաքանչիւր ստեղծագործութիւն համադրութիւններու կենդանի օրկանիզմ է, անոր անդամները լրջօրէն կ'ուսումնասիրեն իւրաքանչիւր երգի համադրութիւնը՝ տարբեր երաժշտական ուղղութիւններու հետ. օրինակ՝ «Շար քո բարակ պոչին մեռնեմ» ստեղծագործութիւնը ո՞ր նրբութեան եւ ուրիշմային կառուցուածք ունեցող երգի հետ կարելի է համատեղել, որպէսզի ան չկորսնցնէ իր հնչողութեան տեսակը, արագութիւնը կամ երգելու շունչը:

Այդ առումով խումբը անցած է

լուրջ ճանապարհ եւ արդէն ունի հետեւորդներ՝ ստեղծուած են երիտասարդական նոր խումբեր, որոնք կը հետեւին նոյն ուղղութեան:

«Արմենոյտս»ին վստահուած էր Հայաստանի այս տարուան ամենամեծ նախաձեռնութիւններէն մէկուն՝ Համահայկական խաղերու բացման եւ փակման արարողութեանց գլխաւոր երաժշտութիւններու ներկայացման պարտականութիւնը:

Էդգարը յոյս ունի, որ «Արմենոյտս»ը System of a Down-ի նման առիթ կ'ունենայ միջազգային գետնի վրայ տարածելու Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը: Այս մասին անդրադառնալով Էդգար կ'ըսէ. «Մեզի համար այդ մէկը դժուար առաքելութիւն է, բայց եթէ հնարաւորութիւն ունենայինք ստեղծագործել եւ ելոյթ ունենալ արտասահմանեան երկիրներու մէջ՝ օրինակ Միացեալ Նահանգներու մէջ, շատ աւելի դիւրին պիտի ըլլար: Բայց հայր միշտ հասած է դրական արդիւնքներու, որովհետեւ պայքարելու եւ յաղթելու ներքին մեծ մղում ունեցած է, մենք նոյնպէս, ունինք այդ մղումը»:

Էդգար համոզուած է, որ եթէ «Արմենոյտս»ը հնարաւորութիւն ունենայ, կրնայ Հայաստանէն բխած այն ձայնը ըլլալ, որ համախմբեց տարբեր մտածողութեան տէր երաժիշտներ ու արուեստագէտներ, որոնք ծնած են տարբեր երկիրներու մէջ եւ կը հասկնան, որ բոլորս ունինք ընդհանրական մէկ ու միակ մեծ ժառանգութիւն՝ Հայաստան հայրենիքը:


Նայիրի Մկրտիչեան-Տաղևաճ



Սիւսի Էդր կը հովանաւորեն Ա. Եւ Ա. Պաֆֆի Եւ Անի Միսիկեան

ՀՕՄ-ի գԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Եւ իր 10 մասնաճիւղերը կը շնորհաւորեն
Նոր Տարին եւ Ա.Ծնունդը
իրենց բարերարներուն, նուիրատուներուն,
բարեկամներուն եւ անդամներուն
website www.ars-canada.ca
e-mail ars-canada@bellnet.ca



«ԱՐԱՉ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՎԱՆԳՈՒՎԸՐ

«ՌՈՒԲԻՆԱ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ԹՈՐՈՆԹՕ

«ՌՈՒԲԻՆԱ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՈՒԻՆԾԸՐ

«ԱՐԱԳԱՍՏ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՄԻՍԻՍՈԿԱ

«ՍԵՒԱՆ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՕԹԹԱՈՒՎ

«ՍՕՍԷ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՄՈՆԹՐԵԱԼ

«ԱՐԵՒ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՀԱՄԻԼԹԸՆ

«ԱՐԱՉ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՍԵՆԹ ԳԱԹՐԻՆԶ

«ՇՈՒՇԻ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ԼԱԲԱԼ

«ՄԵՂՐԻ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ԳԷՄՊՐԻԾ

Հայ Էսդրատային երգի նոր սերունդի ամենագոր ձայն ունեցող երգչուհի՝ Սոնա Ծահկելյան, կամ՝ հուր ու կրակ

Հայ էսդրատային երգարուեստի երիտասարդ երգչուհի Սոնա Ծահկելյանի իւրապատուկ, հզոր ձայնն ու կատարողական բարձր արուեստը չեն կրնար բարձր չգնահատել՝ նոյնիսկ զինք չսիրողները: Բացասական կարծիք իր տաղանդի մասին, առ այսօր չեմ լսած: Անոր հետ մէկտեղ, ան շատ անմիջական է ու համեստ, ազնիւ է ու անկեղծ, աշխատասէր է եւ ունի պատասխանատուութեան զգացում, ինքնավստահ է ու զօրաւոր անհատականութեան տէր:

Արեւելահայու եւ արեւմտահայու խառն արմատներ ունեցող Սոնայի հետ խօսելու ժամանակ, կարծես նստած ես կայծկլտացող կրակի դիմաց. ամբողջութեամբ ներուժ ու ոգի է ան, մէկ խօսքով՝ հուր ու կրակ: Ան չափազանց եռանդուն է, թէ՛ սովորական կեանքի ընթացքին, թէ՛ բեմի վրայ:

Բազմաժանր երգեր կատարող երգչուհի Սոնան 2010 թուականի Հոկտեմբեր 27-ին մասնակցած է «Նովրաթի-Արմենիա»ի «Նոր ալիք-2010» հեղինակաւոր մրցոյթին եւ գրաւած առաջին տեղը: Այդ մրցոյթի մասին Սոնա Ծահկելյանն կ'ըսէ. «Դա արդար մրցոյթ էր եւ յաղթելու համար պէտք էր լուրջ նախապատրաստուել»: Ըստ Սոնայի այդ, մրցոյթը անոր տուած է ոչ

միայն Հայաստանի, այլեւ՝ կարգ մը այլ երկիրներու մէջ աւելի մեծ ճանաչում, որովհետեւ այդ ընթացքին ան ծանօթացած է իսկական արուեստագէտներու հետ, որոնք բոլորն ալ իրեն համար նոր բացայայտումներ էին:

Այս տարուան Նոյեմբեր 13-ին Սպենդիարեանի անուան ազգային օփերայի թատրոնէն ներս տեղի ունեցաւ երգչուհիի առաջին մենահամերգը, ուր ան երկու ժամ երգեց արհեստավարժ նուագախումբի ընկերակցութեամբ: Համերգը բաժնուած էր երեք մասի: Երգչուհին նախ կատարեց իր երգացանկի երգերը՝ «Դէպի երկինք», «Քեզ կը նուիրեմ», «Ձեմ ուզում», «Աշուն, ձմեռ, գարուն», «Կորուստ, թէ գանձ», «Վոկալիզ» ու այլ երգեր:

Երկրորդ հատուածին Սոնան կատարեց օտար երգեր՝ «Tell me», «Baby Come to Me», «Say No More»: Այդ ընթացքին՝ իր պարով անոր ընկերակցեցաւ Թինա Քէյը:

Իսկ համերգի երրորդ բաժնով հնչեց Կոմիտաս ու ժողովրդական երգերու շարան: Անդրանիկ սարկաւազի հետ Սոնան կատարեց « Կը քելեր» պարային երգը:

Երգչուհիի ցանկութեամբ՝ իր առաջին մենահամերգին իր հետ «Մեր սիրոյ աշունը», «Զինն» երգերը կա-

տարեց ու նուագակցեցաւ յայտնի երգիչ Ռուբէն Հախվերտեան: «Շատ սիրում եմ էս «անպէտքին», աւելի լաւ երգչուհի է, քան ես կը պատկերացնէի, կարծում եմ՝ երկար ճանապարհ ունի գնալու: «Այլանդակը» կարողանում է ամէն ձեւ երգել, այս տեսակ տիպազոն ունի: Շատ հետաքրքիր տիպ ես: Ինչ կայ քո մէջ, ոչ ոք չի կարող վերցնել, դու ամէն ձեւ էլ երգում ես», - բեմէն ըսաւ Ռուբէն Հախվերտեան:

Սոնան համերգը եզրափակեց Վարդուհի Վարդանեանի «Հայաստան աշխարհ» երգով: «Վարդուհի Վարդանեանին շատ սիրում եմ, այս երգը «Նոր ալիք» մրցոյթին էլ ինձ յաջողութիւն բերած երգերից է», - ըսաւ Սոնան:

Հարց- Սոնա՛, անկեղծութիւնդ քեզ չի՞ վնասեր:

Պատասխան- Ձէ՛, որոշ մարդիկ ասում են, թէ ես չեմ հասկանում ինչ է անկեղծութիւնը, բայց ես հասկանում եմ, բեմում կան անկեղծ եւ կան ոչ անկեղծ՝ կեղծաւոր մարդիկ, դա երեւում է բեմից եւ առօրեայ կեանքից: Աստուած ինձ ստեղծել է այսպէս անկեղծ, ես չեմ կարող այլ կերպ լինել՝ կեղծել, ինչ որ բան յօրինել, ուղղակի չեմ կարող:

Հ- Երգելու ձեր տաղանդի արմատները ո՞ր փնտռեցիք:

Պ- Երգելու տաղանդը Աստուծոյ շնորհ է, որ ժառանգաբար անցել է մեր ընտանիքին: Ես երաժշտական ընտանիքից եմ. պապիկս լաւ երգել ու դհոլ է նուագել Թաթուլ Ալթունեանի խմբում, քեռիս, մայրս, մօրաքոյրս բոլորը երաժշտութեան հետ կապ ունեն: Երգելու իմ տաղանդը բացայայտուել է վեց տարեկանից: Այն ժամանակ երգում էի «Արեւիկ» անսամպլում, յետոյ՝ «So I'll Be»-ում՝ Նատիա Սարգսեանի մօտ: 12 տարեկանիս եղել եմ փրոֆեսիոնալ բեմում, մասնակցել եմ մրցոյթի: Աւարտել եմ երաժշտական եօթնամեայ դպրոցը, այնուհետեւ երաժշտանոցի ճազի ձայնային բաժանմունքը: 13



Միշտ էլ կը հովանաւորէ Քժ. Սարգսի Երկայնաւ

TOI & MOI CAFE®

Trois succursales pour mieux vous servir!



TM&C Laurier
244, Laurier Ouest
Montréal (Québec)
H2T 2N8

514-279-9599

TM&C Notre-Dame
2695, Notre-Dame Ouest
Montréal (Québec)
H3J 1N9

514-788-9599

TM&C Rosemère
220, boul. Labelle
Rosemère (Québec)
J7A 2H4

450-433-9599

*Si vous adorez
le café*

www.toimoicafe.com



Optique Laurier® FAIRVIEW

- 1 Eye Examinations
- 2 Vast Choice of Glasses
- 3 Contact Lenses

Dr. Shant Donabedian
Optometrist

Fairview Mall
Pointe-Claire (514) 695-2555

տարի է երգում եմ ու մասնակցում տարբեր մրցոյթներին:

Հ- Ի՞նչ կ'ըսե՛ք ձեր առաջին մե-
նահամերգի մասին:

Պ- Արդէն երկար ճանապարհ եմ
անցել, ունեմ քսան երգ, որոնք յա-
տուկ գրուել են ինձ համար: Այսինքն
պահճ հասունացաւ, որ ես մենահամերգ
ունենամ եւ ունեցայ: Համերգից առաջ
շատ էի յուզուած՝ պատասխանատու
պահ է, երբ երգում ես քո ժողովրդի, քո
հանդիսատեսի առաջ, բայց յուզմունքը
ոչ մի կերպ իմ ձայնի վրայ չի ազդում,
յուզուելը լաւ բան է՝ պատասխանա-
տուութիւն է դնում քո առջեւ: Համեր-
գի մասին շատ լաւ բաներ են խօսում,
ամէն ինչը շատ լաւ էր, աշխատել եմ
փրոֆեսիոնալ մարդկանց հետ՝ նուա-
գում էր սիմֆոնիկ նուագախումբը,
ժողովրդական գործիքների խումբը,
ընտրել էինք լուրջ երգեր, հանդիսա-
տեսը շատ ջերմ էր: Կարող է զարմա-
նաք, բայց ասեմ, որ ես այդ ամէն ինչի
համար նախապատրաստուել էի ընդա-
մէնը քսան օր:

Հ- Ունի՞ք հօր ձայն եւ կատա-
րողական բարձր արուեստ, ուրիշ ի՞նչ
պէտք է աւելի մեծ բեմեր նուանելու
համար:

Պ- Նիւթական բնականաբար, ես
չեմ ուզում ինքս ինձ գովել ու ուղակի
ասել, որ աշխատասէր եմ: Իմ աշխատա-
սիրութիւնը ցոյց եմ տալիս իմ արած
գործերով՝ «Նոր ալիք»-ի յաղթանակը,
տեսահոլովակներ, համերգ Մհերի հետ,
իմ մենահամերգը, ձայնասկաւառակս,
նոր երգեր եւ այլն: Եթէ ձգտումը կայ,
տաղանդ եւ փող՝ տեղ կը հասնես: Ես
չեմ ուզում կանգ առնել այստեղ,
դրսում էլ աշխատելու եմ, եթէ լինեն
լաւ առաջարկներ, որովհետեւ չեմ ու-
զում ինչ-որ բան անել պարզապէս
ապացուցելու համար որ անում եմ:

Հ- Ի՞նչ կարծիքի էք Եւրոտեսի-
լի ձեր մասնակցութեան մասին, եթէ
ձեզի առաջարկեն կ'ընդունի՞՞ք այս
տարի մասնակցիլ Ատրպէյճանի մէջ
կայանալիք մրցոյթին:

Պ- Ինձ շատ են ասում յաղթական
ոգին քո մէջ միշտ կայ, կարո՞ղ է այս
անգամ էլ գնաս ու յաղթես: Եթէ կան-
չեն կը գնամ, վախենալու ոչ մի բան
չկայ, դա Եւրոպան է կազմակերպում
պատասխանատուն նա է, ու պէտք է
այնքան ճիշդ անի, որ մէկը մէկին
չխանգարի: Մենք խնդիրներ ունենք



այդ երկրի հետ, բայց դա կապ չունի:
Ես կը համաձայնուեմ մեկնել Պաքու եւ
մասնակցել այնտեղ կայանալիք «Եւ-
րոտեսիլ»-ին: Ծիշդ է՝ ռիսքը շատ է,
բայց ուժեղ մարդոց համար նոյնիսկ
դժուար արգելքները յաղթահարելի են:
Եւրոտեսիլին ո՞վ է գնում, դա մի քանի
հոգի որոշում են, ու գնում են: Ասեմ
ինձ չեն ասել, որ գնամ, բայց միշտ երբ
բարդ բան է լինում, ինձ են ուղար-
կում: Ինձ շատ են առաջարկել մաս-
նակցել Հայաստանում կայացող «Եւ-
րոտեսիլ»-ի նախընտրական փուլին, իսկ
ես նախընտրական փուլ կեանքում չեմ
մասնակցի, ես ինձ թոյլ չեմ տալ ուղ-
ղակի գնամ երգեմ, երբ արդէն որոշ-
ուած է ուրիշին ուղարկել: Տեղեր կայ,
որ ես իմ արժէքները պէտք է գնահա-
տեմ: Ես վարժ չեմ մասնակցել գուտ
մասնակցութեան համար: 12 տարեկա-
նից մասնակցում եմ մրցոյթների եւ
միշտ յաղթում եմ: Այնպէս որ, Եւրո-
տեսիլին կը մասնակցեմ, եթէ հաստատ
իմանամ, որ ես պիտի գնամ: Իմ հանդի-
սատեսը խաբելու սովորութիւն չունեմ,
որ ձեւական բաներ անեմ, ինձ համար
շատ աւելի հեղինակաւոր մրցոյթ է
«Նովայա Վոլնա»-ն, որ ռուսական

մրցոյթ է, քան «Եւրոտեսիլ»ը, որ քա-
ղաքականութեան ու ցուցադրութեան
խառնուրդ է:

Կարծում եմ՝ այս տարի Հայաս-
տան կը մասնակցի «Եւրոտեսիլ»ին եւ
հանդէս կը գայ ռոք ժանրով: Հաւանա-
կան մասնակիցների անուններ չեմ ու-
զում տալ, բայց լաւ կը լինի, որ System
of a Down-ը գնայ կամ «Տորիանս»
խումբը:

Հ- Հայաստանի մէջ տաղանդը
կը գնահատուի՞:

Պ- Հայաստանում ոչ թէ լաւերին
այլ միջակներին են գնահատում:
Մրցանակաբաշխութիւններին նոյնն
են անում: Ես չեմ ասում թող ինձ
տան «տարուայ լաւագոյն երգչուհի
մրցանակ»ը, որովհետեւ ես գիտեմ, որ
երգչուհի եմ: Ինձ «արձաններ» ու
պատուոյ դրեր էլ պէտք չեն, տանը
շատ ունեմ, նոյնիսկ տանս մէջ չեն էլ
տեղաւորում: Դրանցով չի որոշում՝
դու լա՞ւ երգչուհի ես, թէ՛ ոչ: Ի վեր-
ջոյ ազգն ու հանդիսատեսն են գնա-
հատողը:

Նայիրի Մկրտիչեան-Տալլեան



ՀՕՄ-ի

Մոնթերեալի «Սուէ»

մասնաճիւղի վարչութիւնը

իր բոլոր անդամներուն անունով,

կը շնորհաւորէ Մոնթերեալահայ գաղութին

Նոր Տարին եւ Ս. Ծնունդը ու կը մաղթէ բարօր

կեանք, յաջողութիւն եւ առողջութիւն, իր համակիրներուն,

բարերարներուն եւ նուիրատուներուն, ինչպէս նաեւ շնորհակալութիւն

կը յայտնէ բոլոր անոնց, որոնք կ'աջիսատին ի նպաստ ՀՕՄ-ի բարելաման,

յառաջդիմութեան,

բարգաւաճման

եւ վերելքին:

Մկրտիչ Մկրտչեան (Մակիչ)՝ երգիչ եւ մարտիկ, որուն կեանքի ուղին ուրուագծեց հօր հրաշագործ «Տետրակը»

Հայաստանի Թալին շրջանի Սասնաչէն գիւղի մէջ ծնած, սասունցի բազմանդամ ընտանիքի զաւակներէն մէկն է Մկրտիչ Մկրտչեան, որուն անհատականութիւնը ձեւաւորուած է մեզի ծանօթ հայու իսկական կերպարի՝ հօր օրինակով:

Սասունցի մշակ Հրաչիկը, կնոջ՝ Արեգնազի հետ արեւածագին կ'արթննար, ընտանիքի սնունդի գլխաւոր մասը ապահովող անասուններու կարիքները հոգալու, ապա մայրը կը կերակրէր իր հինգ երեխաները, կ'ուղարկէր դպրոց, ու ամուսինին հետ կ'ուղղուէին դաշտ՝ մինչեւ արեւամուտ: Գիշերը, երբ հայրը յոգնած տուն կը հասնէր, կը նստէր բազմոցին ու կը բանար այն տետրակը, ուր խնամքով գրուած էին հայրենասիրական երգեր:

Հրաչիկ կը սկսէր առաջին էջէն՝ «Զեռքդ տուր ինձ երդուենք այստեղ», ապա «Զախորդ օրերը», յաջորդը «Սուրմալու» երգն էր, որ միշտ կիսատ կը մնար՝ հայրը քունի կ'անցնէր, իսկ հոգատար կինը կը վերցնէր գետին ինկած տետրակը, կը ծածկէր յոգնած ամուսինը ու զաւակներուն դառնալով կ'ըսէր, «Զըր պապ էլի գնաց Սուրմալու»... Մակիչը այս բոլորը կը պատմէր խոր ակնածանքով ու հպարտութեամբ, իսկ հօր տետրակը իր երգերու անաւարտ շարքով կ'արձեւ ուրուագծած են անոր կեանքի ուղին: Ան ափսոսանքով յայտնեց, որ այդ տետրակը կորսուած է...



Թէեւ Մկրտչեան ընտանիքին մէջ երաժշտական կրթութիւն ունեցող չէ եղած, սակայն երգն ու երգողները անպակաս եղած են անոնց հայկական օճախէն: Սասունիկի միջնակարգ դպրոցը աւարտելէն ետք՝ Մկրտիչ գօրակոչուած է խորհրդային բանակ, իսկ վերադարձին՝ ընդունուած Ռոմանոս Մելիքեանի անուան երաժշտական ուսումնարան եւ ուսումը աւարտած է 1988-ին, երբ սկիզբ առած է Ղարաբաղեան շարժումը: Նոյն տարին ան ընդունուած է Կոմիտասի անուան երաժշտանոց եւ զայն աւարտած է 1993-ին:

Անդրադառնալով իր ուսանողական կեանքին, որ կը զուգահիշի դարաբաղեան ազատագրական շարժման տարիներուն, Մակիչ կը պատմէ. «Մարդիկ նստացոյց էին անում իրենց պահանջներն էին ներկայացնում, յետոյ գալիս էին կոնսերտաթորիայի բակ, ուր մենք էինք նստացոյց անում՝ ներկայացնելով մեր պահանջները, միաժամանակ լսում էին մեր հայրենասիրական երգերը, Կոմիտաս, Եկմայեան... ի վերջոյ ձեւաւորուեց երգչախումբ՝ Ռոպերթ Մլըքեանի ղեկավարութեամբ: Երգչախումբով որոշեցինք շրջել Ղարաբաղում, այդ ծրագիրը կազմակերպեց Արմէն Պուտաղեանը՝ երաժշտանոցի դասախօսը: Գնացինք Ղարաբաղ եւ Շուշիից բացի գրեթէ

բոլոր շրջաններում համերգ տուինք՝ Գետաչէն, Մարտունաչէն, Շահումեան, Հատրութ եւ այլն: Մի օր էլ Թաթուլ Կրպէեանը՝ իմ ուսանողական տարիների ընկերը, «Մարաթուկ»ից ջղայնացած, ինձ ասաց՝ նրանք պիտի գային երգէին Ղարաբաղում, հիմա ասում են չենք կարող: Ասացի ես փորձ ունեմ, ես կը գամ կ'երգեմ Գետաչէնում, գնացի ու մնացի, եւ այնտեղից սկսեց իմ զինուորական կեանքը»:

Ազատամարտիկ երգիչի պատերազմի յուշերը բազմաթիւ են, սակայն ան ազատագրական շարժման չորս տարիներու իր մասնակցութեան մասին միայն մէկ նախադասութիւն կ'ըսէ. «Համարում եմ, որ ես միայն չորս տարի եմ ապրել, եւ երանի եմ տալիս»: Միայն այսքան կը պատմէ ազատամարտիկ Մակիչը, որուն մարտական ընկեր Հրաչ Մուրատեանը, կ'ըսէ. «Մակիչը ազնուազոյն տղայ է ու ընկեր, որ մասնակցել է դարաբաղեան պատերազմի համարեա բոլոր կողմերին: Նա 94 թուին նոյնիսկ ոտից վիրաւորուել էր Մարտակերտում: Մակիչը ոչ միայն իր երգերով, այլեւ բնակչութեամբ ոգեւորում էր իր մարտական ընկերներին, դրա համար էլ սահմանային դիրքեր գնացողները

միշտ ուզում էին, որ Մակիչը իրենց հետ լինի»: Հրաչի հետ գրուցելով պարզեցի, որ Մակիչը ոչ միայն երգիչ ու ազատամարտիկ է, այլեւ երբեմն նաեւ՝ բարերար: Հրաչի խօսքով՝ Պոռոչեան գիւղի (որուն գիւղապետն է ան) պանթէոնի հիւմքը դրուած է Մակիչի Գանատայի մէջ կայացած համերգէն եկած հասոյթի միջոցով: «Այդպիսին է նա, բոլորին փորձում է օգնել ինչով կարող է»,- կ'ըսէ Հրաչը:

Չմոռնանք Մակիչի երգիչ ըլլալու հանգամանքը. անկարելի է լսել անոր կատարմամբ հնչող հայրենասիրական կամ այլ երգ եւ չոգեչնչուիլ, քիչ մը աւելի չհայանալ: Փոքր մարմնէն հնչող անոր հզօր ձայնը, ճիշդ երգեցողութիւնը, ապրումն ու ոգին իրարու հետ միաձուլուելով ունկնդիրը կը տանին այլ աշխարհ՝ մեր պայանական հողի ընդերքը, պատերազմի դաշտ, Գարահիսար՝ վիրաւոր մարտիկի կողքին... անոր երգերը կը կերտեն մեր պատկերացուցած հայու իսկական նկարագիրը:

Եթէ այլ երգիչներու կատարումները խանդավառութիւն կը ստեղծեն ու կը պարեցնեն, Մակիչի կատարումները ուժ կու տան, կ'ոգեւորեն, կը յուզեն ու կը հայացնեն:

Երգը Մակիչի կարծիքով ինքնանպատակ չէ, ան միջոց է ապրիլ կարենալու համար: «Աստուծոյ կողմից տրուած է քեզ մի բան, որ շատ շատերին չի տրուել, եւ իբրեւ հայ մարդ, դու պիտի կարողանաս քեզ տրուած Աստուծոյ շնորհ օգտա-

Միշտ էր կը հովանաւորեն ՔԺ. եւ Միկ. Մկրտիչ եւ Մալքի Մարաթեանը



**Alarme
Trans-Canada**

SATISFACTION GARANTIE



- réseaux téléphonique et informatique
- systèmes de surveillance par caméras
- feu - vol - gicleurs
- accès par carte



• membre  **CANASA**

• nous opérons notre propre central homologué ULC grade "AAA"



RBQ 1519-8252-12
mikaelian@alarmeatc.com

(514) 274-9446
(888) 274-9446



Հայկական Հաստատություն

